


Ռ.Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ
ՆՈՐ ՍՓՅՈՒՌԸ

ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

1006974



ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ռ.Ս.

ՄԻԳՐԱՅԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ
ՆՈՐ ՍՓՅՈՒՌՔԸ

ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի և սփյուռքի
էթնոսոցիոլոգիական հետազոտություններ

5



ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2013

799505

МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ РА
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

КАРАПЕТЯН Р.С.

МИГРАЦИЯ И НОВАЯ АРМЯНСКАЯ ДИАСПОРА

ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ

Этносоциологические исследования
в Армении и диаспоре

5



**ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
2013**

**MINISTRY OF DIASPORA OF RA
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
INSTITUTE ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

KARAPETYAN R. S.

**MIGRATION AND ARMENIAN NEW
DIASPORA**

ETHNO-SOCIOLOGICAL SURVEY

**Ethno-sociological studies
of Armenia and the diaspora**

5

**YEREVAN
“GITUTHUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2013**

ՀՏԴ 314.7
ԳՄԴ 60.7
Կ 294

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների թեկնածու Ռ.Ս.Օհանջանյան
Գրախոսներ՝
տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ա.Գ.Ավետիսյան,
պատմական գիտությունների թեկնածու Յ.Գ.Սարգսյան

Կարապետյան Ռ.Ս.
Կ 294 Միգրացիան և հայկական նոր սփյուռքը. Եր.: «Գիտություն»
հրատ. 2013.– 220 էջ.

Ներկայացված մենագրությունը նվիրված է խիստ կենսահույզ և Հայաստանում հաճախ քաղաքական հնչեղություն ստացող խնդրին՝ բնակչության միգրացիային և դրա արդյունքում ձևավորված որակապես նոր հայկական սփյուռքում էթնիկ գոյատևմանը: Այդ խնդրի պարզաբանման համար հեղինակը ներգրավել է ՀՀ 5 քաղաքներում և 25 գյուղերում անցկացված տևական էթնոսոցիոլոգիական հետազոտությունների նյութերը, որոնք թույլ տվեցին նորովի գնահատել և օգտագործել նաև այլ աղբյուրների անալիտիկ ներուժը: Դա թույլ տվեց հետևել ՀՀ բնակչության տեղաշարժերի դինամիկան ըստ կոնկրետ տեսակների – կարճաժամկետ, սեզոնային և անվերադարձ, ինչը թույլ տվեց արտացոլել հայ նոր սփյուռքի ձևավորման բնութագիրը և բացահայտել Հայաստանում և սփյուռքում բնակվող էթնոսի երկու հատվածի փոխկապերի ինտենսիվությունը ու որակական բնույթը: Նախատեսված է քաղաքագետների, սոցիոլոգների, ազգագրագետների, պատմաբանների ինչպես նաև ուսանողների և ընթերցողների լայն շրջանակներին:

ՀՏԴ 314.7
ԳՄԴ 60.7

ISBN 978-5-8080-1070-3

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	9
Ներածություն.	
Միգրացիայի և հայկական նոր սփյուռքի ձևավորման էթնոսոցիոլոգիական ու- սումնասիրության հարցեր.....	12
Գլուխ I.	
Հայաստանի բնակչության տեղաշարժե- րը դինամիկական և հայկական նոր սփյուռքի ձևավորումը	33
Գլուխ II.	
Հայկական նոր սփյուռքի կազմը	74
Գլուխ III	
Նոր էմիգրանտների և հայրենիքի փոխ- առնչությունների էթնոսոցիալական բաղադրիչը.....	104
Վերջաբան.....	142
Заключение	150
Conclusion.....	156
Օգտագործված գրականության ցանկ	161
Հավելված	
Միգրացիա և նոր հայկական սփյուռք՝ էթ- նոսոցիոլոգիական հետազոտությունների նյութեր.....	169

СОДЕРЖАНИЕ

Предисловие	9
Введение	
К вопросу этносоциологического изучения играния и формирования новой диаспоры	12
Глава I	
Динамика движения населения Армении и сложение новой диаспоры	33
Глава II	
Состав новой армянской диаспоры	74
Глава III.	
Этносоциальная составляющая взаимосвязей новых эмигрантов с родиной	104
Շերտարան	142
Заключение	150
Conclusion	156
Список использованной литературы.....	161
Приложение Материалы этносоциологических исследований “Миграция и новая армянская диаспора”	169

CONTEXT

Overview.....	9
Introduction.	
The issue of migration and the formation of new armenian Diaspora in ethno-sociological study.....	12
Chapter I	
The dynamic shifts of Armenia's population and the formation of new Armenian diaspora	33
Chapter II	
The composition of the new Armenian diaspora.....	74
Chapter III	
The interconnection of ethno-social component of new immigrants and homeland	104
Վերջաբան.....	142
Заключение	150
Conclusion	156
Used literature and resources	161
References	
Migration and new Armenian diaspora: The materials of ethno-sociological research.....	169

ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկայացված մենագրությունը նվիրված է խիստ կենսահույզ և Հայաստանում հաճախ քաղաքական հնչեղություն ստացող խնդրին՝ բնակչության միգրացիային և դրա արդյունքում ձևավորված որակապես հայկական նոր սփյուռքում էթնիկ գոյատևմանը:

Այս խնդրի հասարակական նշանակությունը պայմանավորված է առաջին հերթին այդ գործընթացների արդյունքում հանրապետությունում ձևավորված անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակով՝ ծնելիության նվազմամբ, բնակչության արտահոսքով, որի հետևանքով նվազում է բնակչության քանակը: Ընդ որում, գտնվելով ժողովրդագրական մեծ ներուժ ունեցող երկրների շրջապատում՝ Հայաստանը հայտնվում է բարձր ռիսկայնության գոտում, դրանով իսկ գրկվելով քաղաքական և տնտեսական հեռանկարներից: Դրանից բացի, Հայաստանի Հանրապետությունից բնակչության արտահոսքի հետևանքով էթնոսն ալելի է մասնատվում, ընդլայնվում է նրա բնակչության աշխարհագրական տարածքը և արդեն պատմականորեն ձևավորված հայկական սփյուռքի համայնքներում շերտավորվում են վերաբնակիչների նոր խմբեր:

Բնական է, որ այդ գործընթացների արդյունքում ելքի և մուտքի վայրերում առաջանում են որոշակի բարդություններ: Մասնավորապես, սեփական հանրապետությունից հայերի ակտիվ արտահոսքի հետևանքով ձևավորվում են հայկական բազմաշերտ վերաբնակեցման օջախներ, որը հաճախ հանգեցնում է այդ օջախներում նրանց կյանքի ապակազմակերպմանը

և էթնիկ վերարտադրության պայմանների վատթարացմանը: Կարևոր հետևանքների թվում հարկ է նշել նաև արտագաղթի ժամանակ առաջացող տնտեսական ծախսերը, վերաբնակեցման վայրում միգրանտների և նրանց նոր շրջապատի հետ սոցիալական լարումները, օրենսդրական և մշակութային հակասությունները, որոնք հաճախ կարող են տեղափոխվել էթնիկական հարթություն:

Վիճակագրական նյութերի ամփոփումը, մամուլում ներկայացված գնահատականները, առանձին հետազոտությունների թվային տվյալները վկայում են, որ Ռուսաստանում, եվրոպական որոշ երկրներում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում և Կանադայում տեղի է ունենում հայկական նոր սփյուռքի ձևավորման գործընթաց, որը վերջին քսանամյակում հանրապետությունից բնակչության ինտենսիվ արտահոսքի պատճառով ավելի է ակտիվանում:

Այդ առումով, բազմաթիվ հարցեր են ծառանում, որոնց պատասխանները կարող են լույս սփռել արդի ժամանակաշրջանում հայ էթնոսում ընթացող գործընթացների բնույթի վրա և հասկանալ դրանց զարգացման հեռանկարները: Այդ նպատակով սույն մենագրության հեղինակը օգտագործել է տեղեկատվական զանազան աղբյուրներ՝ վիճակագրություն, մասնագիտական հետազոտություններ, որոնք համակարգվել են 1980, 1993, 2005 և 2007 թթ. Հայաստանի 5 քաղաքներում և 25 գյուղական բնակավայրերում իրականացված մասշտաբային էթնոսոցիոլոգիական տնական (լոնգիտյուդ) հետազոտությունների ընթացքում: Այդ նյութերի հիման վրա դիտարկվում են վերջին 30 տարվա ժամանակահատվածում Հայաստանում ընթացող միգ-

րացիոն գործընթացների դինամիկան: Վերջինիս հետազոտության նպատակով հարկ է համարվել օգտագործել հանրապետությունից դուրս բնակվող հարազատների և բարեկամների կողմից ներկայացված տեղեկատվությունը, որն ստացվել է Հայաստանի գյուղական և քաղաքային բնակչության ավելի քան 6000 (1980թ.), 2000 (1993թ.), 4000 (2005 և 2007թ.) հարցվողների շրջանում իրականացված ստանդարտացված հարցազրույցների ընթացքում: Այդ տեղեկատվության հիման վրա փորձ է արվում վերլուծել տարբեր երկրներում բնակվող հայ վերաբնակիչների կազմը և որոշել հայրենիքի հետ նրանց կապերի հեռանկարները:

Հեղինակը կարծում է, որ նշված հիմնահարցի նկատմամբ այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս ստանալու հավաստի և բովանդակալից տվյալներ ոչ միայն հանրապետության իրավիճակի, այլև վերջին ժամանակաշրջանում ձևավորված հայկական նոր սփյուռքի վերաբերյալ:

Աշխատությունը պատրաստվել է «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները, ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրի շրջանակներում:

Մենագրության նախապատրաստման և հրատարակման գործում մեծ աջակցություն են ցուցաբերել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի հետազոտությունների բաժնի գիտաշխատողներ, սոցիոլոգիայի մագիստրոսներ՝ Ս. Ներսիսյանը և Լ. Տանաջյանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միգրացիայի և հայկական նոր սփյուռքի ձևավորման
Էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության հարցեր

Վերջին հարյուրամյակում մեծ թափ հավաքող բնակչության տարածքային տեղաշարժերը ողջ աշխարհում ընթացող ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, քաղաքական և էթնիկ գործընթացների կարևորագույն պատճառն են(1): Միգրացիայի ներպետական, տարածաշրջանային, միջմայրցամաքային շրջանառության մեջ են ներգրավվում մարդկանց տարբեր սոցիալական, ռասայական, էթնիկական և կրոնադավանաբանական ավելի մեծ թվով զանգվածներ(2): Դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ միգրացիայի ընթացքում առաջացող տնտեսական խնդիրները, սոցիալական լարվածությունը, իրավական և մշակութային բարդությունները հանգեցնում են զանազան կարգի ներպետական և միջպետական բախումների(3), որոնք հաճախ ձեռք են բերում էթնիկ կամ դավանաբանական երանգավորում, իսկ երբեմն՝ և՛ մեկը, և՛ մյուսը: Դա հիմնականում պայմանավորվում է սոցիալական և տնտեսական խնդիրների վրա հիմնված տեղաբնիկ և եկվոր բնակչության փոխհարաբերություններով, որոնք նրանց միջև ծագում են էթնոսոցիալական տարբերությունների պատճառով:

Այս խնդիրների հրատապությունը ստիպում է տարբեր երկրների հասարակական-քաղաքական, գիտական շրջանակներին, հեղինակավոր միջազգային կազմակերպություններին մեծ ուշադրություն ցուցաբերել բնակչության տարածքային տեղաշարժերի էթնիկական ասպեկտներին(4) և այդ գործընթաց-

ների արդյունքում ձևավորվող էթնիկ սփյուռքին: Այսպիսով, տարբեր ազգության մարդկանց իրական և սպասվող տեղաշարժերը, այդ բնակչությանն «ընդունող» և «մատակարարող» երկրների տնտեսական, քաղաքական, սոցիալական և էթնոմշակութային գործընթացների վրա նրանց ազդեցությունը, նոր սփյուռքի ձևավորումը պայմանավորում է «արդի կյանքի այդ բարդ երևույթի» հետ կապված բազմաթիվ փոխկապակցված խնդիրներ(5): Այդ իսկ պատճառով, պահանջվում է միգրացիայի և սփյուռքի ձևավորման թեմատիկայի ուսումնասիրման նպատակով մշակել բազմակողմանի մոտեցումներ:

Բազմաթիվ հետազոտողներ համակարծիք են այն հարցում, որ այդ խնդրի նկատմամբ առաջին և առավել ակնհայտ մոտեցումը միգրացիոն գործընթացների մասշտաբների և ինտենսիվության որոշումն է: Այս դեպքում մենք առնչվում ենք դրանց քանակական հատկանիշների հետ, որոնց վերլուծությունը հնարավորություն է տալիս հասնելու գիտելիքների համակարգման որոշակի մակարդակի: Դրա միջոցով իրականացվում է բնակչության տեղաշարժերի մոդելավորումը, միգրացիոն շրջանառության մեջ ներգրավված երկրների և տարածաշրջանների բնակեցման կառուցվածքի փոփոխման ու տնտեսական զարգացման միտումների վերլուծությունը:

Միգրացիոն հիմնախնդիրների նկատմամբ նման մոտեցումը հիմնականում կիրառվում է ժողովրդագետների, տնտեսագետների, աշխարհագրագետների հետազոտություններում, որոնք իրենց մշակումների համար լայնորեն օգտագործում են վիճակագրական տվյալների մաթեմատիկական վերլուծության մեթոդները: Սակայն, հետազոտական ավելի բովանդակալից որո-

նումների համար այս մեթոդի հնարավորությունները որոշակիորեն սահմանափակ են: Տեսադաշտից դուրս են մնում այդ երևույթի բազմակողմանի ուսումնասիրությանն անհրաժեշտ վերլուծական մի շարք բաղադրիչներ: Դրանց թվում հարկ է նշել վերաբնակիչների աղապատացման և ինտեգրման օրինաչափությունների դիտարկումը, «ընդունող» հասարակություններում սոցիալական և մշակութային փոփոխությունների գրանցումը, բնակչության առանձին խմբերի մեկ կարգավիճակից մեկ այլին անցնելու փուլերի նկարագրությունը և այդ գործընթացների փոխադարձ ձևափոխումները: Դա պայմանավորված է նրանով, որ միգրացիայի խնդիրների նկատմամբ սկզբնական մոտեցմամբ քննարկվում են ոչ միայն դրանց տարածքային (աշխարհագրական), տնտեսական և ժողովրդագրական կողմերը, այլև բնակչության տեղաշարժերի արդյունքում առաջացող իրավական, քաղաքական, սոցիալական և էթնիկական խնդիրները, որը պահանջում է հետազոտական հատուկ տեսանկյուն(6): Վերոշարադրյալի համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում արդի էթնիկ սփյուռքի ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը որպես միգրացիոն գործընթացների ուղղակի հետևանք:

Մեկ վայրից մեկ այլ վայր տեղափոխվելը ըստ էության սոցիալական գործընթաց է, այն առումով, որ նոր բնակության վայրում վերաբնակիչը ներգրավվում է այնպիսի սոցիալական փոխազդեցությունների մեջ, որի ընթացքում աշխատանքային գործունեության բնույթում և ներդրման ոլորտում, սոցիալական դիրքերում, հոգեկան կերպարում ու վերաբնակիչների բազմաթիվ այլ հատկանիշներում տեղի են ունենում լուրջ փո-

փոփոխություններ: Այդ փոփոխությունները պայմանավորված են և՛ ընդունող միջավայրով, և՛ շարժունակ բնակչության սոցիալ-ժողովրդագրական հատկանիշներով: Նշված հատկանիշները լրացվում են նաև վերաբնակիչների մշակութային բազմազանությամբ (եթնիկ և ենթաէթնիկ, տարածաշրջանային ու բնակավայրային), որը թելադրում է միգրացիան դիտարկել որպես էթնոմշակութային գործընթաց:

Միգրացիոն խնդիրների սոցիալական և մշակութային բաղադրիչները, որոնք ընդհանուր առմամբ էթնոսոցիալական են, սերտորեն կապված են բնակչության շարժի երկու բևեռների՝ «ելքի» և «մուտքի» միջավայրերի սոցիալ-մշակութային հատկանիշների ծագումնաբանությամբ ու դրանց միջև հետագա փոխադարձ կապերի օրինաչափություններով: Իսկ վերջիններիս ձևավորումը հիմնականում պայմանավորվում է «մատակարարող» և «ընդունող» միջավայրերի պատմական առանձնահատկությամբ, սոցիալական կառուցվածքի, սոցիալական հարաբերությունների ցանցի, կենցաղի, մշակույթի և այլ հատկանիշների յուրահատկություններով: Այդ իսկ պատճառով ժամանակակից գործընթացների միգրացիոն տեսանկյունը կարող է ընդգրկել հասարակագիտության բավականին լայն շրջանակներ: Ուստի, այս բարդ երևույթների ուսումնասիրման համար անհրաժեշտ է միջառարկայական հետազոտությունների մեթոդաբանական սկզբունքների ընդգրկում, որը հնարավորություն կտա ապահովելու այդ երկու փոխլրացնող մոտեցումների համալիր կիրառումը:


Դրանցից առաջինը միգրացիոն գործընթացի նկարագրությունն ու վերլուծությունն է ըստ մասշտաբների արձանագր-

ման (տեղաշարժերի ինտենսիվությունը և հոսքերի ծավալները), ուղղությունների, շարժը պայմանավորող գործոնների, արտագաղթող խմբերի աղբյուրների և կառուցվածքի: Երկրորդ մոտեցումը ենթադրում է այդ գործընթացի հետևանքների ուսումնասիրությունը, որտեղ վերլուծվում են «ելքում» և «մուտքում» միգրացիայի հետևանքով տեղի ունեցող տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային փոփոխությունները «մատակարարող» և «ընդունող» միջավայրերում:

Ակնհայտ է, որ այս երևույթի համալիր ուսումնասիրման փորձ կատարող յուրաքանչյուր հետազոտողի առջև ծառանում է այդ երկու մոտեցումների համադրման անհրաժեշտությունը: Այդ կարգի ամբողջական հատկությամբ են օժտված էթնոսոցիոլոգիական հետազոտությունները(7), որտեղ էթնիկական բաղադրիչը գիտական որոնումների կազմակերպման միջուկն է: Այս դեպքում, ուշադրությունը կենտրոնանում է բնակչության ներհոսքի և արտահոսքի հետևանքով տեղի ունեցող միգրանտների ադապտացիայի սոցիալ-ժողովրդագրական և մշակութային երևույթների էթնիկական կողմերի վրա(8), որը հնարավորություն է տալիս քննարկելու միգրացիայի և դրա կոնկրետ դրսևորումների հետ կապված հարցերի մի ծավալուն համալիր(9): Միգրացիայի աղբյուրը, շարժուն բնակչության կազմը (սոցիալական, ժողովրդագրական, էթնիկական), տեղաշարժի ուղղությունները, վերաբնակիչների ադապտացիան և միջավայրի հետ փոխադարձ ինտեգրումը այդ հարցերի ոչ ամբողջական ցանկն է, որը պահանջում է այնպիսի հետազոտական մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան ընդգրկելու «ել-

քի» և «մուտքի» կոնկրետ վայրերի վերաբերյալ տեղեկատվական աղբյուրները:

Վիճակագրական տվյալների և մասնագիտական հետազոտությունների հիման վրա սոցիոլոգիական մեթոդների կիրառմամբ էթնոսոցիոլոգիայում կոնկրետ փորձաքարական հետազոտությունների մեծ փորձ է ձեռք բերվել(10): Այդ կարգի հետազոտությունների էթնիկական տեսանկյունը բազմաթիվ առումներով նպաստել է մի կողմից՝ սոցիոլոգիայում, ազգաբանության, հոգեբանության մեջ մշակված սկզբունքների մերձեցմանը և մեթոդների համալիր օգտագործմանը, մյուս կողմից՝ միգրացիոն հիմնախնդիրների նոր շրջանակների բացահայտմանը: Ընդ որում, նախկին Խորհրդային Միության (այսուհետ՝ ՆՄ) բազմաթիվ տարածաշրջաններում, այդ թվում նաև Հայաստանում իրականացված բնակչության միգրացիայի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններում նկատի է առնվել նաև այն հանգամանքը, որ նոր բնակավայրում վերաբնակչի հետագա կյանքը ադապտացիոն գործընթաց է, որի ժամանակ փոփոխվում են և՛ վերաբնակիչը, և՛ նրա շրջապատը(11): Հատուկ ուշադրություն է դարձվել նաև այն հանգամանքին, որ այլէթնիկ տարրի ներհոսքի և միջավայրի բազմաէթնիկացման դեպքում, միգրացիայի արդյունքում տեղի ունեցող սոցիալ-ժողովրդագրական գործընթացների էթնիկական համատեքստը որոշվում է միջէթնիկ փոխազդեցության արդիականացմամբ(12): Այդ իսկ պատճառով, միգրանտների էթնիկ միատարր զանգվածի օրինակի հիման վրա միգրացիոն գործընթացների մեխանիզմների և զարգացման փուլերի բազմակողմանի իմաստավորումը հետազոտական մեծ հեռանկարներ է խոստանում: Հենց այս տե-



սանկյունով է պայմանավորված էթնիկ խմբերի միգրացիայի և սփյուռքի ձևավորման հիմնախնդիրների նկատմամբ գիտական հետաքրքրությունը:

Առանձին էթնիկ հանրությունների ուսումնասիրությունը պահանջում է, ինչպես հիմնախնդրի, այնպես էլ՝ հետազոտության մեթոդական սկզբունքների նկատմամբ համալիր մոտեցում(13): Միգրացիոն թեմատիկան ավանդաբար ընդգրկվել է գիտական առանձին ոլորտներում(14), սակայն հայ էթնիկության պահպանման և զարգացման խնդիրների մշակման մոտեցում չի դարձել(15): Այս հարցերին առնչվող մեծածավալ գրականության մեջ բավականին սակավաթիվ են սփյուռքում հայերի միգրացիոն գործընթացների համեմատական ուսումնասիրությունների փորձերը(16): Դա պայմանավորված է սեփական և այլէթնիկ միջավայրում հայերի էթնոսոցիալական զարգացման խնդրի հիմնավորման տեսական մոտեցումներում գոյություն ունեցող լուրջ վակուումով: Այդ իսկ պատճառով, գիտական այլ բնագավառների՝ տնտեսական աշխարհագրության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի, ազգաբանության և գիտական որոնումների այլ ուղղությունների նվաճումներն այդպես էլ պահանջարկ չգտան: Այդ բացը հարկ է լրացնել նոր մոտեցումների և վերլուծական խնդիրների հստակեցման միջոցով, որը հնարավորություն կտա առաջին հերթին ճշգրիտ գնահատել «էքստրեմալ» պայմաններում՝ սփյուռքում, հայ էթնիկության իրավիճակը և զարգացման հեռանկարները էթնոսոցիալական վերարտադրության տեսանկյունով:

Վերը նշվածի համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում նաև այն հանգամանքը, որ հայ ժողովր-

դի պատմական զարգացման ընթացքում միգրացիան միշտ էլ կարևոր դեր է կատարել, իսկ նորագույն փուլում այն բացառիկ է(17): Վիճակագրությունը ցույց է տալիս, որ սեփական էթնիկ տարածքից և հոծ բնակեցված այլ տարածաշրջաններից էթնոսի խոշոր զանգվածների տեղաշարժերի առավել մեծ թափը, այլ-էթնիկ ուրբանիզացված միջավայրում հայերի զգալի մասի ցրված բնակեցման հետագա ծավալումը տեղի է ունեցել XIX-XXդդ. սկզբին և XXդ. վերջին ու XXIդ. սկզբին: Հենց այս հանգամանքն էլ պահանջում է ուսումնասիրել միգրացիայի դերը նորագույն հայ սփյուռքի ձևավորման գործում: Նոր սփյուռքի ձևավորման ուսումնասիրությունը կարող է ուսանելի լինել նաև այլազգի միջավայրում հայ էթնոսի զարգացման պատմության ուսումնասիրման մեթոդաբանական հիմքերի և տեխնիկական միջոցների մշակման համար:

Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հայերի միգրացիոն շարժի նոր շրջապտույտի զարգացման օրինաչափությունները, որոնք են՝ բնակչության կոնկրետ միգրացիան և հայկական նոր սփյուռքի ձևավորումը: Այն ընդգրկում է էթնոսի միգրացիոն գործընթացների զարգացման դինամիկայի ուսումնասիրությունը XX դարի վերջերից մինչև XXI դարի սկիզբը՝ նոր սփյուռքի ձևավորման գործընթացը և նրա զարգացման հետևանքները: Այսպիսի հետազոտության նպատակահարմարությունն ակնհայտ է: Հայկական փորձը կարող է բավականին ուսանելի և օգտակար լինել նմանատիպ գործընթացների օրինաչափությունների ճանաչման խնդրում, որոնք, ինչպես ցույց են տալիս համաշխարհային միտումները, ունեն լուրջ հեռանկարներ(18):

Սույն հետազոտության համար ձևակերպված հիմնական վարկածը հետևյալն է. արդի հայկական սփյուռքի ձևավորմանը մասնակցել են էթնոսի բավականին առանձնահատուկ խմբեր, որոնք բնորոշվում են բարդ սոցիալական, ենթամշակութային կազմով և հետխորհրդային շրջանին բնորոշ հատկանիշներով: Վերջիններիս բովանդակությունը որոշվում է, մի կողմից՝ Հայաստանում և ՆՄ այլ երկրներում քաղաքային կյանքի զարգացման սոցիալական գործոններով, մյուս կողմից՝ այդ վայրերում հայերի զարգացման առանձնահատկություններով:

XX դարի վերջերին և XXI դարում տեղի ունեցած իրադարձություններն արմատապես փոխեցին երկրի իրավիճակը: Խորհրդային Միության փլուզումից հետո օրհասական (երկրաշարժ, ռազմական գործողություններ, փախստականներ, շրջափակում), տնտեսական (ճգնաժամ, ռեֆորմներ), սոցիալական (սեփականության վերաբաշխում, աղքատություն, սոցիալական առաջընթացի ասպարեզի սահմանափակում) բնույթի գործոնները XXI դարի սկզբին նպաստեցին ՀՀ-ից բնակչության ինտենսիվ արտահոսքին: Սակայն, հայ էթնոսի տարբեր հատվածների շարժի ուղղությունները պայմանավորված էին, ինչպես այս կամ այն երկրի և տարածաշրջանի տնտեսական ու սոցիալ-քաղաքական փոփոխություններով, այնպես էլ՝ նոր վայրում տեղավորվելու հնարավորություններով: Կարելի է ենթադրել, որ միգրացիայի արդյունքում ՀՀ-ում և նրա սահմաններից դուրս տեղի է ունեցել ազգակցական խմբերի տարածական ցրում, որի հետևանքով «հայկական» էթնոցրիվ հսկայական տարածքում ձևավորվում և գործում են ցանցային հարաբերությունները, որի ներսում առաջանում են ապագա միգրացիոն

գործընթացների խթաններ: Այս դեպքում, էթնոսոցիալական տեսանկյունը հնարավորություն է տալիս դիտարկելու ցանցի ներսում ընթացող միգրացիոն գործընթացների ինքնուրույնության աստիճանի մեծացումը, որը բացատրվում է հիմնականում մասնակիցների կողմից ընդունվող և տարածվող արժեքների համակարգով:

Կոնկրետ բնակավայրում՝ հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս, ձևավորված էթնոսոցիալական ցանցի բնույթը, ներցանցային կապերի տարածքային շրջանակները և ինտենսիվությունը, միգրացիոն սպասումների և նպատակների հետ ամբողջություն կազմելով, կարող է դառնալ Հայաստանում և սփյուռքում միգրացիոն իրավիճակի գնահատման հիմք: Այն կօգնի կանխատեսելու ինչպես հոծ բնակեցված գոտիներից էթնիկ խմբի հետագա «արտամղումը», այնպես էլ՝ նրանց ռե-էմիգրացիայի հնարավորությունները:

Առաջադրված վարկածային ենթադրությունների հաստատումը կամ ժխտումը հնարավոր է ստանալ փորձարարական հատուկ հետազոտությունների հիման վրա: Դրանց անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով: Վիճակագրական, արխիվային, առանձին հետազոտությունների նյութերը հնարավորություն են տալիս կողմնորոշվելու Հայաստանում բնակչության տեղաշարժի օրինաչափություններում: Սակայն, միգրացիայի բարդ կապերն ու նոր սփյուռքի ձևավորման հարցերն ավելի համակարգված վերաիմաստավորելու և իրական բովանդակությամբ լրացնելու համար այդ նյութերի վերլուծական ռեսուրսները փոքր ինչ սահմանափակ են: Դա պայմանավորված է նրանով, որ դրանցում առկա տեղե-

կատվությունը բովանդակային լինելով հանդերձ, բավականին խայտաբղետ է և լի բազմաթիվ սպիտակ կետերով: Այդ իսկ պատճառով, յուրաքանչյուր հետազոտող ձգտում է դուրս գալ ձևավորված ավանդույթից և սեփական որոնումներն առավել լիարժեք դարձնել:

Պատմական որոնումներին (որոշակիորեն յուրաքանչյուր էմպիրիկ հետազոտություն իր ավարտից հետո արդեն հետահայացք է դեպի անցյալը) էապես կարող է նպաստել բազմաբնույթ աղբյուրների ընդգրկումը, որոնց թվում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն աղբյուրները, որոնք ազգաբանության մեջ կիրառվող մեթոդների օգտագործմամբ անցյալի մասին հիշողությունները վերապրած ավագ սերնդի ներկայացուցիչների հարցումների միջոցով հնարավորություն են տալիս վերականգնելու ինստիտուտները, կենցաղի և մշակույթի տարրերը: Այդ նպատակով նույնիսկ կազմվել է հարցերի առանձին խմբերից բաղկացած հարցաբան, որտեղ յուրաքանչյուր հետազոտող կարող է կատարել իր լրացումները(19):

Ակնհայտ է դառնում, որ տեղեկատվության կենդանի կրողներին դիմելը պատմական առանձին երևույթների և գործընթացների վերականգնման բավականին օգտակար մեթոդ է: Իրադարձություններին ավելի մեծ թվով մասնակիցների վկայությունների ընդգրկման դեպքում մեծանում է իրականությունն ավելի օբյեկտիվ պատկերելու հավանականությունը: Իսկ բնակչության վիճակագրական ներկայացուցչական համակազմի հետազոտության դեպքում տեղեկատվության հավաքման այս մեթոդը օգնում է վերականգնելու ոչ միայն անցյալի

առանձին կողմերը, այլև վերարտադրելու գործընթացների պատկերը բավականին լայն ընդգրկմամբ: Այս հանգամանքի շնորհիվ սոցիոլոգիական հետազոտություններն առանձնահատուկ նշանակություն են ստանում, հնարավորություն ընձեռելով տրված ծրագրով և ընտրված մեթոդով բովանդակալից և ներկայացուցչական տեղեկատվություն ստանալու մեր երկրի ոչ վաղ անցյալի պատմության վերաբերյալ:

Այսպիսի նպատակ է հետապնդվել Հայաստանում կազմակերպված էթնոսոցիոլոգիական հետազոտությունները, որոնց ընթացքում բնակչության մեծ զանգվածների հետ ստանդարտացված հարցազրույցի մեթոդով հավաքվել և համակարգվել են տարբեր սերունդների ներկայացուցիչների պատմություններն ու հիշողություններն իրենց կյանքի ուղու մասին(20): Այդ սյուժեների գրանցումը, որոնցում առկա է ոչ վաղ անցյալում կատարված իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն, կարող են տարբեր բնույթի աղբյուրներում՝ վիճակագրական, արխիվային նյութերում, գրական երկերում, զանազան հուշարձաններում, ականատեսների վկայություններում և այլ «տեքստերում» պարունակված տեղեկատվության համակարգման համար հիմք դառնալ: Դա հնարավորություն կտա էապես խորացնելու կյանքի իրողությունների մասին մեր պատկերացումները և ընդլայնելու հետազոտվող երևույթների շրջանակները, դրանով հանդերձ, հասնելու հետազոտական որոնումների համալիր մոտեցմանը: Այս նկատառումները դրվել են վերջին երեսուն տարվա ընթացքում իրականացված երեք լայնամասշտաբ համադրվող էթնոսոցիոլոգիական հետազոտությունների ծրագրի մշակման հիմքում:

Այդ հետազոտությունները հնարավորություն են տվել ստանալու այնպիսի նոր նյութեր, որոնք իրենց հավաստիությամբ և բովանդակությամբ էապես առանձնանում են գոյություն ունեցող այլ կարգի նյութերից: Դրանք մեծ չափով լրացնում են վիճակագրական, արխիվային, ինչպես նաև այլ աղբյուրներից քաղված տվյալները:

Հարցումների միջոցով ստացված նյութերը տեղեկատվական բավականին խոր բովանդակություն են պարունակում(21): Ըստ էության, տեղեկատվության նոր աղբյուրին անդրադառնալով, հնարավոր է դառնում, մի կողմից՝ նորովի վերլուծել արդեն առկա նյութերը, մյուսից՝ խորացնելու և ընդլայնելու հետազոտական որոնումների շրջանակները: Հայաստանում իրականացված էթնոսոցիոլոգիական հետազոտությունների մեթոդն ունի մի շարք առավելություններ: Վիճակագրորեն ներկայացուցչական հետազոտությունների պարբերականությունը և դրանցում ներկայացված նյութերի համադրելիությունը հնարավորություն են տալիս բացահայտելու իրադարձությունների բավականին բովանդակալից և իրականության հավաստի դիսամիկան:

Էթնոսոցիոլոգիական համադրելի տևական հետազոտությունների նյութերի ընդգրկումը, որտեղ գրանցվել են տարբեր սերունդների կյանքի նկարագրությունները(22), հնարավորություն են ընձեռել ոչ միայն նորովի գնահատել և հետազայում օգտագործել այլ աղբյուրների վերլուծական ռեսուրսները, այլ նաև ընդլայնել հետազոտական պրպտումների հորիզոնները: Այսպես, Հայաստանի բնակչության սեզոնային և կարճաժամկետ տեղաշարժերի գործընթացների բացահայտման հետ մեկ-

տեղ մենք կարողացանք յուրաքանչյուր հարցման ընթացքում, պարբերաբար գրանցվող նույնատիպ հարցերի միջոցով, հետևել քաղաքային և գյուղական բնակչության միգրացիոն տրամադրություններին: «Ցանկանում եք Դուք, արդյոք, տեղափոխվել», «Նշեք, ինդրեմ, այն կոնկրետ բնակավայրը, երկիրը որտեղ Դուք ցանկանում եք տեղափոխվել»(23), «Նշեք, ինդրեմ, Ձեր մտադրության պատճառը», «Տեղափոխվելու հույս ունեք Դուք արդյոք»: Բնակչության միգրացիոն մտադրություններին առնչվող հարցերի այս բավականին ոչ ամբողջական ցանկը, ի վիճակի է ոչ միայն նկարագրելու այս կամ այն փուլում տեղաշարժերի հետ կապված կոնկրետ իրավիճակը, այլև բացահայտելու այդ ուղղությամբ տեղի ունեցող փոփոխությունների դինամիկ պատկերը:

Նախկինում տեղի ունեցած միգրացիոն գործընթացների մասին կարող են բավականին արժեքավոր և հետաքրքիր աղբյուր լինել Հայաստանի բնակչության հուշերն ու գնահատականները՝ սփյուռքում բնակվող իրենց ազգականների գործունեության վերաբերյալ: Այդ աղբյուրի հավաստիության գնահատման համար հիմք է դարձել միգրացիայի արդյունքում ձևավորված ժամանակակից սոցիալական ցանցերի գործունեության ազգակցական բնույթի մասին ենթադրությունը: Այդ ցանցերի գործունեության բնույթի և հնարավորությունների մասին գիտակցում է մարդկանց ճնշող մեծամասնությունը: Դա դրսևորվել է էթնոսոցիոլոգիական հետազոտությունների ընթացքում, երբ գրանցվել է այլ վայրերում, մայրաքաղաքում և հանրապետության սահմաններից դուրս բնակվող իրենց բնակավայրի նախկին բնակիչների կյանքի մասին հարցվողների ապշեցուցիչ տեղե-

կացվածություն: Այդ հանգամանքը դրդել է նորովի գնահատել ստանդարտացված հարցազրույցների ընթացքում ստացված նյութերը, որոնք ներկայացուցչական են Հայաստանի ընդհանուր բնակչության, քաղաքների և գյուղերի բնակիչների հարցվողների զանգվածի համար: Վերլուծության ընթացքում բացահայտվեց ժամանակակից հայկական սփյուռքի ուսումնասիրման համար դրանց մեծ արժեքը: Դա բացատրվում է միգրացիայի ժամանակաշրջանի, նոր բնակության վայրում արտագաղթածների զբաղմունքի, հայրենիքի հետ կապերի, հետագա տեղաշարժերի նպատակների և այլ հարցերի վերաբերյալ ստացված հարուստ տեղեկատվությամբ: Հանձինս հարցվողների, ունենալով «սոցիալական հիշողության» այսպիսի ներուժ, հնարավոր է իրականացնել անցյալ իրադարձությունների ինչպես վիճակագրորեն ներկայացուցչական ուսումնասիրություն, այնպես էլ, բովանդակային արժանահավատ հետախնայաց վերլուծություն: Այդ նոր տեղեկատվության համադրումն արդեն գոյություն ունեցող տվյալների, հատկապես միգրացիոն գործընթացների հետ կապված իրադարձությունները վերականգնելու և ավելի խորը բովանդակությամբ լրացնելու ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում:

Սույն հետազոտության ընթացքում, գոյություն ունեցող նյութերի համակարգումը (վիճակագրական տվյալների, արխիվների, իրադարձությունների մասնակիցների վկայությունների) և սոցիոլոգիական մեթոդների կիրառումը, մեծապես նպաստել են վիճակագրական հավաստիությամբ որոշելու տեղի ունեցած գործընթացների մասշտաբները, բացահայտելու դրա բաղադրամասերից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանը,

ստանալու երևույթների դիմամիկ պատկերի ուրվագիծը: Այսինքն՝ գնահատվել է իրավիճակը և ստեղծվել իրադարձությունների համայնապատկերը: Այդպիսի նյութերի պահանջարկը պայմանավորվում է, մի կողմից՝ ընթացիկ վիճակագրության մեջ և մարդահամարներում գոյություն ունեցող բնակչության միգրացիոն ցուցիչների սակավությամբ, մյուս կողմից՝ տարբեր երկրների վիճակագրական տվյալների հետ դրանց անհամադրելիությամբ: Ինչպես ցույց է տալիս մեր և շատ այլ ուսումնասիրողների փորձը(24), ժամանակակից սփյուռքերի ուսումնասիրությունը մշտապես բախվում է ներկայացուցչական տեղեկատվության հայթայթման խնդրի հետ, որի աղբյուրները բավականին սուղ են: Այդ իսկ պատճառով, մենագրությունում ներկայացրած մոտեցումը, որտեղ ներառվել է միգրացիայի և նոր սփյուռքի ձևավորման հիմնախնդրի քննարկման միանգամայն նոր մեթոդ, ենթադրում է տեղեկատվության այնպիսի նոր աղբյուրի ընդգրկում, որը հնարավորություն է տալիս այդ գործընթացներն ուսումնասիրելու ներսից, այն սոցիալական ցանցի դիրքերից, որը ձևավորվել է բնակչության տարածքային տեղաշարժերի արդյունքում: Այս ամենը հնարավորություն է տվել մատնանշելու Հայաստանի բնակչության տեղաշարժերի դիմամիկան, ըստ միգրացիայի կոնկրետ տեսակների՝ կարճաժամկետ, սեզոնային, անվերադարձ, պատկերելու հայկական սփյուռքի ձևավորման գործընթացը, Հայաստանում և սփյուռքում բնակվող եթնոսի երկու հատվածների փոխադարձ կապերի ինտենսիվությունը և որակական հատկանիշների բնույթը:

Ծանոթագրություններ

1. Л.Л. Рыбаковский, Практическая демография. Տե՛ս <http://rybakovsky.ru/uchebnik3a2.html>:
2. Миграционное движение населения: теория, политика, практика, перспективы. (под общей редакцией Воробьевой О.Д., Топилина А.В.), Москва 2013. Տե՛ս <http://www.rfh.ru/downloads/Books/134293008.pdf>:
3. Գիդդենսը միգրացիան համարում է «սոցիալական վերափոխումների հիմնական գործոններից մեկը, որի ազդեցությամբ տեղի է ունենում տարածքային սոցիալական հարաբերությունների վերափոխում»: Տե՛ս Giddens A. Consequences of Modernity. Cambridge: Polity Press. 1990, 188p.:
4. ՄԱԿ-ի համակարգի շրջանակներում, ինչպես օրինակ, IOM, MOM, UNSR և այլ միջազգային կազմակերպությունների կողմից, միջազգային միգրացիայի և զարգացման խնդիրների լուծման մասին: Տե՛ս <http://www.un.org/ru/development/migration/system.shtml>:
5. Юдина Т.Н. Социология миграции. М.: Академический проект, 2006, с. 201.
6. Сильвермен Д. Некоторые игнорируемые вопросы о природе социальной реальности. // Новые направления в социологической теории. М.: Прогресс, 1978. с.273.
7. Этносоциальные проблемы сельских миграций. М., 1990; Сусоколов А.А. Русский этнос в XX веке: этапы кризиса экстенсивной культуры / гипотезы этноэкологической модели // Мир России. 1994.2; Сусоколов А.А. Методологические принципы этносоциологического изучения миграции. Арутюнян Ю.В. и др. Этносоциология. М.: Аспект Пресс, 1998.
8. Այդ հարցի կապակցությամբ, ազգաբնակչության Մ. Բոյդը դեռևս 1980թ. մասնանշել է այն հետազոտությունների բանակի աճը, որոնք նվիրված են միգրացիոն հոսքերի վերաբնակչության, միգրանտների տարաբնակեցման և ընդունող հասարակությունում նրանց ինտեգրման գործում սոցիալական ցանցերի դերին: Տե՛ս Boyd M., Family and personal networks in international migration: Recent

developments and new agenda // International Migration Review. 23(3). p. 238-270:

9. Այդ խնդրի առնչությամբ, Վ.Ն.Վալիտովը ներկայացնում է Տ. Բաուերի և Ֆ.Վլաուսի գաղափարը, ըստ որի՝ սոցիալական ցանցերի հայեցակարգի կառուցումը նոր հնարավորություններ է ստեղծում ձևափոխվող հասարակության նկարագրության համար: (St 'u Bauer T., Klaus F. Zimmerman network migration of ethnic Germans // International migration review. 1997. Vol. 3): Մեջբերումն ըստ՝ Валитов В. Н., Социальные сети российских иммигрантов и коренных жителей. с.3 WWW.I-U.RU:
10. Ակնհայտ է, որ բնակչության շարժի գործընթացների էթնիկական բաղադրիչի առանձնացումն է հնարավորություն ընձեռել Ու. Թոմասին և Ֆ. Ջնանեցկիին մշակելու և իրականացնելու միգրացիայի համալիր ուսումնասիրությունը: «Լեհ գյուղացին Եվրոպայում և Ամերիկայում» նրանց դասական աշխատությունում կարելի է գտնել միգրացիայի ուսումնասիրման համար աղբյուրներ գտնելու մեթոդաբանության և համակարգման բավականին կարևոր սկզբունքներ (վիճակագրական տվյալներ, անձնական փաստաթղթեր, թերթերի տեղեկատվություն, անձնական նամակներ, դատական լուսմների արձանագրություններ, քարոզների տեքստեր, բրոշյուրներ, սոցիոլոգիական հարցումներ և այլն): St u W.L. Thomas, F.Znaniiecki, "The Polish Peasant in Europe and America", USA, 1996, 131p.:
11. Միգրացիոն գործընթացներին նվիրված են հարյուրավոր աշխատանքներ և բազմաթիվ առանձին մենագրություններ: Դրա մասին մանրամասն տեղեկատվություն է պարունակում Этносоциология и этносоциологи. Исследования, поиски, воспоминания, М.2008, աշխատությունը:
12. Население Еревана. Этносоциологические исследования. Ереван, И-во АН Арм. ССР, 1986, с.77.
13. Տարբեր էթնոսների ներկայացուցիչների միգրացիոն շարժունակությունը և դրանց ազդեցությունը էթնոսների սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքի, բնակչության զանազան խմբերի սոցիալ-մշակութային փոխգործունեության, էթնիկ հանրությունների զարգացման և այլն, խնդիրների ոչ ամբողջական ցանկն է, որոնց լուծումը հնարավորություն է տալիս ոչ միայն բնորոշելու իրավի-

առանձնահատկություններ: Զեկույց կանանց իրավիճակի մասին. անցումային ժամանակաշրջանի ազդեցությունը, UNDP, Հայաստան, 1999, էջ 84-87:

16. Հայագիտության մեջ այդ իրավիճակը ակնհայտորեն դրսևորվում է համահայկական գիտաժողովների ընթացքում, որտեղ ավելի մեծ ուշադրություն է հատկացվում անցյալին:
17. Վ.Խոջաբեկյան. Հայաստանի բնակչությունը և նրա վերարտադրությունը ՀԽՍՀ ԳԱ Հրատ. Երևան, 1979; Գ.Ավագյան. Հայաստանի բնակչությունը, Երևան. 1985: Vladimir E. Khojabe-kyan The Reproduction and movements of the population of Armenia in the 19th and 20th centuries and at the threshold of the 21st century. Yerevan, 2002.
18. Հայկական փորձը կարող է նման օրինաչափությունների վեր-լուծությունների համար ուսուցողական օրինակ դառնալ, առավել ևս այն պատճառով, որ ինչպես ցույց են տալիս համաշխարհային միտումները, այդ գործընթացները լուրջ հեռանկարներ ունեն:
19. Ս. Լիսիցյան. Ազգագրական հարցարան, Երևան, ՀՍՍՌ գիտու-թյունների ակադեմիայի հրատարակչություն, 1946:
20. Կարապետյան Ռ.Ս., Պատմական վերակազմության մեջ սոցիոլոգիական հետազոտության նյութերի տեղեկատվական օգտակարության գնահատման խնդիրները, Հայ ժողովրդական մշակույթ. XIV, Երևան 2008, էջ 115-120:
21. Վերջինիս օգտագործման հնարավորությունը կարելի է գնահա-տել մեթոդոլոգիական բնույթի որոշ հարցերի պարզաբանման մի-ջոցով: Դրանք են՝ ներկայացուցչության մակարդակը, ներկայաց-ված ցուցիչների համապատասխանությունը պատմական իրո-դություններին, ընտրանքի ներկայացուցչականությունը և հետա-զոտական գործիքների համապատասխանությունը: Այդ մասին մանրամասն տե՛ս Կարապետյան Ռ.Ս., Պատմական վերա-կազմության մեջ սոցիոլոգիական հետազոտության նյութերի տեղեկատվական օգտակարության գնահատման խնդիրները...:
22. Էթնոսոցիոլոգիական հետազոտությունների ընտրանքային հա-մախմբում ընդգրկվել են 18-ից բարձր քաղաքային բնակչության բոլոր տարիքային խմբերը:
23. Տե՛ս Арутюнян Ю.В., Карапетян Р.С., Овсепян А.А., Опросной лист. Ереван. 1976: Կարապետյան Ռ.Ս., ՀՀ բնակչության էթնոսոցիո-

լոգիական ուսումնասիրության «Հարցաթերթ», Երևան, 1980: Կարապետյան Ռ.Ս., ՀՀ բնակչության էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության «Հարցաթերթ», Երևան, 1993; Arutunjan Ju.V., Sabah G., Karapetjan R., Questionaire (Interview schedule) for the study of «Ethnic Identity in Comparative Perspective: Armenians in Los Angeles, Moscow and Yerevan», Los Angeles, 1993; Կարապետյան Ռ., ՀՀ բնակչության էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության «Հարցաթերթ», Երևան, 2005; Կարապետյան Ռ., Հակոբյան Կ., ՀՀ բնակչության էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության «Հարցաթերթ», Երևան, 2005:

24. Арутюнян Ю.В. Об армянской диаспоре в России, Ереван, Гитутюн, 2011:

ԳԼՈՒԽ I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՍՓՅՈՒՌՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

XX դարի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները պայմանավորեցին տարբեր երկրներում հայերի հոծ կամ ցրված տարաբնակության ձևերը: Հարկ է դրանով բացատրել էթնոսի խոշոր խմբերի հետագա ակտիվ տեղաշարժերը, որոնք նախկինում գոյություն ունեցող բնակության համակարգի հետ մեկտեղ(1) ձևավորեցին նոր համայնքներ և բարդացրին հին համայնքների կազմը: Այդ իսկ պատճառով, արդի իրավիճակը և էթնոսի տարբեր հատվածների զարգացման հեռանկարներն ըմբռնելու համար, անհրաժեշտ է անդրադառնալ անցյալում տեղի ունեցած հայ ազգաբնակչության միգրացիայի ուղղություններին:

Ս.Ի. Բրուկի կողմից ներկայացված ոչ ամբողջական տվյալների համաձայն՝ 1965թ. հայերի մոտավորապես 71%-ն ապրում էր նախկին Խորհրդային Միության տարածքում, 5%-ը՝ Եվրոպայում, 11%-ը՝ Ասիայում, 0,3%-ը՝ Աֆրիկայում, 12,5%-ը՝ Ամերիկայում, 0,3%-ը՝ Ավստրալիայում(2): Այդ տվյալների հրապարակումից 30 տարի անց, հայերի տարածքային տեղաբաշխման կառուցվածքում տեղի են ունեցել էական տեղաշարժեր: Նախկին Խորհրդային Միության ընդհանուր տարածքից մեկուկես անգամ նվազել է անդրկովկասյան տարածաշրջանում հայերի քանակը և կտրուկ ավելացել (4,25 անգամ) ՌԴ-ում նրանց տեսակարար կշիռը: Նախկին միության այլ տարածքներում բնակվող հայերի քանակը որոշ չափով նվազել է: Վիճա-

կազմությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակահատվածում տեղի է ունեցել հայերի հոծ բնակեցված գոտիներից մեր հայրենակիցների արտահոսք, մասնավորապես Իրանից, Եգիպտոսից, Իրաքից, Միրիայից դեպի Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, եվրոպական այլ երկրներ, Հյուսիսային Ամերիկա և Ավստրալիա (տե՛ս աղյուսակ 1.1):

Աղյուսակ 1.1.

Աշխարհի և նախկին Խորհրդային Միության երկրներում հայերի թվաքանակի աճի տեմպերը և տեղաբաշխման կառուցվածքի դինամիկան

	Բնակեցման կառուցվածքը					Աճի տեմպերը				
	1926	1959	1970	1979	2001	1926	1959	1970	1979	2001
ՀՀ	47.4	52.7	62.1	65.6	52.6	143	209	142	123	114
Վրաստան	19.6	15.9	12.7	10.8	5.9	146	144	102	99	53
ԱՀ	18.0	12.7	13.6	11.3	-		157	109	98	-
Ընդամենը Անդրկովկասում	85.0	87.4	88.3	87.4	58.5	145	-	-	-	-
ՌԴ	11.7	9.2	8.4	8.8	37.4	-	139	117	122	603
Միջին Ասիա	1.9	2.2	2.2	2.3	1.7	-	201	124	120	108
ՆՄ	1.4	1.1	1.1	1.1	2.3	-	145	120	117	318
Բալթյան երկրներ	-	0.1	0.1	0.1	0.1	-	-	150	112	175
Ընդամենը ՆՄ-ում	58.8	-	71.4	-	69.8	-	178	128	117	132
Եվրոպա	14.3	-	17.8	-	31.8	-	-	-	150	281
Ամերիկա	9.7	-	43.6	-	54.3	-	-	-	544	194
Ասիա	73.6	-	36.6	-	12.0	-	-	-	166	071
Աֆրիկա	1.9	-	1.0	-	0.3	-	-	-	071	090
Ավստրալիա	0.5	-	1.0	-	1.6	-	-	-	400	250
Արտերկրներ	41.2	-	29.6	-	30.2	-	-	-	202	143
Ընդամենը	100		100	-	100	-	-	-	-	-

Աշխարհի յուրաքանչյուր տարածաշրջանում և տարբեր բնակավայրերում հայերի տարաբնակեցման ձևերի վրա էական ազդեցություն ունեցան անցյալ դարի սկզբին տեղի ունեցած մի շարք իրադարձություններ:

Սկզբում հարկ ենք համարում նշել, որ գյուղական բնակավայրերում էթնիկ բնակչության խտությունը միշտ ավելի մեծ է, քան քաղաքներում, որտեղ գերիշխում է ցրված բնակչությունը: Մակայն, որոշ դեպքերում, առանձին քաղաքային թաղամասեր հայերով խիտ բնակեցված էին(3): Ավանդական տարաբնակչության վայրերում էթնոսի որոշ խբերին բնորոշ է ավելի մեծ խտություն: Եվ ընդհակառակը, որքան տվյալ վերաբնակեցման օջախը մեր ժամանակներին մոտ է ձևավորվել(4), այնքան այն ավելի ուրբանիզացված է և ցրված:

Դիտարկենք այդ գործընթացի բնույթը, նախկին միության տարածքում հայերի բնակեցման կառուցվածքի փոփոխության դինամիկայի օրինակով:

Այն ժամանակաշրջանից սկսած, երբ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսական կայսրությանը, հայերի տարաբնակեցման ավանդական օջախներին ավելացան բազմաթիվ նորերը, որոնց մեջ XX դարի սկզբին առանձնանում էին մի քանի տիպ: Առաջին տիպը ժամանակակից ՀՀ տարածքում հոծ բնակեցումն էր: Այստեղ բնակվում էր Ռուսական կայսրության տարածքում ապրող քաղաքային հայ բնակչության ոչ ավելի, քան մեկ հինգերորդ մասը և գյուղական հայ բնակչության կեսը:

Հայերը հոծ բնակվում էին նաև Կովկասի և Անդրկովկասի այլ շրջաններում: Դա բնորոշ էր Նոր Նախիջևանի, Ջավախքի, Ղրիմի, Կովկասի սևծովյան ափերի (համշենահայեր), Հյուսի-

սային Կովկասի քաղաքային և գյուղական բնակչությանը: Սա նախկին միության տարածաշրջանների ոչ ամբողջական այն ցանկն է, որտեղ կային հայ էթնոսի խոշոր զանգվածներ: Համայնքային այդպիսի կառուցվածքներից բացի, էթնոսի բնակեցման համակարգում գոյություն ունեին միաէթնիկ քաղաքային խոշոր թաղամասեր Թբիլիսիում (Հավլաբար, Մուլլակի մի մասը), Բաքվում (Արմենիքենդ, Մերձկայարանային շրջան), Դոնի Ռոստովում (Նոր Նախիջևան, Արմյանսկ և այլն), Կրասնոդարում և Ռուսական կայսրության բազմաթիվ այլ քաղաքներում(5):

Խիստ բնակեցումը բնորոշ էր նաև Մուլդովիայի և Ղրիմի հայերին: Միջինասիական տարածաշրջանում հայերը սլավոնների «ուղեկիցն» էին, հիմնականում աշխատում էին ռուսական վարչակազմում և ցրված բնակվում վարչական կենտրոններում: Այդ ժամանակաշրջանում Ռուսական կայսրությունում հայերն ամենաուրբանիզացված էթնոսներից էին: Ըստ 1897թ. Համառուսական մարդահամարի տվյալների յուրաքանչյուր չորրորդ հայը քաղաքաբնակ էր, այն դեպում, երբ ժամանակակից ՀՀ տարածքում բնակվողների միայն տասներորդ մասն էր քաղաքաբնակ(6): Դրանով հաստատվում է այն ընդհանուր օրենքը, ըստ որի՝ սեփական տարածքում էթնոսն ավելի թույլ է ուրբանիզացված, քան դրանից դուրս:

1926թ. նախկին Խորհրդային Միության հայերի 85%-ը բնակվում էր Անդրկովկասում, որոնց կեսից պակասը (47,4%)՝ ՀՀ-ում: Դա բացատրվում է նախևառաջ նրանով, որ հայ էթնիկ տարածքների մի մասը մտցվեց Վրաստանի և Ադրբեջանի կազմի մեջ և երկրորդ՝ դեպի Անդրկովկասի արդյունաբերական

կենտրոններ՝ էթնոսի զգալի զանգվածների հոսքով: Մնացած 15%-ի մեծ մասը տեղավորվեց Հյուսիսային Կովկասում, 2%-ը՝ Միջին Ասիայում և 1%-ից քիչ ավելին՝ նախկին միության արևմտյան տարածաշրջաններում: Միջին Ասիայում և նախկին միության արևմտյան տարածաշրջաններում հայերի ուրբանիզացման աստիճանը Անդրկովկասի համեմատ մի քանի անգամ բարձր էր: Այդ առումով Հյուսիսային Կովկասը գտնվում է միջին դիրքերում:

Աղյուսակ 1.2.

Նախկին Խորհրդային Միությունում հայերի
ուրբանիզացման դինամիկան(7)

	1897	1926	1959	1970	1979	1989	2001
ՀՀ	11.1	20.1	52.2	62.7	68.8	68.6	64.9
Վրաստան և Ադրբեջան	33.0	42.9	57.7	64.1	71.0	տվ.չկա	տվ.չկա
ՌԴ	տվ.չկա	59.0	67.0	72.2	78.0	տվ.չկա	տվ.չկա
Միջին Ասիա	տվ.չկա	96.0	88.9	91.2	97.0	տվ.չկա	տվ.չկա
Ուկրաինա, Բելո- ռուս, Մոլդովա	տվ.չկա	78.1	88.7	92.5	96.0	տվ.չկա	տվ.չկա
Բալթյան երկրներ	տվ.չկա	տվ.չկա	90.9	75.8	93.0	տվ.չկա	տվ.չկա
Ընդամենը	23.2	35.4	56.5	64.8	69.9	տվ.չկա	տվ.չկա

Անցյալ հարյուրամյակի սկզբին ստեղծված իրավիճակը պայմանավորեց նաև հայ էթնոսի հետագա տարիների տեղաշարժերի ուղղությունները և ուրբանիզացման ինտենսիվությունը: 1926-1979թթ. ժամանակահատվածում նախկին միությունում հայերի բնակեցման տարածաշրջանային կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: 1979թ., ինչպես և 1926թ., Անդրկովկասում բնակվում էին նախկին միության հա-

յերի 85%-ից ավելին: Նախկին միության տարածաշրջաններում նույնպես պատկերը չէր փոխվել: Մասնավորապես, ՌԴ-ում և Միջին Ասիայում այդ փոփոխությունը կազմում է 1-3%-ի սահմաններում: Սակայն, նշված տարածաշրջաններում, հատկապես Անդրկովկասում, էթնոսի տարածքային տեղաբաշխման մեջ տեղի էին ունեցել էական տեղաշարժեր: Հայաստանի հարևան երկրներում բնակվող հայերի քանակը համարյա կրկնակի նվազել էր, իսկ Հայաստանում, ընդհակառակը, ավելացել մեկուկես անգամ: Էթնիկական համընդհանուր մասշտաբի գործընթացներից հարկ է առանձնացնել նաև այն, որ ողջ նախկին միության հայերի քանակն ավելացել էր: Վերջին 80 տարվա ընթացքում (1926-2001թթ.) այն եղել է հաստատուն, ընդ որում, յուրաքանչյուր տասնամյակում հայերի քանակն աճել է համարյա 120%:

Նախկին միությունում էթնոսի աճման նման ցուցանիշները պայմանավորվում էին հիմնականում երկու գործոններով: Դրանցից առաջինը բնական աճն էր, որի բարձր տեմպերը պահպանվում էին ընդհուպ մինչև 1959թ., հետագա 20 տարիների ընթացքում կայունանում էր, իսկ այնուհետև, 1980թ. սկսած այն անկում է ապրում(8):

Հայերի քանակի նման աճը պայմանավորող կարևոր գործոն էր նաև սփյուռքահայության ներգաղթը: Ներգաղթածների քանակի վերաբերյալ հետազոտություններում տարբեր կարծիքներ են հայտնվել: Հիմնվելով հարուստ արխիվային նյութերի վրա՝ հայրենադարձության հայտնի հետազոտող Հ. Մելիքսեթյանը գտնում է, որ միգրանտների այդ խմբի ընդհանուր քանակը կազմում էր 200000 մարդ: Հ. Մելիքսեթյանը ներգաղթը

բաժանում է հետևյալ փուլերի. առաջին փուլում (1920-1936թթ.) ներգաղթը կատարվել է Մերձավոր Արևելքի երկրներից, Իրանից, Թուրքիայից, Հունաստանից, Ֆրանսիայից, երկրորդ փուլում (1946 և 1948/49թթ.)՝ աշխարհի 12 երկրներից, երրորդում (1952-1982թթ.)՝ աշխարհի ավելի քան 30 երկրներից(9): Միգրանտների այս խմբի ընդհանուր քանակի 25,2%-ը բաժին է ընկնում առաջին փուլին, 53,4 %-ը՝ երկրորդին և 21,4%-ը՝ երրորդին(10):

Նախկին միությունում հայերի աճի տեմպերն առավել բարձր էին 1926-1939թթ. (փախստականներ, ներգաղթ և բնական բարձր աճ)՝ կազմելով 139%: Այնուհետև այդ ցուցանիշը սկսում է նվազել, 1939-1959թթ. կազմելով 129%, 1959-1970թթ.՝ 128% և 1970-1979թթ.՝ 117%: Վերջին քսանամյա փուլում, 1990-2010թթ., այդ աճը կազմել է ընդամենը 132%: Կարելի է ենթադրել, որ նախկին միությունում հայերի քանակի մասին տվյալները մոտավոր են և բավականին նվազեցված: Դա առաջին հերթին բացատրվում է նրանով, որ միութենական հանրապետությունների վիճակագրության մեջ մշտապես նվազեցվում էին ազգային փոքրամասնությունների քանակի վերաբերյալ ցուցանիշները: Էթնիկ փոքրամասնությունների քանակի նման հաշվարկը լայնորեն տարածված էր և՛ Ուկրաինայում, և՛ Վրաստանում, և՛ Ադրբեջանում: Այսպես, մարդահամարի պաշտոնական տվյալներով, 1976թ. Թբիլիսիում հայերի թիվը կազմում էր 110 հազար մարդ, իսկ մեր ընտրանքով, այն 80 հազարով ավելի էր: Ադրբեջանում բանը հասել էր նրան, որ վիճակագրական հաշվառումից «անհետացել» էին ամբողջ էթնիկ խմբեր(11): Այդպիսի իրավիճակ էր տիրում նաև Ուկրաինայում, որտեղ բնակչության

մարդահամարի անցկացման ժամանակ հայերի թիվը երկու անգամից ավելի նվազեցվում էր: Ոչ լիարժեք հաշվառումից բացի, նախկին միությունում էթնոսի կազմի մասին, քանակական տվյալների վրա պետք է որ ազդեին նաև որոշ այլ գործոններ: Դրանցից առաջինը՝ Հայրենական մեծ պատերազմում մարդկային կորուստներն էին (որոշ տվյալներով հայերի շրջանում այդ կորուստները կազմել էին մոտավորապես 350 հազ. մարդ)(12): Երկրորդ գործոնը ձուլումն էր, իսկ երրորդը՝ նախկին միությունից էմիգրացիան:

Նշված թերություններով հանդերձ, այնուամենայնիվ, մարդահամարի նյութերը արտացոլում են նախկին միության ողջ տարածքով էթնոսի տեղաշարժերի, հետագա ուրբանիզացման և ցրվելու հիմնական միտումները: Այդ գործընթացի մասին են վկայում նախկին միության տարբեր հանրապետություններում հայերի քանակի աճի էական տարբերությունները: Այն առավել բարձր էր Հայաստանում: Հարևան հանրապետություններում, նախապատերազմյան շրջանում հայերի քանակի աճը չէր տարբերվում նախկին միության միջին ցուցանիշներից, սակայն այնուհետև դրա տեմպերն անկում են ապրում: Իսկ 1959թ-ից Վրաստանում և Ադրբեջանում սկսվում է հայերի բացարձակ թվի կրճատումը: Այս տվյալները ցույց են տալիս, որ այդ ժամանակաշրջանում տեղի էր ունենում հիշյալ հանրապետություններից հայ բնակչության ինտենսիվ արտահոսք դեպի ՀՀ և ԽՍՀՄ այլ տարածաշրջաններ: Վրաստանից այդ հոսքերն ուղղված էին նաև դեպի Ուկրաինայի և ՌԴ քաղաքները: Ադրբեջանից՝ նշված հանրապետություններից բացի, հայերը տեղափոխվում էին նաև միջինասիական տարածաշրջանի քաղաք-

ներ, հիմնականում Ուզբեկստան և Թուրքմենիա: Ինչպես արդեն նշվել է, Էթնոսի միգրացիայի վերջին այս ուղղությունը հին ավանդույթներ ունի, որի արմատները հասնում են XX դարի սկիզբը:

Աղյուսակ 1.3.

Նախկին Խորհրդային Միության հանրապետությունների քաղաքային բնակչության կազմում հայերի տեսակարար կշռի փոփոխությունը

	1926	1959	1970	1979	1989	2001
Հայաստան	89.9	91.9	93.4	95.3	96.0	98.0
Վրաստան	25.6	14.2	11.4	11.1	10.2	8.0
Ադրբեջան	16.7	15.2	13.2	12.7	-	
Թուրքմենստան	11.2	2.8	2.2	2.1	1.9	1.0
Ուզբեկստան	1.2	1.0	1.0	0.8	0.6	0.3
Տաջիկստան	0.4	0.4	0.3	0.2	0.1	-
Կիրգիզիա	0.2	0.1	0.1	-	-	-
ՌԴ	0.7	0.3	0.3	0.3	0.4	0.5

Հայաստանի հարևան հանրապետություններից հայ միգրանտների զգալի մասը տեղափոխվում էր ՀՀ (ըստ 1970թ. մարդահամարի տվյալների, այն կազմում էր այդ հանրապետություններից միգրանտների ընդհանուր թվի մոտ 15%-ը)(13): Այստեղ, հարկ է նշել բավականին տարօրինակ իրավիճակի մասին: Մի կողմից, Վրաստանում և Ադրբեջանում քաղաքային հայերի աճի տեմպերն ավելանում էին, մյուս կողմից, քաղաքային բնակչության մեջ նրանց տեսակարար կշիռը նվազում էր: Դրա հետ մեկտեղ տեղի էր ունենում նաև Էթնոսի տարածքային ցրվելու ակտիվ գործընթաց:

Այդ գործընթացների զարգացման բնույթն ավելի խորը լուսաբանելու համար հարկ է անդրադառնալ Անդրկովկասի խոշոր քաղաքների պատմական զարգացմանը, որոնց բնակչության ձևավորման գործում հայերն ակտիվ մասնակցություն են ունեցել: Ինչպես արդեն նշվել է, անցյալ դարի սկզբին, այդ քաղաքներում՝ Թբիլիսիում, Բաքվում, Դոնի Ռոստովում և այլն, արդեն գոյություն ունեին հայերից բաղկացած միատարր էթնիկ կազմով թաղամասեր: Որոշ դեպքերում, հայերը այդ բնակավայրերի բնակչության հիմնական օղակներից մեկն էին: Այսպես, 1897թ. բնակչության Համառուսական մարդահամարի տվյալների համաձայն, Թբիլիսիում, Գորիում, Քութայիսում, Բաքվում և այլ քաղաքներում հայերը կազմում էին տեղի բնակչության կեսից մինչև քառորդ մասը(14): Սակայն, այդ հանրապետությունների քաղաքաշինական քաղաքականության իրականացման հետևանքով, հայաբնակ թաղամասերում ծավալվեցին բնակելի մեծ համալիրների շինարարական աշխատանքներ, որի արդյունքում թաղամասերի էթնիկ խտությունը խախտվեց: Ակնհայտ է, որ ժամանակի ընթացքում, հայ էթնիկ խմբերի հոծ բնակեցումը փոխվեց ցրված բնակեցման: Այդ գործընթացը մեծ ազդեցություն ունեցավ Ուկրաինայի հայերի բնակչության վրա, որտեղ նրանց աճը ամբողջ քսաներորդ դարի ընթացքում բավականին ցածր էր: Սակայն, դարի վերջում Անդրկովկասից ինտենսիվ ներհոսքի հետևանքով հայերի քանակն ավելացավ:

Ուկրաինայում, Մոլդովիայում ու Բելոռուսիայում հայերի ճնշող մեծամասնությունը քաղաքաբնակ էր: Միջին Ասիայում հայերի որոշ մասը բնակվում էր գյուղական վայրերում: Նրանք այդ տարածաշրջան են տեղափոխվել մի քանի փուլերով. առա-

ջին փուլում, որպես ռուսների «ուղեկիցներ», այնուհետև՝ սեզոնային աշխատողներ (խոպանչիներ)(15):

Հետպատերազմյան տարիներին հայերը, այդ թվում նաև մահմեդականացված համշենահայերը, այդ տարածաշրջան արտրվեցին Ղրիմից և Հյուսիսային Կովկասից(16): 1950-ական թվականներին և 1960-ականների սկզբին խոպան հողերի յուրացման ժամանակ Ղազախստանում բնակություն հաստատեցին հայ խոպանչիների փոքրաթիվ խմբեր, որոնց զգալի մասը ծագումով Արցախից, Գարդմանից և Սյունիքից էր: Հետագա կես դարի ընթացքում, խիտ և ցրված բնակության գոտիներում, էթնոսի քանակի ցուցանիշներում փոփոխություններն ունեին տարբեր ինտենսիվություն: Հայաստանում այն կազմում էր մոտ 370%, հարևան երկրներում՝ 160%: Դրա հետ մեկտեղ նկատվում էր քաղաքային բնակչության թվի արագ աճ: Բուն Հայաստանում այն կազմում էր 630%, իսկ նրա սահմաններից դուրս՝ 220%:

ԽՍՀՄ փլուզումից հետո էթնոսի տարաբնակեցման տարածքային կառուցվածքում նկատվեցին էական տեղաշարժեր: ՌԴ-ում հայերի թիվն ավելացավ վեց անգամ, Ուկրաինայում՝ երեք անգամ, Վրաստանում այն նվազեց մեկուկես անգամ, իսկ Ադրբեջանում հայտնի իրադարձությունների հետևանքով ընդհանրապես հայեր չմնացին(17):

Ներկայացված այս նյութերն ապացուցում են, որ նախկին միությունում հայերի տեղաշարժերի և տարածքային տեղաբաշխման կառուցվածքում ընդգծվել են հետևյալ օրինաչափությունները: Եղեռնը, էթնիկ տարածքի մեծ մասից հայերի գաղթը, ինչպես նաև Արևելյան Հայաստանի տարածքի զգալի

հատվածի օտարումը հոգուտ հարևան հանրապետությունների պայմանավորեցին ժամանակակից Հայաստանի սահմաններից դուրս հոծ և ցրված բնակվող խմբերի ձևավորմանը: Դրան հետևեց համապատասխան օրինաչափ երևույթ՝ հայերի ինտենսիվ ուրբանիզացումը: Այն հանգեցրեց էթնոսի խիտ բնակեցման ձևի նվազմանը և ցրվածության մեծացմանը, որն անցյալ հարյուրամյակում էթնոսի տարաբնակեցման հիմնական միտումն էր: Այդ միտումն ավելի ուժեղացավ XX դարի երկրորդ կեսին: Դրա վերջակետը եղավ համարյա կես միլիոն հայ բնակչության արտագաղթը ժամանակակից Ադրբեջանի տարածքից: 1988-1989թթ. էթնոսի այդ զանգվածն արտաքսվեց Բաքվից և Սում-գայիթից (ավելի քան 240 հազ. մարդ), Գանձակից (մոտ 40 հազ.), Մինգեչաուրից, Նուխիից և քաղաքային ու գյուղական այլ բնակավայրերից (հիմնականում՝ Գարդմանից և Հյուսիսային Ղարաբաղից), ինչպես նաև Նախիջևանի Բնքնավար Մարզից՝ ընդհանուր առմամբ, ավելի քան 450 հազար մարդ: Նրանցից 375 հազարը հաստատվեց Հայաստանում, մոտավորապես 30 հազարը՝ Արցախում, մնացած մասը՝ Վրաստանում, Հյուսիսային Կովկասում և ՌԴ այլ տարածաշրջաններում(18): Սկզբում Հայաստանում տեղավորված փախստականների զգալի մասը հետագայում արտագաղթեց ՌԴ, եվրոպական երկրներ և ԱՄՆ:

Խիտ բնակեցված գոտիներից հայերի արտահոսքի ընդհանուր միտումը շարունակվեց նաև հետագայում: Ընդ որում, այն ակտիվացավ նաև Հայաստանում: Դա հաստատվում է նաև ընթացիկ վիճակագրական տվյալներով (տե՛ս նկ. 1.1.): Այն ցույց է տալիս, որ 1995-2011թթ. ընթացքում Հայաստանից բնակչու-

թյան արտահոսքը գերազանցում է ներհոսքին: Այդ երկու տարեթվերի միջև ցուցանիշների առավել մեծ տարբերությունը նկատելի է 2000-2005թթ. ժամանակահատվածում:

Այսպիսով, հայ բնակչությանը բնորոշ անցյալում տեղի ունեցած տարածքային տեղաշարժերը սերտորեն կապված են ժամանակակից միտումների հետ: Վերջիններիս առանձնահատկությունը արտահայտվում էր խիտ բնակեցված գոտիներից հոսքի ինտենսիվացմամբ և միգրացիայի լայն տարածքների ընդգրկմամբ: Հայաստանից բնակչության արտահոսքի արդյունքում միգրացիոն տարածքը (այդ գործընթացում ընդգրկված երկրները և տարածաշրջանները) ընդունակ է ձևավորելու ինտեգրիոն շարժում, ուստի հարկ է բացահայտել անցյալ և ներկա իրադարձությունների փոխադարձ կապերը: Դրա հիման վրա հնարավոր կլինի որոշելու էթնոսի միգրացիոն գործընթացների հեռանկարները և նոր սփյուռքի ձևավորման օրինաչափությունները:


Միգրանտները հայկական նոր համայնքների համալրման հիմնական աղբյուրն են, ուստի նրանց քանակական-որակական ցուցանիշների բնույթի ուսումնասիրությունը պահանջում է մասնակիցների, ազդող գործոնների, բնակչության տեղաշարժերի մասշտաբների և ուղղությունների որոշակի հետևողականությամբ համակարգային վերլուծություն:

Միգրացիային բնորոշ հատկանիշներ կարող են լինել կարճատև ուղևորությունները, սեզոնային և անվերադարձ էմիգրացիան, դրանք խթանող պայմանները և այդ գործընթացի մասնակիցների հատկանիշները (միգրանտների ժողովրդագրական

և սոցիալ-մասնագիտական կազմը, ընտանիքի կառուցվածքը և այլն):

Նկ.1.1.

Միջազգային միգրացիայի դինամիկան
Հայաստանում 1995-2011թթ.(20):



Այդ հատկանիշների առանձնացման նպատակով անդրադառնանք վերջին 30 տարվա ընթացքում (1976-2007թթ.) իրականացված հինգ էթնոսոցիոլոգիական հետազոտությունների նյութերին, որոնք Հայաստանի բնակչության միգրացիոն մտադրություններին և էմիգրացիային առնչվող կոնկրետ տվյալներ են և պարունակում են հարուստ տեղեկատվություն:

Մեր էմպիրիկ հետազոտություններում միգրացիայի առաջին տիպն անմիջականորեն զրանցվում էր այն մարդու վարքի միջոցով, որի հետ իրականացվում էր ստանդարտացված հարցազրույցը: Այդ տիպի տեղաշարժի դինամիկան դիտարկվում էր նշված հինգ հետազոտության տվյալների համադրության միջոցով:

Ոչ վաղ անցյալում միգրացիոն գործընթացների դինամիկայի լիարժեք պատկերը նկարագրելու նպատակով ընդգրկվել են նյութեր նաև բնակչության զանազան խմբերի միգրացիոն մտադրությունների և դրանք իրագործելու նրանց հնարավորությունների գնահատումների վերաբերյալ: Վերոհիշյալ ցուցիչների համակցումը անցյալի, ներկայի և ապագայի ժամանակային սանդղակով պահանջում է մշակման որոշակի տրամաբանական հաջորդականությամբ լուծել մի շարք խնդիրներ:

Առաջին խմբի խնդիրների մշակման համար անհրաժեշտ էր բացահայտել Հայաստանի քաղաքների բնակչության սեզոնային և կարճաժամկետ տարածքային տեղաշարժերի քանակական և որակական հատկանիշները: Այդ հարցադրումը պայմանավորվում է այն կարևոր դերով, որ խաղում են ժամանակավոր և հատկապես սեզոնային արտագաղթողները բնակչության հետագա տեղաշարժերի, այդ թվում, նաև անվերադարձ միգրացիայի ձևավորման գործում: Ժամանակավորապես գտնվելով այլ երկրում՝ անձն այդ երկրի, կոնկրետ միջավայրում տեղավորվելու հնարավորությունների, անհրաժեշտ կապերի հաստատման և այլնի մասին ձեռք է բերում արժեքավոր տեղեկատվություն: Դրանք կարևոր նախապայման (նաև խթան) են դառնում նրանց հետագա տեղաշարժերի և նոր վայրում մշտական բնակություն հաստատելու համար: Նրանք տեղեկություններ են հավաքում նաև սեզոնային աշխատանքներով զբաղվող իրենց հարազատ մարդկանց նոր վայրում հիմնավորվելու համար անհրաժեշտ ռեսուրսներով ապահովելու վերաբերյալ:

Հարցերի երկրորդ խմբի մշակման համար կարևորվել է Հայաստանի բնակչության միգրացիոն մտադրությունների փոփո-

խությունների դինամիկայի և բնակչության արտահոսքի պատճառների կառուցվածքի ձևափոխման գործոնային վերլուծությունը: Դա հնարավորություն է տալիս նկարագրելու բնակչության զանազան շերտերի «արտամղման» սոցիալ-տնտեսական իրավիճակների ընդհանուր և առանձնահատուկ հատկանիշները, ինչպես նաև հետևողականորեն բացահայտելու էմիգրացիայի ցանկության առաջացման պայմանները: Դրանցում արտահատվում է իրենց բնակավայրից Հայաստանի բնակչության զանազան խմբերի (քաղաքային, գյուղական բնակչություն, ժողովրդագրական, սոցիալական և այլ կարգի խմբեր) մեկնելու դիրքորոշման փոփոխությունների բնույթը, այսինքն՝ էմիգրացիոն մտադրությունների և բնակչության հատկանիշների փոխադարձ կապերը:

Հարկ է նշել, որ հինգ էթնոսոցիոլոգիական հետազոտությունների ընթացքում հավաքված նյութերը պարունակում են, ինչպես իրականությունն արձանագրող օբյեկտիվ, այնպես էլ այլ անձանցից ստացված պատկերացումների, ենթադրությունների վրա հիմնված, գնահատող սուբյեկտիվ տեղեկատվություն: Համեմատական հետազոտությունների տևական բնույթը, հնարավորություն է ընձեռում հետևելու այդ գործընթացների դինամիկային: Դրա հիման վրա կարելի է հասկանալ յուրաքանչյուր հետազոտության իրականացման ժամանակաշրջանում ստեղծված իրավիճակը և ձգտել կատարելու այնպիսի խորքային համեմատություններ, որոնք լայնորեն ընդգրկում են տարածքային ու ժամանակագրական կտրվածքները: Այդ համեմատություններն իրականացվել են տարբեր ժամանակաշրջաններում բնակչության փոխանակության գործընթացներում

ներգրավված երկրների ու տարածաշրջանների հետ Հայաստանի փոխհարաբերությունների համատեքստում: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ուրվագծելու Հայաստանից բնակչության արտահոսքի արդյունքում ձևավորված այն միգրացիոն տարածքը, որի շրջանակներում ստեղծվում է իներցիոն շարժումը:

Սեզոնային միգրացիան

Արտագնացության զգալի մասշտաբները, որն ապահովում է տրանսֆերտների հսկայական ներհոսք դեպի հանրապետություն, բնական պաշարներով աղքատ մեր երկրի տնտեսության համար ներդրումային լուրջ սնուցում է: Եվ այն հարցը, թե որքան երկարատև կլինի այդ գործընթացը, Հայաստանի համար ձեռք է բերում ռազմավարական նշանակություն: Ուստի, դրա բնույթի, հետևանքների և մոտակա հեռանկարների ուսումնասիրությունը կարող է դրվել տնտեսական զարգացման ուղղությունների սկզբունքային մոտեցումների մշակման հիմքում:

Բնակչության սեզոնային տեղաշարժերը սովորաբար ընթանում են մեկ ուղղությամբ և բազմակի կրկնվելու միտում ունեն: Դա առաջին հերթին, պայմանավորվում է ծանոթ շրջապատում գտնվելու միգրանտի ձգտմամբ, որտեղ նախորդ այցելությունների ընթացքում նա ստեղծել է անհրաժեշտ կապերը և մուտք գործել տվյալ միջավայրում գործող սոցիալական ցանցեր: Նոր սոցիալական տարածքում միգրանտը կարող է առավել դյուրին հարմարվել երկու հանգամանքների դեպքում:

Առաջին հանգամանքը դասավորվում է այն դեպքում, երբ ընդունող միջավայրը մոտ է միգրանտին սոցիալական, լեզվական, կենցաղային և այլ առումներով, կամ, եթե նախորդ այցելությունների ժամանակ շրջապատի հետ փոխգործունեության ընթացքում նա ձեռք է բերել անհրաժեշտ փորձ և դրական վերաբերմունք: Երկու դեպքում էլ ընդունող կողմը համապատասխանում է միգրանտի սպասումներին և հետագայի սեզոնային վաստակի համար դառնում ընդունելի վայր:


Երկրորդ հանգամանքը կապված է նոր միջավայրում միգրանտի ինտեգրման կարողությունների հետ, որը հիմնականում պայմանավորված է նրա մասնագիտական հատկանիշներով և աշխատանքային հմտություններով: Երբ դրանք համապատասխանում են մուտքի վայրերում այս կամ այն մասնագիտությունների պահանջարկին, ապա կարող են նպաստել արտագաղթածների տեղաշարժերի ուղղության կրկնությանը: Այդ տեղաշարժերի ինտենսիվության չափման միջոցով կարելի է դատել սոցիալ-տնտեսական խթանների, շարժման ուղղության միջոցով՝ ընդունող կողմի պայմանների նպաստավոր լինելու, միգրանտների կազմի միջոցով՝ ծառայությունների այս կամ այն տեսակի նկատմամբ պահանջարկի, մասնագիտական հատկանիշների և աշխատանքային հմտությունների մասին: Ուստի, անհրաժեշտ է նկարագրել միգրացիայի այս տիպի զարգացման դինամիկան, անդրադառնալ դրանց ուղղությունների ձևավորման մեխանիզմների, տևողության և Հայաստանի բնակչության զանազան խմբերի միգրացիոն նպատակների (դրդապատճառների) հետազոտությանը:

Այդ նպատակով անհրաժեշտ է քննարկել Հայաստանից դեպի դուրս ընթացող միգրացիայի ինտենսիվության, ուղղության, նպատակների կապը այդ գործընթացի անմիջական մասնակիցների հատկանիշների հետ, որոնք են՝ ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության սեռատարիքային և ընտանիքի կառուցվածքը, սոցիալ-մասնագիտական կազմը, որակավորումը ու աշխատանքի ոլորտը:

Երկրորդ նկարում ներկայացված են Հայաստանի հինգ պատմաազգագրական շրջանների քաղաքային և գյուղական բնակչության ուղևորությունների հաճախականության վերաբերյալ տվյալները, որոնք տեղեկատվություն են պարունակում հետազոտության սկզբի և վերջի ժամանակահատվածի մասին (1980 և 2007թթ.):

Նկ.1.2.

1980 և 2007թթ. Հայաստանի պատմաազգագրական շրջանների քաղաքներից և գյուղերից հաճախ մեկնողների քանակը



Երկրորդ նկարից երևում է, որ 1980թ. քաղաքաբնակները, գյուղական բնակչության համեմատ ավելի շատ էին մեկնում Հայաստանից: Դա հավանաբար, պայմանավորված էր քաղաքային բնակչության սոցիալական ակտիվությամբ, որոնք գործնական աշխատանքների, հանգստի և ուսման նպատակներով նախկին միության այլ հանրապետություններ մեկնելու ավելի մեծ հնարավորություններ ունեին: Գյուղական բնակչությունն այդ ժամանակաշրջանում արտագնացության էր դիմում հիմնականում վաստակելու նպատակով, որն ավելի բնորոշ էր Հայաստանի լեռնային և նախալեռնային գոտիների բնակչությանը(21): Գյուղական բնակչությունը, որպես ՀՀ-ից դուրս մեկնելու պատճառ, մեկուկես անգամ ավելի էր նշում «աշխատանքը»: Հայաստանի շրջանների միջև այդ ցուցիչների տարբերությունները պայմանավորվում են տվյալ տարածքում գտնվող քաղաքների մեծությամբ, գյուղական բնակավայրերի ռելիեֆով (հասկանալի է, որ դրա հետ կապված էր ընտանիքի բարեկեցությունն ապահովող պայմանները): 1980թ. Շիրակի և Գեղարքունի գյուղական բնակչության շրջանում սեզոնային աշխատողների քանակը մյուս շրջանների համեմատ ավելի մեծ էր: Ընդ որում, քաղաքի և գյուղի սեզոնային աշխատողների միջև քանակի տարբերությունը Գեղարքունիքի համեմատ Շիրակում ավելի էր արտահայտված: Դա պայմանավորված էր Շիրակում խոշոր քաղաքի՝ Գյումրիի գոյությամբ:

Մոտավորապես երեսուն տարի անց Հայաստանի բնակչության ժամանակավոր տեղաշարժերի նկարագիրն արմատապես փոխվեց: Քաղաքաբնակների շրջանում նկատվում է միգրացիայի ակտիվության անկում, իսկ գյուղի բնակչության

շրջանում, ընդհակառակը, ակտիվության աճ: Հիմնովին փոխվեց նաև այդ միգրացիաների բնույթը: Եթե 1980թ. քաղաքաբնակների շրջանում գերակայող էին գործուղումները, ուսման, հանգստի նպատակով մեկնումները (կարճատև բացակայությունը), ապա 2005-2007թթ. դրանք խիստ նվազեցին և դրա փոխարեն ավելացան սեզոնային մեկնումները: Ինչպես 1980թ., այնպես էլ 2007թ. հանրապետությունից մեկնելու գյուղական բնակչության հիմնական դրդապատճառը արտագնա աշխատանքն էր: Վերջին ժամանակներս դարձավ արտագնացության կտրուկ աճող մասշտաբների միակ պատճառը: Դա պայմանավորվում էր աշխատանքի բացակայությամբ, կենսամակարդակի համատարած կտրուկ անկմամբ, որոնք սահմանափակեցին բնակչության կարճատև մեկնումների հնարավորությունները և նպաստեցին վաստակելու նպատակով այլ երկրներ սեզոնային մեկնումների աճին: Վերջին հետազոտության տվյալների համաձայն, անկախ սոցիալ-ժողովրդագրական հատկանիշներից, ժամանակավոր միգրանտների ճնշող մեծամասնությունը (70-80%) վաստակելու նպատակով հանրապետությունից մեկնում են վեց ամիս և ավելի ժամանակով:

Տարածքային և բնակավայրային կտրվածքով 1.2-րդ և 1.3-րդ նկարների հանրապետությունից դեպի դուրս իրականացվող տեղաշարժերի հաճախականության և բովանդակության գրաֆիկներում երևում է, որ առավել ինտենսիվ փոփոխություններ են կատարվել Շիրակի և Գեղարքունիքի (10-15%) գյուղական բնակչության շրջանում: Իսկ մյուս շրջաններում այդ ցուցանիշն անկում է ապրել: Երկու ժամանակաշրջանների միջև սեզոնային մեկնումների ինտենսիվության առավել մեծ տարբերություն-

նը նկատվում է Այրարատում (ցուցանիշն իջել է համարյա հինգ անգամ), Սյունիքում և Գեղարքունիքում (այն իջել է ավելի քան երեք անգամ): Ամենափոքր տարբերությունը գրանցվել է Շիրակում, որտեղ պահպանվել է այդ ցուցանիշի գրեթե նույն մակարդակը և Լոռիում՝ 5%: Ակնհայտ է, որ ժամանակավոր միգրացիայի ինտենսիվության տարածքային տարբերությունները որոշակիորեն կապված են բնակավայրի հատկանիշների հետ: Դա հաստատվում է նաև այն տվյալներով, որ 1980թ. առավել հաճախ մեկնում էին Երևանի և Գյումրիի բնակիչները, որոնց 60%-ը՝ ամեն տարի և հաճախ: Ամենափոքր ակտիվությունը այդ ժամանակահատվածում դրսևորվել է Ղափանի բնակչության շրջանում, որոնք մեկուկես անգամ պակաս էին հանրապետությունից դուրս մեկնում, ընդ որում, նրանց մեծ մասը՝ 2-3 տարին մեկ անգամ:

1990-ական թվականներին առավել ակտիվություն էր ցուցաբերում փոքր քաղաքների բնակչությունը՝ իջևանցիները և գավառցիները (հարցվողների մոտավորապես երկու երրորդը), այնուհետև երևանցիները և գյումրեցիները (հարցվողների կեսից պակասը) և վերջին տեղում գտնվում էին կապանցիները՝ մեկ քառորդից պակաս: Ընդ որում, այդ ժամանակաշրջանում գավառցիների կեսից ավելին մեկնում էր տարին մեկ անգամ և ավելի հաճախ, իսկ իջևանցիները՝ մեկ աստիճանով պակաս: 2005թ. Իջևանից բացի, բոլոր քաղաքների ցուցանիշները հավասարվեցին 10%-ի մակարդակին, իսկ Իջևանում այն կրկնակի բարձրացել էր:

Տարածքային և բնակավայրի ընդհանուր գործոններից բացի, արտագաղթողների տեղաշարժի վրա ազդում էին նրանց սո-


ցիալ-ժողովրդագրական հատկանիշները, որոնց փոփոխության դինամիկայով հնարավոր է պատկերացում կազմել վերջին երեսուն տարվա ընթացքում Հայաստանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական զարգացման միտումների մասին:

1980 և 2007թթ. երեք սերունդների միգրացիոն ակտիվության տվյալների համադրումը հստակորեն ցույց է տալիս, որ այդ ցուցանիշը բարձրացել է: 1980թ. ցայտուն նկատվում է միգրացիոն վարքի ակտիվության կապը տարիքի հետ: Տարիքի բարձրացմանը համընթաց՝ միգրացիոն ակտիվությունը նվազում է:


Նկ.1.3.

2005-2007թթ. տարին մեկ անգամ և ավելի հաճախ Հայաստանից մեկնող քաղաքային և գյուղական բնակչության բաշխումն ըստ սեռային, տարիքային և սոցիալ-մասնագիտական հատկանիշների

ա/ սեռը և տարիքը



բ/սոցիալ-մասնագիտական կազմը



Նկատելի է նաև տղամարդկանց և կանանց միջև տարբերությունը. տղամարդիկ եռակի անգամ կանանցից ակտիվ են: Միգրացիոն շարժունակության ընդհանուր աճի հետ մեկտեղ և՛ տարիքային, և՛ սեռային կտրվածքով 2007թ. այդ ցուցանիշները մոտենում են: Մոտավորապես նման պատկեր է ուրվագծվել երեք խոշոր սոցիալական խմբերի համեմատության արդյունքում: Որակավորման և կրթական մակարդակի բարձրացմանը համապատասխան աճում է արտագաղթածների տոկոսը:


Որոշ առանձնահատկություն է գրանցվել երկու սոցիալական խմբերի՝ ծառայողների (B խումբ) և մասնագետների (A խումբ) մոտ, որոնք հայտնվել են նույն վիճակում և վաստակելու նպատակով մեկնումների քանակով համարյա կրկնակի գերազանցել են ֆիզիկական աշխատանքով զբաղվողներին (G խումբ): Այդ յուրահատկությունը որոշ չափով զարմանալի էր թվում, քանի որ սովորաբար սեզոնային աշխատանքներում գերիշխում է ֆիզիկական աշխատանքը: Հետևաբար, դրանցում պետք է ներգրավված լինեին հիմնականում ֆիզիկական աշխատանքով զբաղվողները: Սեզոնային միգրացիայի հետ աշխատանքային հմտությունների նման անհամապատասխանությունը առաջին հերթին կարելի է բացատրել նրանով, որ սովորաբար արտագնացության մեջ ներգրավվում են ցածր որակավորման աշխատողները, հետևաբար դրա համար կարևոր չէ, թե մինչ այդ ինչով է նա զբաղվել: Եվ երկրորդ՝ գործազրկության ամենամեծ ծավալները բնորոշ էին հատկապես ծառայողներին և մասնագետներին, որոնք մյուս շերտերի համեմատ ունեֆորմներից և տնտեսական ճգնաժամից ավելի շատ տուժեցին(22): Հավանաբար, դա համատարած երևույթ էր ողջ նախ-

կին միության տարածքում: Երրորդ բացատրությունն այն է, որ բնակչության հատկապես այդ շերտերի համար ավելի դժվար էր աշխատանք գտնելը: Հենց այդ է պատճառը, որ նրանք ձևավորեցին միգրանտների այդ տեսակի բավականին զգալի հատված:


Նկ. 1.4.

Սեռատարիքային խմբերի միգրացիայի դրդապատճառների փոփոխությունը 1980 և 2007 թթ.

ա/տարիքային խմբերի դրդապատճառները



բ/տղամարդկանց և կանանց դրդապատճառները



Միգրացիայի դրդապատճառների կառուցվածքի համադրությամբ, ժամանակի գործոնի և բնակչության տարբեր խմբերի

րի մեկնումների բնույթի միջև բացահայտվեց էական կապ: Դա երևում է նկ. 4-ի գրաֆիկից, որտեղ հստակորեն ընդգծվում է կրթության և հանգստի շարժառիթների կապը միգրանտի տարիքի հետ: Տարիքային խմբերի միջև տարբերությունն առավել մեծ չափով ընդգծվում է աշխատանքի շարժառիթում, որը հատկապես ցայտուն է նկատվում երկրորդ սերնդի շրջանում (30-49 տարեկաններ):

Պարզվեց նաև, որ միգրանտի սեռը նույնպես բավականին կարևոր գործոն է: Եթե 27 տարվա ընթացքում աշխատանքը, որպես մեկնելու դրդապատճառ, տղամարդկանց մոտ ավելացել է շուրջ երկու անգամ, ապա կանանց մոտ այն մնացել է նույն մակարդակի վրա:


Բնակչության միգրացիային, մասնավորապես արտագնացությանը նպաստող պայմանները որոշվում են միգրանտներին «մատակարարող» և «ընդունող» երկրների միջև գոյություն ունեցող բազմաթիվ առանձնահատկությունների ամբողջությամբ, որոնք առ այսօր սակավ են ուսումնասիրվել: Մի երկրից մյուսը բնակչության արտահոսքի-ներհոսքի ողջ պատճառների թվարկումը ծավալուն կլինի: Միևնույն ժամանակ, խնդրահարույց է նաև ըստ նշանակության աստիճանի դրանց տեղադրման տրամաբանությունը որոշելը: Ուստի, դասակարգման սկզբունքներում կողմնորոշվելու համար, նախևառաջ, հարկ է անդրադառնալ արտագնացության ուղղությունների որոշմանը:

Հայաստանում միգրացիայի այդ ձևը հիմնականում ուղղվել է դեպի ՌԴ, նախկին Խորհրդային Միության և հեռավոր արևմտյան երկրները: Հատկապես, այդ ուղղություններով է բացահայտվել այլ երկրներում Հայաստանի բնակչության տարբեր


խմբերի արտագնացության վրա ազդող գործոնների առավել հետաքրքիր ցանկը:

Նկ. 1.5.


Հայաստանի հինգ պատմաագագազրական շրջանների քաղաքների և գյուղերի բնակչության մեկնումների ուղղությունները: Առանձնացվել են ՌԴ, նախկին Խորհրդային Միության և Հեռավոր Արևմուտքի երկրները ըստ՝
ա/ բնակավայրի տիպի և շրջանի



բ/ սեռի և տարիքի



գ/ սոցիալ-մասնագիտական կազմի



Սկզբում որոշվել է քաղաքաբնականների համեմատությամբ գյուղական բնակչության արտագնացության առավել «նեղ» ուղղվածությունը: Վերջիններիս շարժուն օղակի ճնշող մեծամասնությունը, անկախ հետազոտության ժամանակաշրջանից և «ելքի» վայրից, ուղղված է դեպի ՌԴ: Քաղաքաբնականների մոտ, ընդհակառակը, ոչ միայն բավականին լայն է «մեկնելու» երկրների ցանկը, այլև էապես կարևոր է այն քաղաքի տիպը, որտեղ նրանք բնակվում էին:

Մի բան որոշակի է, որ քաղաքի մեծությունն ազդում է սոցիալական կապերի ինտենսիվության և լայնության վրա, որը հնարավորություն է տալիս ընդգրկելու «այցելության» ավելի մեծ թվով երկրներ: Որքան մեծ է քաղաքը, այնքան ավելի բարդ է սոցիալական կառուցվածքը, ուստի և շատ է մասնագիտական բարձր մակարդակ ունեցող մարդկանց քանակը: Դա նրանց հնարավորություն է տալիս պահանջարկ ունենալու և ընդունվելու բարձր որակավորմամբ եկվոր բնակչության կարիք ունեցող հասարակություններում: Դրա հետ մեկտեղ, սեզոնային միգրացիան մեծ մասամբ բնորոշ է այն մարդկանց, որոնց աշխատանքը մի շարք պատճառներով մուտքի վայրի բնակչության շրջանում մեծ հեղինակություն չունի, կամ իր աշխատատարության պատճառով պահանջում է մեծ թվով աշխատողներ, որը տեղերում չի բավարարում: Գոյություն ունեցող պատճառներից է նաև այն հանգամանքը, որ տնտեսական իրավիճակի փոփոխությունների հետևանքով որոշակի տեսակի մասնագիտությունների պահանջարկը մեծանում է, իսկ տեղերում հնարավոր չի լինում տեղական կադրերով լրացնելու այդ բացը: Այդ իսկ պատճառով, ժամանակավոր միգրացիայի


ընտրության շրջանակներն ավելի լայն են քաղաքաբնակների, հատկապես՝ խոշոր քաղաքների բնակչության շրջանում: Այսպես, նկ.1.6-ի երկրորդ գրաֆիկը վկայում է, որ ժամանակավոր միգրացիայի երկրների շրջանակները կախված են միգրանտի սոցիալական հատկանիշներից: Սակայն, այստեղ նույնպես դրսևորվում է որոշակի առանձնահատկություն: Գյումրիի բնակչության մոտ այդ ուղղությունների շրջանակներն ավելի լայն են այն պատճառով, որ փրկարարական և աղետի գոտու վերականգնման աշխատանքների ընթացքում քաղաքի բնակչությունը լայն կապեր է ստեղծել աշխարհի բազմաթիվ երկրների հետ:

Միգրացիոն վարքի որակական հաջորդ ցուցիչը մեկնողների կազմն է, այսինքն՝ ում հետ են Հայաստանի բնակիչները գերադասում գնալ վաստակելու: Հաջորդ նկարում (նկ. 1.6) գյուղի և քաղաքի շարժունակ բնակչության կազմերի միջև նկատելի է բավականին նշանակալի տարբերություն: Թվում էր, որ ավանդական ընտանիքի դիրքորոշում ունեցող գյուղաբնակների շրջանում, ազգականների հետ մեկնողները պետք է որ քաղաքաբնակների համեմատ ավելի շատ լինեին: Սակայն, իրականում գյուղաբնակներն ավելի հակված էին մեկնելու այն մարդկանց հետ, որոնք հետազոտության մեջ նշվել էին որպես հարևաններ, ընկերներ և գործընկերներ:


Սովորաբար, գյուղական միգրանտի ընտանիքի անդամները մնում են գյուղում գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնելու համար, իսկ նա ստիպված է գումար վաստակել ընտանիքից հեռու:

Հայաստանից մեկնողների կազմն ըստ՝


ա/ տարիքի և սեռի



բ/ բնակավայրի տիպի և շրջանի



գ/ սոցիալ-մասնագիտական կազմի



Այն միգրանտները, որոնք բարդ կառուցվածքով ընտանիքի անդամներ են, ձգտում են սեզոնային աշխատանքների մեկնել

հարևանների, ընկերների, գործընկերների հետ, այդ գործընթացին մասնակից չդարձնելով ընտանիքի մյուս անդամներին: Դա պայմանավորված է նրանով, որ բարդ կառուցվածքով ընտանիքն ինքնուրույն գոյատևելու ավելի մեծ հնարավորություններ ունի: Այն պայմանավորված է փոխօգնության ավանդույթով և իրենց ունեցվածքի՝ տան, անասունի և այլն, պահպանման տնտեսական անհրաժեշտությամբ: Այդ կարիքը քաղաքաբնակները չունեն: Նրանք կարող են երկար ժամանակով բնակարանի դռները փակել, չանհանգստանալով դրա գործառնական հատկանիշները պահպանելու մասին:

Վերոնշյալ գործոններն են հիմնականում պայմանավորում քաղաքաբնակների և գյուղաբնակների միգրացիոն վարքի առանձնահատկությունները: Եթե առաջինները մեկնելիս լիովին «կտրվում» են նախկին կյանքից, ապա երկրորդները, հանձինս իրենց ընտանիքի անդամների և հարևանների, «ներկա» են իրենց բնակավայրում: Պատահական չէ, որ 2005-2007թթ. հետազոտության նյութերում նկատվում է միգրանտների սոցիալ-ժողովրդագրական հատկանիշների կապն այն մարդկանց կազմի հետ, որոնց միջոցով տեղի է ունենում վաստակելու նպատակով մեկնումների գործընթացը:

Միգրացիոն մտադրությունները

Բնակչության միգրացիոն մտադրություններն արտահայտում են Հայաստանում ձևավորված տնտեսական, ինչպես նաև սոցիալ-քաղաքական իրավիճակը: Երկու հետազոտությունների միջև ընկած ժամանակահատվածում, անկախ բնակավայրի

տիպից և սոցիալ-ժողովրդագրական հատկանիշներից, հանրապետությունից մեկնելու մտադրություն ունեցող անձանց քանակը քառակի աճել է: Հայաստանի բնակչության միգրացիայի աճի այս ընդհանուր ֆոնի վրա, այդ պահանջմունքի ձևավորման խմբային առանձնահատկությունների վերաբերյալ արձանագրվեցին բավականին հետաքրքիր փաստեր: Այս կապակցությամբ պետք է հաշվի առնել, որ արտամղման միևնույն գործոնները բնակչության խմբերի մի մասի համար կարող են հիմնական դեր կատարել, իսկ մյուսների համար՝ երկրորդական:

Միգրացիայի խթանների նկատմամբ բնակչության վերաբերմունքը ընտրովի է, քանի որ, այնուամենայնիվ, միևնույն գործոնների նկատմամբ արձագանքը կարող է տարբեր լինել և ունենալ ինչպես խոր անձնական, այնպես էլ՝ խմբային բնույթ: Մրանից բխում է, որ դրդապատճառների կառուցվածքի կախվածությունը միգրացիոն գործընթացի մասնակցի հատկանիշներից պետք է օրինաչափ լինի: Այս թեզը հիմնավորելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այն անձանց շարժառիթների կառուցվածքի փոփոխությունների դինամիկային, որոնք նպատակ ունեին Հայաստանից մեկնելու 1980 և 2005-2007թթ. միջև ընկած ժամանակահատվածում:

Սկզբում հարկ է նշել, որ ՀՀ ողջ բնակչության համար հիմնական գործոններն են տնտեսական ճգնաժամը, քաղաքական ռեֆորմները, շրջափակումը և մասնագետների ու փորձագետների կողմից հաճախ նշվող այլ երևույթներ: Երեք էթնոսոցիոլոգիական հետազոտությունների տվյալների համաձայն՝ նկատվում է աշխատանքի, ծանր նյութական վիճակի և այլ դրդապատճառների աճ: 1980թ. գերիշխող դրդապատճառներ էին

վատ կենցաղային պայմանները, որը հավասար չափով զգում էին և՛ քաղաքացիները, և՛ գյուղացիները, ինչպես նաև հոգևոր պահանջմունքները (դրանք գրանցվել են «այլ» դրդապատճառների խմբում): 1993թ. վերոհիշյալներից բացի, առաջին պլան են մղվում այն դրդապատճառները, որոնք արտացոլում էին հարցվողների նյութական վատ վիճակը և անպաշտպանվածությունը: Իսկ 2005թ. առավել կարևոր դարձան աշխատանքի և կենցաղային անբարեկարգ վիճակի գործոնները: Ժամանակի ընթացքում տղամարդկանց և կանանց, տարբեր տարիքային խմբերի միջև դրդապատճառների կառուցվածքների մոտեցումը դարձավ ընդհանուր միտում:

Դրդապատճառների կառուցվածքի այսպիսի ընդհանուր բնույթի փոփոխություններից բացի, նկատվել են նաև որոշ առանձնահատկություններ: Նշված գործոնների թվում առավել ակնհայտը աշխատանքի բացակայությունն է, որին հավասարապես արձագանքում են բնակչության բոլոր խմբերը: Գյուղում այն ավելի է զգացվում, քան քաղաքում: Դա տրամաբանական է, քանի որ նորանկախ Հայաստանում իրականացված ռեֆորմներից առավել մեծ չափով տուժեց գյուղը: Հողի սեփականաշնորհումը, կոլտնտեսությունների ցրումը, սովխոզների և այլ գյուղատնտեսական խոշոր ձեռնարկությունների լուծարումը, գյուղի կառավարման համակարգի ռեֆորմները և այլն կորստի մատնեցին գյուղի սոցիալական կառուցվածքի զգալի հատվածը: Միևնույն ժամանակ, արդյունաբերության խիստ անկման հետևանքով, գյուղի բնակչությունը կորցրեց աշխատատեղերը քաղաքներում, որտեղ ժամանակին կլանվել էր գյուղի աշխատանքային ներուժի ավելցուկը: Տնտեսական ճգնա-

ժամի պատճառով, վերոնշյալ գործոնին ավելանում է նաև կեն-
ցադամշակութային անհարմարավետությունը, որը զգում են
գյուղի բնակիչները ինչպես 1980թ., այնպես էլ՝ 2007թ.:

Գյուղաբնակները տարբերվում են քաղաքաբնակներից նաև
նրանով, որ նրանց մոտ համարյա չեն գրանցվել «շփման պա-
կասը», «անպաշտպանվածության զգացումը» և նմանատիպ այլ
շարժառիթներ: Դա բացատրվում է նրանով, որ գյուղական
կյանքի առավել կարևոր տարրերից է համայնքը (ազգակցա-
կան, հարևանական), որտեղ բնակիչն իրեն զգում է ընտանիքից
ավելի մեծ հանրության մաս, և որը նրա մասին հոգ է տանում:
Այստեղ նրա գոյությունը բավականին հարմարավետ է:


Դրդապատճառների կառուցվածքի առանձնահատկություն-
ները պայմանավորող հաջորդ գործոնը հարցվողի սոցիալ-
մասնագիտական հատկանիշն է:

Դա բացատրում է հոգևոր բովանդակություն ունեցող դրդա-
պատճառների կախվածությունը անձի որակավորումից և
կրթությունից: Որքան բարձր է կրթական մակարդակը, այնքան
շատ են այդ կարգի դրդապատճառները:


Միգրացիոն մտադրությունների փոփոխությունների դինա-
միկան և դրանց ձևավորման պատճառների բացատրություննե-
րը հնարավորություն են ընձեռում կանխատեսելու սպասվող
իրավիճակը և ուրվագծելու բնակչության տարածքային տեղա-
շարժերի զարգացման հեռանկարները: Երեսնամյա ժամանա-
կահատվածի տվյալների համադրումը նպաստում է միգրա-
ցիոն գործընթացների զարգացման բնույթի և դրանք պայմա-
նավորող գործոնների բացահայտմանը:

ۛۛ.1.7.


Հայաստանի քաղաքային, գյուղական բնակչության սոցիալական և ժողովրդագրական խմբերի արտագաղթելու մտադրությունների դրդապատճառներն ըստ՝
ա/բնակավայրի տիպի



բ/տարիքի




գ/սենի




Նկ.1.7.

Շարունակություն

դ/սոցիալ-մասնագիտական կազմի



Ե/միգրացիայի ուղղությունների



Դրանցից յուրաքանչյուրի դերը ուղղակիորեն կապված է բնակչության տարբեր շերտերի ներկայացուցիչների կենսապայմանների փոփոխությունների և դրանց նկատմամբ ընտրողական վերաբերմունքի հետ: Կոնկրետ միգրացիայի և այն ձևավորող գործոնների փոխադարձ կապերի ուսումնասիրման համար դա կարևոր ելակետ է:

Այսպիսով՝ հայ բնակչության միգրացիան, որպես հին և նոր ափյուրքների ձևավորման հիմնական աղբյուր, խթանվել է քա-

ղաքական, տնտեսական, սոցիալական, էթնիկական բնույթի բազմաթիվ գործոններով:

Պատմական կոնկրետ ժամանակաշրջանում դրանց մի մասը դառնում է գերիշխող, մյուսները հետին պլան են մղվում: Դրանցից առաջինները էթնիկ հողի հիման վրա իրականացվող հալածանքներն էին (եղեռնը, զանգվածային ջարդերը), որոնք XX դարի սկզբում և վերջում Արևմտյան Հայաստանից, Ղարսի նահանգից, Գարդմանից, Գանձակից, Բաքվից հայերի զանգվածային գաղթի պատճառ դարձան: Էթնիկ բնույթի գործոնների թվին կարելի է դասել նաև ռեէմիգրացիան՝ արտասահմանյան երկրներից, հարևան հանրապետություններից հայրենիքում վերաբնակվելու հայերի զգալի հատվածների ձգտումը: Առաջավոր և Մերձավոր Արևելքի երկրներում՝ Լիբանանում, Իրաքում, Սիրիայում, տեղի ունեցող ճգնաժամային երևույթները (պատերազմներ, դավանաբանական բախումներ, գունավոր հեղափոխություններ) նույնպես պայմանավորեցին հայերով հոծ բնակեցված այդ երկրներից հայ ազգաբնակչության արտագաղթին:

Սոցիալական, տնտեսական և քաղաքական բնույթի գործոնները դրսևորվում էին Հայաստանում և նրա սահմաններից դուրս ընթացող գործընթացների համատեքստում: Վերաբնակման երկրում տնտեսական փոփոխությունները և դրանց հետ կապված հայ ազգաբնակչության շրջանում տեղի ունեցող սոցիալական տեղաշարժերը (սեփական և այլէթնիկ միջավայրերում) նպաստեցին ներքին և արտաքին միգրացիոն հոսքերին: Վերը ներկայացված տվյալները ցույց տվեցին, որ հայ ազգաբնակչության տեղաշարժերի բոլոր տեսակները պայմանավոր-

ված են այդ գործընթացին նպաստող ներքին և արտաքին բնույթի գործոններով: Արտաքին բնույթի գործոնները ձևավորվում են մարդկանց կյանքի պայմանների, աշխատանք ունենալու, տնտեսական ու քաղաքական ազատությունների անվտանգության և նմանատիպ այլ երևույթների ազդեցությամբ, որոնք իրենց հերթին ստեղծում են ներհոսքի և արտահոսքի խթաններ:

Ակնհայտ է, որ Հայաստանում կյանքի պայմանները ենթարկվեցին լուրջ ձևափոխումների: Առաջին Հանրապետության շրջանում Հայաստանը դարձավ հսկայական թվով փախստականների կենտրոնացման վայր: Այդ ժամանակաշրջանում նրա բնակչությունը բավականին փոփոխական էր: Բազմաթիվ ականատեսների վկայությունները, հետազոտողների աշխատանքները և վիճակագրական նյութերն ապացուցում են, որ այդ ժամանակ հանրապետությունում նկատվում էին բնակչության քանակի կտրուկ անկումներ: Երկրորդ Հանրապետության զարգացման ընթացքում Հայաստանը դարձավ այն վայրը, որտեղ ձգտում էր տեղափոխվել հայությունը: 70 տարում Հայաստանի Երկրորդ Հանրապետության բնակչությունը չորս անգամից ավելի աճեց և բարդացավ նրա սոցիալական կառուցվածքը: Եթե առաջին տարիներին գործում էին այնպիսի կենտրոնախույս գործոններ, որոնք նպաստում էին բնակչության արտահոսքին, ապա այնուհետև սկսեցին գործել կենտրոնաձիգ գործոնները, որոնք օժանդակում էին ներհոսքին: Երրորդ Հանրապետության շրջանում բազմաթիվ հայտնի գործոնների ազդեցությամբ ստեղծված պայմանները դարձան բնակչության արտահոսքի պատճառ: Այսպես, բնակչության մի մա-

սը ապրելու միջոցներ ձեռք բերելու նպատակով դիմում է արտագնացությանը: Դա հատկապես բնորոշ է գյուղացիությանը: Արտասահմանում նրանց ազգականների քանակը համեմատաբար սահմանափակ է և Հայաստանից մեկնելուն նրանք ավելի սակավ են հակված: Նրանց արտահոսքը կանխող գործոններից են ոչ միայն արմատներին կապվածությունը, այլև քաղաքաբնակների համեմատ նոր և բազմազան սոցիալական միջավայրի ընկալման բարդությունները: Պատահական չէ, որ գյուղաբնակների համեմատ քաղաքաբնակների շրջանում էմիգրացիոն տրամադրություններն ավելի տարածված են, իսկ նախասիրություններն ավելի բազմակողմանի: Ընդհանուր բնույթի գործոնների (գործազրկություն, կենցաղային կարգավորվածությունը և այլն) նկատմամբ ընտրողական մոտեցումը բնորոշ է նաև սոցիալ-ժողովրդագրական խմբերին: Այստեղ նկատվում է վերը ներկայացված նույն պատկերը: Որքան բարձր են Հայաստանի բնակչության որակական հատկանիշները, որոնց մեջ ըստ Պ. Սորոկինի մտնում են տարիքը, կրթության և որակավորման մակարդակը(22), այնքան ավելի լայն են ուղղությունների շրջանակները, բազմաթիվ են կենսապայմանները փոխելու պահանջմունքները, արագ են ընթանում ինտեգրման գործընթացները և այլն: Այս ամենը պայմանավորել է հայկական նոր սփյուռքի ձևավորման մասնակիցների որակական, սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները և հոգևոր ներուժը:

Ծանոթագրություններ

1. Բնակչության վերջին մարդահամարի տվյալների համաձայն Հայաստանում բնակվում է 3145 հազ. մարդ: Տե՛ս <http://www.med-practic.com/arm/index.html>:
2. Брук С.И. Населения Мира. Этнодемографический сборник. М.Найка. 1986, с.792.
3. Քեշիշյան Պ., Հայերի միջհանրապետական տեղաշարժերը ՍՍՀՄ-ում, ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններ» ամսագիր, 1978, N 12:
4. «Հայկական գաղթի օջախներ» հասկացությունը շրջանառության մեջ է դրել հայկական սփյուռքի ականավոր հետազոտող Ա. Ալպոյաջյանը, որի եռահատոր հիմնարար աշխատությունն այդպես էլ վերնագրվել է Ալպոյաջյան Ա., Հայ գաղթօջախների պատմությունը. Կահիրե, 3 հատոր, 1947-1951: Մենք կարծում ենք, որ գաղթի օջախներ հասկացությունն ավելի ճշգրիտ է բնորոշում այդ երևույթը:
5. Հայ Սփյուռք. Հանրագիտարան, Երևան 2003:
6. Ալպոյաջյան Ա., նշված աշխատությունը: Հայ Սփյուռք. Հանրագիտարան....:
7. Ходжабемян В.Е. Население Армении и его занятость. (1828-1978гг.) АН АрмССР. Ереван, 1979, с.188
8. Տե՛ս <http://geography.su/books/item/f00/s00/z00000005/st054.shtml> / Как изменилась география населения СССР/:
9. Մելիքսեթյան Հ.Ու., «Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստանում», Երևան. ԵՀՀ, 1975, էջ 24:
10. Տե՛ս նույն տեղում:
11. 119,3 հազ. մարդ կամ ամբողջ բնակչության 1,3%-ը: Աղբյուրը՝ <http://www.stat.gov.az/source/demography/ap/indexen.php>.
12. Որոշ տվյալների համաձայն՝ հայերի շրջանում նրանց թիվը կազմել էր մոտավորապես 300 հազ. մարդ: Տես՝ armyane.ucoz.ru/publ/2-1-0-27/:

13. Հաշվարկվել է ըստ 1970թ. բնակչության մարդահամարի նյութերի: Итоги Всесоюзной Переписи населения 1970 года. Т.VII, М., 1974, с. 6-7; 150-152.
14. Տե՛ս նույն տեղում:
15. Այդ բառից է առաջացել այն արտագնա աշխատողների հայկական անվանումը՝ խոպանչի, որոնք վաստակելու նպատակով Հայաստանից դուրս էին մեկնում 6-9 ամիս տևողությամբ:
16. Итоги Всесоюзной Переписи населения 1970 года. Т.VII, М., 1974, с. 6-7; 150-152.
17. 119,3 հազ. մարդ կամ ամբողջ բնակչության 1,3%-ը: Աղբյուրը՝ <http://www.stat.gov.az/source/demography/ap/indexen.php>.
18. Sociological survey among compactly settled groups of refugees and displaced persons in Armenia. The survey was conducted by working group of "Refugees and displaced persons", that works in frames of the programm for preparing specialists in sphere of migration of IOM. Headed by Dr.R. Karapetian. The following people are included: Dr. L. Kalian, J. Hovakimian, S. Hakobian, L. Pogolian, V. Agayan, A. Haroutunian. Yerevan, 1998, p. 2-3.
19. <http://theanalyticon.com/?p=2327>.
20. www.armstat.am, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 1995-2011:
21. Գալստյան Մ. Արտագնացությունը (Հայաստանում XIX-դարի երկրորդ կես- XX դարի 80-ական թթ.) Հայ ազգագրություն և բանահյուսություն, ՀՀ ԳԱԱ, Գիտություն, Եր. 2009, 7-88 էջ:
22. Դրա մասին են վկայում էթնոսոցիոլոգիական նյութերը, որոնք ներկայացված են Կարապետյան Ք.Ս., Миграция в городах Армении. Этносоциологические исследования, Ереван, Гитуттюн, 2013, աշխատության 3 բաժնի 2 գլխում:
23. П.А. Сорокин, Система социологии, Астрель, 2007, с.143.

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՍՓՅՈՒՌՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայկական նոր սփյուռքի ձևավորման գործընթացի հիմնական բնորոշ գծերն են եղել բնակության ավանդական գոտիներից (միջինասիական հանրապետություններից, Անդրկովկասից, Միջին և Մերձավոր Արևելքի երկրներից) վերջին քսան տարում հայերի ակտիվ արտահոսքը և էթնոսի բնակության հին ու նոր տարածաշրջաններ (ՌԴ, ԱՄՆ, Կանադա, եվրոպական երկրներ) ներհոսքը, որի ընթացքում «յուրացվում» էին էթնոսոցիալական նոր տարածքներ: Նշված հարցին առնչվող խնդիրներին ուշադրություն են հատկացնում բազմաթիվ քաղաքական, հասարակական գործիչներ, գիտնականներ և լրագրողներ: Այս կարևոր թեմատիկային նվիրված բազմաթիվ հրապարակումների ամփոփումը ցույց է տալիս, որ դրանցում առկա տեղեկատվական ռեսուրսը(2) ոչ լիարժեք է և կարիք է զգում տեղեկատվության լրացուցիչ աղբյուրների: Դրանց թվում բավականին խոստումնալից է արտագաղթածների հետ բարեկամական կապեր ունեցող Հայաստանի բնակիչների տեղեկատվական ռեսուրսը(2), որն առ այսօր գիտական հետազոտություններում ուշադրության չի արժանացել:

Իրականությունը պատկերելու այս աղբյուրի տեղեկատվության հավաստիության նկատմամբ թերհավատություն կարող է առաջանալ այն պարզ պատճառով, որ Հայաստանը կարող են լքած լինել ամբողջ ընտանիքներ, որոնք կարծես թե հետք չեն թողնում հասարակության հիշողության մեջ: Հետևաբար այդպիսի ծավալներ ստացող միգրացիայի հետևանքով

հանրապետության բնակչության կառուցվածքում կարող են անվերադարձ անհետանալ ամբողջ շերտեր՝ ընտանիքներ, սոցիալական, ժողովրդագրական և այլ խմբեր: Պատկերավոր արտահայտվելով, այն կարելի է համեմատել մաղի հետ, որտեղ առաջանում են նոր անցքեր, որի պատճառով կարող է բարդանալ բնակչությունից քաղված տեղեկությունների հիման վրա պատմական իրողությունները վերականգնելը: Այս առումով պետք է հաշվի առնել բավականին ամուր ազգակցական ավանդույթների առկայությունը Հայաստանում: Ազգակցական խմբերի ճյուղավորված ցանցի գոյությունը, որոնց ներսում բավականին ինտենսիվ գործում է տեղեկատվության փոխանակումը կարող է հնարավորություն ընձեռել արտագաղթածների մասին տեղեկատվություն ստանալ Հայաստանում գտնվող բարեկամների միջոցով: Ընդ որում, այստեղ կարևոր չէ, թե ինչ կարգի ազգականներ են արտագաղթածները և Հայաստանում բնակվողները: Ամեն դեպքում, երկիրը լրածներից յուրաքանչյուրն իր «հետքն» է թողնում մոտ և հեռու ազգականների հիշողության մեջ: Դրանից բացի, միջազգակցական ուղիներով տեղեկատվության փոխանակումն այսօր նույնպես տեղեկություններ է մատուցում բնակչության երկրում էմիգրանտի վիճակի մասին: Այդ իսկ պատճառով, «Ձեր մոտ ազգականներից ո՞վ է ապրում Հայաստանից դուրս» հարցը, որը տրվում է ստանդարտացված հարցազրույցի ընթացքում, խոր իմաստ է ստանում, քանի որ ինչպես արդեն ցույց են տվել մեր հետազոտությունները(3), այդ ազգակցական խմբի մեջ ընդգրկվում են նաև հեռու ազգականները: Դա էլ հնարավորություն է տվել Հայաստանում իրականացված էթնոսոցիոլոգիական հետազոտությունների

ընթացքում արտագաղթածների ազգականներից ստացված տեղեկատվության հիման վրա նորովի իմաստավորել ոչ վաղ անցյալում տեղի ունեցած գործընթացները, մասնավորապես նոր սփյուռքի ձևավորման բնույթը:

Հայաստանից դուրս բնակվող հարազատների մասին տեղեկատվությունը, որն ստացվել է հարցվողներից, պարունակում է տվյալներ նաև ազգակցության աստիճանի, այլ երկրում նրանց բնակության ժամկետի ու ձեռքբերումների մասին: Այն թույլ է տալիս ուրվագծելու նոր սփյուռքի ձևավորման իրական մասշտաբները ոչ միայն իրականացված հետազոտությունների ժամանակագրական շրջանակներում, այլ նաև դրան նախորդող տասնամյակը:

1980 և 2005/2007թթ. իրականացված երկու էթնոսոցիոլոգիական հետազոտությունների տվյալներով մոտ երեսուն տարում Հայաստանի քաղաքային բնակչության արտագաղթած ազգականների և բարեկամների թիվն աճել է երկու, իսկ գյուղական բնակչությանը՝ չորս անգամ: Այդ ժամանակաընթացքում փոխվել է նաև էթնոսի տարաբնակության ընդհանուր կառուցվածքում գտնվող երկրների կազմը: Երկու անգամ աճել է ՌԴ և արևմտյան երկրների ներկայությունը: Եթե քաղաքաբնակների մոտ այդ համամասնությունը ՌԴ-ում ավելացել է երկու անգամ, ապա գյուղական բնակչության շրջանում այն եռակի աճել է:

Քաղաքաբնակների արտագաղթած ազգականների հնգապատիկ աճը նկատվում է նաև արևմտյան երկրներում (Եվրոպայում և Ամերիկայում): Միննույն ժամանակ կտրուկ նվազել է ՆԱԵրկրների մասնաբաժինը: Դա հասկանալի է, քանի որ նախկին միությունը Հայաստանի Հանրապետության բնակ-

չությունն ավելացնող կարևոր աղբյուր է և այդ երկրներում բնակվող ազգականներն ու բարեկամները համարվում են տեղաբնակներ, կամ առնվազն հնաբնակներ: Այս հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ հայկական նոր սփյուռքի ձևավորման գործում ՆՄ երկրներն էական դեր են կատարում: Հավանական է, որ ՌԴ, ԱՄՆ և Եվրոպայի հայկական նոր համայնքների կազմում այժմ կան Հայաստանից, Հյուսիսային - Կովկասից, Ադրբեջանից, Վրաստանից, միջինասիական հանրապետություններից, Մերձավոր և Միջին Արևելքից գաղթածներ: Նոր համայնքների ձևավորման նման խայտաբղետությունը պահանջում է սփյուռքի զարգացման ուղիների իմաստավորման նկատմամբ ցուցաբերել համակարգային մոտեցում, որը կներառի տնտեսական, սոցիալական և հոգևոր բաղադրիչները:

Այս համատեքստում հետաքրքրություն է ներկայացնում նաև Հայաստանի բնակչության հետ արտագաղթածների արյունակցական կապի մտերմության աստիճանը: Ուստի, հարկ է լուսաբանել հետևյալ հարցերը. կան արդյոք արտագաղթողների շրջանում. ա/ վայրընթաց գծով ազգականներ՝ ծնողներ և երեխաներ, բ/ կողմնային գծով ազգականներ՝ եղբայրներ և քույրեր, գ/ հեռու ազգականներ՝ հորեղբայր, քեռի, հորաքույր, մորաքույր և այլն(4):


Նման մոտեցումը ազգակցության դասակարգման համար պայմանավորված է մի շարք պատճառներով: Դրանցից առաջինը թելադրվել է արյունակից ազգականների տարածքային մասնատվածության մակարդակի գրանցման անհրաժեշտությամբ (ներառյալ ընտանիքի անդամները), որը հնարավորու-

թյուն է տալիս ստանալու լրացուցիչ գործնական տվյալներ, որոնց հիման վրա կարելի է դատել էթնոսի հետ կատարվող ողջ միգրացիոն գործընթացների հեռանկարների մասին:

Ակնհայտ է, որ մասնատված ընտանիքների վերամիավորման պահանջմունքը կարող է անդրադառնալ հետագա տեղաշարժերի համապատասխանաբար նոր անդամներով սփյուռքը համալրելու արագության վրա: Հնարավոր է նաև հակառակ գործընթացը, այսինքն՝ հետ վերադառնան արտագաղթածները:

Նկ.2.1.

Հայաստանից դուրս բնակվող ՀՀ բնակչության ազգականների տեղաբաշխումը տարբեր երկրներում (ՆՄ – նախկին միություն, ՌԴ – Ռուսաստանի Դաշնություն, ԱԵ – արևմտյան երկրներ)
ըստ 1980, 1993 և 2005 թթ. հետազոտության տվյալների



Երկրորդ պատճառը պայմանավորված է այն հանգամանքով, որ արյունակցական կապերի մտերմության աստիճանն ինքնին կարող է դառնալ պետական սահմաններով իրարից բաժանված հարազատների միջև կապերի չափորոշիչ: Դրանով

կարելի է որոշել նրանց միջև տեղեկատվության փոխանակման հաճախականության, փոխօգնության, փոխըմբռնման և այլ գործընթացների էությունը:

Երրորդ պատճառն այն է, որ անհրաժեշտ է բացահայտել ազգակցական հարաբերությունների ձևափոխման վրա ազդող այն գործոնները, որոնք առաջացել են միգրացիայի հետևանքով և որոշել դրանցից յուրաքանչյուրի տեղը ողջ համակարգում: Այդ գործոնների թվում հարկ է ընդգրկել ազգակցական խմբերի միջև տարածքի հեռավորությունը, արտագաղթածների համար նոր միջավայրի մշակութային առանձնահատկությունները, հարցվողների և նրանց արտասահմանում բնակվող ազգականների բարեկամական զգացմունքների ուժը, հեռու և մոտ հարազատների ու բարեկամների շրջանակները:

Երկրորդ գրաֆիկը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել այն մասին, թե հայրենիքը լքած որքան ազգականներ ունեն քաղաքի և գյուղի բնակչության երեք սոցիալ-մասնագիտական խմբերը: Սկզբում հարկ է նշել, որ գյուղի բնակիչները, քաղաքաբնակների համեմատ ավելի սակավ են հակված մասնատելու ընտանիքը:


Այս եզրակացության ճշմարտացիությունը հաստատում է այն փաստը, որ գյուղաբնակների արտագաղթած ազգականների քանակը քաղաքաբնակների համեմատ մեկուկես-երկու անգամ պակաս է:

Դրանից բացի, քաղաքաբնակների համեմատ, գյուղաբնակները մեկուկես անգամ պակաս ունեն հայրենիքից հեռացած մոտ հարազատներ (ծնողներ, երեխաներ) և հինգ անգամ պակաս՝ հեռու ազգականներ: Ընդհանուր առմամբ, արտասահմա-

նում գտնվող Հայաստանի բնակչության ազգականները կողմնային գծով են:

Նկ. 2.2.

Հայաստանի քաղաքներում և գյուղերում բնակվող ազգականների հետ արտագաղթածների կապի աստիճանը: Ներկայացվում է ըստ սոցիալ-մասնագիտական խմբերի




Ընդ որում, հանրապետության գյուղական բնակչության շրջանում արտագաղթածների հետ ազգակցության ձևերի սոցիալական առանձնահատկությունները, քաղաքաբնակների համեմատ, ավելի շոշափելի են: Բացի այդ, առանձին սոցիալական խմբերի արտագաղթած ազգականների տեսակները բավականին տարբեր են: Քաղաքային բնակչության ծառայողների և հիմնականում ֆիզիկական աշխատանքով զբաղվողների խմբերը, գյուղաբնակների համեմատ, դրսում գտնվողների մեջ երկու անգամ ավելի շատ վայրընթաց գծով ազգականներ ունեն և երեք անգամ ավելի՝ հեռու ազգականներ: Այսպիսով արտագաղթածների ազգակցական կապի մտերմության աստիճանը հայրենիքում բնակվողների հետ կախված է վերջիններիս սոցիալական և բնակավայրային առանձնահատկություններով:

Էմիգրացիայի երկրների շարքում ՌԴ գերակայության ընդհանուր ֆոնի վրա (ազգականների 60-90 տոկոսը), այնուամենայնիվ, Հայաստանի քաղաքային և գյուղական բնակչության արտագաղթած ազգականների բնակչության երկրների մասնաբաժինը էապես տարբեր է: (Տե՛ս նկ.2.3):

Նկ. 2.3.

Հայաստանի քաղաքային և գյուղական բնակչության սոցիալ-մասնագիտական խմբերի հարազատների Էմիգրացիայի երկրների բաշխումը



Եթե այդ երկրում ազգականներ ունի քաղաքային բնակչության 60-67%-ը, ապա գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 90-95 %-ը: Ընդ որում, սոցիալ-մասնագիտական խմբերի միջև էական տարբերություններ չեն նկատվում: Միայն, հիմնականում ֆիզիկական աշխատանքով զբաղվող խմբերի տոկոսը որոշ չափով բարձր է: Այլ երկրներում երեխաներ ունեցողների տվյալները գյուղի և քաղաքի միջև նույնպես մոտ են:




Ըստ առանձին երկրների՝ արտագաղթածների հաջորդ հատկանիշը Հայաստանի բնակչության հետ արյունակցական-

ազգակցական կապերի մտերմության աստիճանն է: Նկար 2.4-ի գրաֆիկները հիմնված են ազգակցության կառուցվածքի տվյալների վրա ըստ բնակության երկրների և տարածաշրջանների:




Նկ.2.4.

Հայաստանի քաղաքային և գյուղական բնակչության հետ
Էմիգրանտների ազգակցության աստիճանն
ըստ գտնվելու երկրի

ա/քաղաքային բնակչություն



բ/գյուղական բնակչություն



Դրանցում նկատվում է, որ եթե քաղաքային բնակչության շրջանում արտագաղթածների հետ ազգակցական կապերի նշված տիպերը բաշխված են հավասարաչափ (դրանցից յուրաքանչյուրը 27-35 տոկոսի սահմաններում), ապա գյուղաբնակների մոտ գերակշռում են կողմնային գծով ազգականները (երկու երրորդից ավելին):

Երկրից հեռացած ազգականների քառորդ մասը հորեղբայրներն ու հորաքույրներն են և մնացած փոքր մասը՝ վայրընթաց գծով ազգականները (տե՛ս նկ. 2.4.): ՆՄ-ում կողմնային գծով ազգականների բաժինը քաղաքաբնակների մոտ կիսով չափ նվազում է, իսկ գյուղաբնակների շրջանում այն ընդհանրապես բացակայում է: Հայաստանի բնակչության այդ առաջին խմբի մոտ մնացած երկու տիպը հավասարապես կազմում են քառորդ մասը: Իսկ գյուղաբնակների ազգականների երկու երրորդը հեռու ազգականներ են և մեկ երրորդը՝ վայրընթաց գծով ազգականներ:

Փոքր-ինչ այլ կերպ են բաշխված քաղաքի և գյուղի բնակչության ազգականներն արևմտյան երկրներում: Առաջինների շրջանում հեռու ազգականները կազմում են 40%, մնացած 60%-ը մոտ ազգականներ են: Գյուղի բնակչության շրջանում ճնշող մեծամասնությունը կողմնային գծով ազգականներն են: Սոցիալական ցուցիչները բնակավայրի հատկանիշի հետ մեկտեղ բավականին ցայտուն են արտահայտվում Արևմուտքի երկրների միգրացիոն գործընթացներում: Այդ երկրներ արտագաղթած ազգականների քանակը կախված է ինչպես բնակավայրի տիպից, այնպես էլ՝ հանրապետության բնակչության սոցիալական դիրքից: Ընդհանուր առմամբ քաղաքաբնակները,

գյուղաբնակների համեմատ, հինգ-վեց անգամ ավելի շատ արտագաղթած ազգականներ ունեն: Արևմուտքի երկրներն ավելի շատ են ներկայացված «առաջխաղացում» ունեցող սոցիալական խմբերում (ծառայողներ և մասնագետներ): Ընդ որում, քաղաքային բնակչության համեմատ, գյուղաբնակների սոցիալական տարբերություններն ավելի վառ են արտահայտված:


Որպեսզի պարզաբանվի Հայաստանի բնակչության հետ արտագաղթածների ազգակցության մոտ լինելու աստիճանի և գտնվելու երկրի միջև փոխադարձ կապերի ողջ նրբությունները, պետք է անդրադառնալ այն երկրների մասին տեղեկություններին, որտեղ գտնվում են մոտ և հեռու ազգականները: Հեռու ազգականների ամեմամեծ քանակը արևմտյան երկրներում է, իսկ ամենափոքրը՝ ՌԴ-ում և ՆՄ-ում: Հայաստանի բնակչությունը ամեմամեծ չափով կողմնային գծով ազգականներ և երեխաներ ունի ՆՄ երկրներում և ՌԴ-ում: Ընդ որում, Հայաստանի բնակչության հետ արտագաղթածների ազգակցության մտերմության աստիճանի և տեղում գտնվելու ժամանակի միջև նկատվում է ուղիղ կապ: Որքան երկար է այլ երկրում բնակվելու ժամանակահատվածը, այնքան հեռու է ազգակցության կապի մտերմության աստիճանը: Եվ դա բնական է:

2000 թվականից հետո տեղի ունեցած էմիգրացիայի վերջին փուլի ընթացքում (մինչև 5 տարի), արտասահմանում գտնվելու ժամկետի առումով և՛ քաղաքաբնակները, և՛ գյուղաբնակներն ունեն հավասար համամասնություն: Նրանցից յուրաքանչյուրի 2003-2005թթ. անվերադարձ մեկնածների քանակը կազմում է մոտավորապես 5%: Այնուհետև, 2000-2002թթ. երկու խմբերն էլ հավասարաչափ ավելանում են երկու անգամ: Կտրուկ փոփո-

խություններն սկսվում են 1995-2000թթ., երբ գյուղաբնակների մոտ արտագաղթած ազգականների բաժինն աճում է շուրջ 7-8, իսկ քաղաքաբնակներինը՝ երկու անգամ: Ամենայն հավանականությամբ, այս փոփոխությունը հանրապետության գյուղական օղակի միգրացիոն ակտիվության զագաթնակետն անկում է ապրում:

Նկ. 2.5.

ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության հարազատների և ազգականների Հայաստանից դուրս գտնվելու ժամանակաշրջանը




1995թ. էմիգրացիոն հոսքում ավելի մեծ չափով ընդգրկված է քաղաքային բնակչությունը (այդ միգրացիոն հոսքի քառորդ մասը), քան գյուղականը (մոտ 12-15%): Այսպիսով, գյուղաբնակների միգրացիոն ակտիվության դինամիկային բնորոշ են կտրուկ անկումներ:

Սկզբնական շրջանի հանդարտ աճին հետևում է կրկնակի թփալսում, այնուհետև ավելի կտրուկ՝ հինգ-վեց անգամ աճը, իսկ

վերջում իջնում է հինգ անգամ: Քաղաքաբնակների մոտ նման թոփչքներ չեն նկատվում: Որքան վերջին հարցումներից ժամանակահատվածը հեռու է, այնքան մեծ է նրանց բաժինը: Ընդ որում, այդ աճը տեղի է ունենում բավականին սահուն:


Նկ. 2.6.

Տարբեր երկրներում էմիգրանտների գտնվելու ժամանակահատվածը (ըստ ազգականների տեղեկատվության)




Բնակության երկրների միգրացիոն հոսքերի ժամանակագրական կառուցվածքը տարբեր է: Հայերի միգրացիոն կառուցվածքն ավելի «հին» տեսք ունի ՆՄ հանրապետություններում, որտեղ ճնշող մեծամասնություն են կազմում տասը տարի և ավելի առաջ մեկնած մարդիկ: Նրանց միգրացիոն հոսքերի երկու երրորդը բաժին է ընկնում մինչև 1995թ. ընկած ժամանակաշրջանին, իսկ քառորդ մասը՝ 5-10 տարի 5-10տարի ժամանակահատվածին, այսինքն՝ 1995-2000թթ.: Այդ ցուցանիշով ՆՄ երկրներին մոտ է ամերիկյան մայրցամաքը (ԱՄՆ, Կանադա), որոնց միգրացիայի երկու երրորդը տեղի է ունեցել մինչև 2000թ. ընկած ժամանակահատվածը, իսկ դրա կեսն ընդգրկում է մինչև 1995թ.: Համեմատաբար «երիտասարդ» է Ռուսաստանի և Եվրոպայի վերաբնակման կառուցվածքը:


Բնակության երկրում արտագաղթածների սոցիալական
դիրքերը պայմանավորող գործոնները
ա/ արտագնացության մեջ գտնվելու ժամանակաշրջանը



բ/ արտագաղթի երկիրը



գ/ Հայաստանում բնակվող արտագաղթածների ազգականների
սոցիալ-մասնագիտական պատկանելությունը



Արտագաղթածների սոցիալ-մասնագիտական կազմը, որը
գրանցվել է Հայաստանում բնակվող հարցվողների տեղեկա-

տվության հիման վրա, հնարավորություն է ընձեռել հետևելու նոր սոցիալական տարածքի «յուրացման» ընթացքին, որը պայմանավորվում է նոր միջավայրում բնակվելու ժամանակահատվածով, բնակության երկրով և մինչ էմիգրացիան նրանց ելակետային սոցիալական դիրքերով: Եթե ադապտացիայի ժամանակաշրջանը և պայմանները (երկիրը) դիտարկվում են կոնկրետ ժամանակի և տարածության մեջ, ապա սկզբնական սոցիալական դիրքերը գրանցվել են ըստ անուղղակի ցուցիչների՝ Հայաստանում գտնվող ազգականների կողմից նշված սոցիալական հատկանիշների հիման վրա:

Նկար 2.7-ում ներկայացվել է վերոնշյալ հատկանիշների կապը արտագաղթածների նոր միջավայրում ունեցած սոցիալամասնագիտական կառուցվածքի հետ: Առաջին գրաֆիկն արտացոլում է բնակվելու ժամանակահատվածի կապը նոր միջավայրում նրանց սոցիալական կարգավիճակի հետ: Պարզորոշ են նոր միջավայրում կենսագործունեության ընթացքում սոցիալական (աշխատանքային) հատկանիշների փոփոխությունները: Այսպես, վերջին փուլում (վերջին հինգ տարվա արտագնացություն) արտագաղթողների սոցիալական կառուցվածքում հավասարապես բաշխվել են հիմնականում ֆիզիկական և մտավոր աշխատանքներով զբաղվողները, ուլքեր, սակայն, որակավորում չունեն: Նրանց մեջ մասնագետներ չկային: Հետագա հինգ տարում տեղի ունեցավ ցածր որակավորում ունեցող մտավոր աշխատողների (ծառայողների) հոսքը՝ որը հիմնականում ուղղվում է դեպի ֆիզիկական աշխատանքի ոլորտ և մասնագետների խումբ: Տասը և ավելի տարիների փուլում բոլոր խմբերից գրանցվեց արտահոսք դեպի ծառայողների

և մասնագետների խմբերը 75 և 25 տոկոս հարաբերակցությամբ: Ընդ որում, սոցիալական կազմի փոփոխություններն ավելի մեծ չափով տեղի ունեցան Ռուսաստանում, իսկ ամենաքիչը՝ եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում և Կանադայում: Եթե առաջին երկրում էմիգրանտների ընդամենը կեսից պակասն զբաղվում էր ֆիզիկական աշխատանքով, իսկ մյուս մասը՝ որակավորված և չորակավորված մտավոր աշխատանքով, ապա արևմտյան երկրներում նրանց ճնշող մեծամասնությունը հայտնվել էին հիմնականում չորակավորված ֆիզիկական աշխատողների խմբում:

Հարկ է նկատի ունենալ, որ երկրից հեռացածների համակազմը բավականին բարդ էր, որը չէր կարող չազդել նրանց աղապատացիոն գործընթացների բնույթի վրա: 2007թ. հետազոտության նյութերով պարզվեց, որ այդ կախվածությունը բավականին էական էր: Այսպես՝ հիմնականում ֆիզիկական աշխատանքով զբաղվող (G խումբ) Հայաստանի բնակչության էմիգրանտ ազգականների կեսը նույնպես զբաղվում էր ֆիզիկական աշխատանքով, շուրջ 35%-ը չորակավորված մտավոր աշխատանքով և ընդամենը 5%-ն էր աշխատում որպես մասնագետ: Որքան բարձր էին Հայաստանի բնակչության սոցիալական հատկանիշները, այնքան ավելի բարձր էին այլ երկրներում բնակվող նրանց ազգականների սոցիալական ցուցանիշները: Վերոհիշյալ ցուցանիշներով G խմբին մոտ էր B խումբը: Ֆիզիկական աշխատանքով զբաղվող A խմբում Հայաստանի բնակչության արտագաղթած ազգականների երրորդ մասը նույնպես ֆիզիկական աշխատանքի ներկայացուցիչներ էին, երկու երրորդը՝ ծառայողներ, և միայն տասներորդ մասը՝ մասնագետներ:

Էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերը ցույց են տալիս, որ արտագաղթածների նոր տեղում սոցիալ-մշակութային ինտեգրման առավել բարենպաստ պայմանները ՌԴ-ում են: Հայաստանից մեկնած միգրանտները այդ էթնոսոցիալական միջավայրում առաջխաղացման բոլոր ցուցանիշներով ամենամեծ առաջընթացն են ունեցել:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Ռուսաստանի հայկական նոր սփյուռքի տնտեսական բաղադրիչին: Հայկական սփյուռքի ռուսական հատվածի ձևավորմանը մասնակցել է հայ էթնոսի զանգվածների մեծ մասը, որոնք բնակվում էին ՆՄ տարածքում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Ուկրաինայում, Բելոռուսիայում և բուն Ռուսաստանում: Միգրացիաների միջև երկար ժամանակային հեռավորության պատճառով այդ երկրներում ձևավորվել են տարբեր ժամանակաշրջանների վերաբնակիչներից կազմված խմբեր, ներառյալ հնաբնակները և նոր ժամանածները: Հետևաբար, այդ խմբերը բաղկացած են կամ արդեն ինտեգրված, կամ ադապտացիայի տարբեր փուլերում գտնվող շերտերից (5):

Տարբեր ժամանակաշրջանների միգրանտներից և նրանց հետագա սերնդափոխության արդյունքում ձևավորված էթնիկական փոքրամասնության տնտեսական գործունեությունը նոր սոցիալական միջավայրում նրա առանձին խմբերի ադապտացիայի արդյունքն է: Կախված այն բանից, թե որտեղից է հավաքագրվել այդ կազմը, որ սոցիալական խմբերից են, ինչպիսի մասնագիտական որակներ ունեն, ինչպիսի պայմաններում են հայտնվել (տվյալ բնակավայրի տնտեսական կառուցվածքը, պատրաստի սոցիալական ցանցերի գոյությունը և այլն), որոշ-

վում է այդ գործընթացի արագությունը և նրանց յուրացրած սոցիալական կամ տնտեսական ոլորտների տիպը: Հետագայում ժառանգած կամ ձեռքբերովի սոցիալական ցանցերի ամրությունը պայմանավորում է հայրենիքի հետ գործունեություն ծավալելու շարժառիթների ձևավորումը:

Հարկ է հաշվի առնել, որ Ռուսաստանի հայկական սփյուռքը հայրենիքի սահմաններից դուրս ձևավորված ամենախոշոր հայկական միավորումներից է: Այն բավականին մեծաքանակ է: Սոցիալապես ու տնտեսապես առաջադիմել է և դիվերսիֆիկացվել, քանի որ ընդգրկել է հետխորհրդային տարածքի հայ էթնոսի այնպիսի հատվածների, որոնց զարգացման ներուժը ձևավորվել է և՛ սեփական, և՛ այլազգի միջավայրերում:

Այսպես օրինակ, 1897թ. Համառուսական առաջին մարդահամարի նյութերի համաձայն, այն ժամանակ Ռուսական կայսրության տարածքում բնակվող հայերի մեջ քաղաքաբնակների բաժինը կազմում էր 23 տոկոս, իսկ 1979թ. համամիութենական մարդահամարի նյութերով Հայաստանում՝ 69%, հարևան հանրապետություններում՝ 71%, Ռուսաստանում՝ 78%, միջինասիական հանրապետություններում՝ 97%, արևմտյան հանրապետություններում՝ 93-96%: Հայերի սոցիալական կառուցվածքը բավականին բարդ էր և դիվերսիֆիկացված, որը պայմանավորվում էր նրանց ուրբանիզացման բարձր մակարդակով, հետևաբար «քաղաքային» մասնագիտությունների գերակշռությամբ: Ռուսաստանի հայկական նոր սփյուռքի սոցիալական կառուցվածքի և արդի տնտեսական ներուժի ձևավորմանը մասնակցել է էթնոսի այս հատվածը, քանի որ այդ էթնոսոցիալական միջավայրը նրա բոլոր օղակների առաջընթացի համար


ամենանպաստավորն էր (6): Հենց այս ենթադրությունն էր, որ դրվեց «ելքի» երկրի և նոր միջավայրում հայերի տնտեսական գործունեության ճյուղային կառուցվածքի փոխապայմանավորվածության մասին տեսակետի հիմքում: Այդ ոլորտում ձեռք բերված նրանց հմտությունները և արհեստավարժությունը կարող էին նպաստել գործարարության ասպարեզում հասնելու որոշակի հաջողությունների:

Նոր սոցիալական միջավայրում ադապտացիայի ընթացքում, եթե պայմանները թույլ են տալիս, միգրանտներն ընտրում են գործունեության այնպիսի ոլորտ ու մասնագիտություն, որին ավելի իրազեկ են և ունեն անհրաժեշտ հմտություններ: Սովորաբար ցանկությունները և իրականացման պայմանները համընկնում են, քանի որ բնակչության այդ շարժուն խումբը վերաբնակվում է այնտեղ, որտեղ հնարավոր է ադապտացվել և որի համար տնտեսական բաղադրիչն ամենակարևորն է: Հավանաբար այդ է պատճառը, որ նախկինում բաքվեցիները կարող էին ավելի մեծ հաջողությունների հասնել նավթարդյունաբերության և նավթաքիմիական արդյունաբերության ոլորտներում, վանաձորցիները՝ քիմիական արդյունաբերության, թբիլիսցիները՝ ֆինանսական, Միջին Ասիայից գաղթածները՝ առևտրի ոլորտում և այլն: Այդ իսկ պատճառով, մեր հետազոտության մեջ կարևորվել է սփյուռքի տնտեսական ներուժի տարածաշրջանային գործոնի դերը որակական առումով: Հարկ է հաշվի առնել ոչ միայն կապիտալի մեծությունը և գործունեության ոլորտը, այլև ժառանգած սոցիալական ցանցերը: Այդ առումով բավականին ուշագրավ է խոշոր գործարար Լևոն Հայրապետյանի գործունեության օրինակը: Նա դուրս է եկել լրա-

գրությունից և սկսել է գործունեություն ծավալել հենց զանգվածային լրատվության ոլորտում:

Նկ. 2.8.

Նախկին Խորհրդային Միության այն երկրների կառուցվածքը, որտեղից ծագում են Ռուսաստանի հայ համայնքի խոշոր գործարար շրջանակների ներկայացուցիչները



Հայ էթնիկ տարրը Ռուսաստանում ներքաշված է գործունեության բազմաթիվ ոլորտների մեջ: Նա տնտեսապես դիվերսիֆիկացված է և սփռված այդ երկրի տարածքով: Այդ մասին պաշտոնական վիճակագրությունից տեղեկատվություն ստանալը բավականին բարդ է:

Մասնագիտական հետազոտությունները նույնպես կարող են քիչ բանով օգտակար լինել: Նշված խնդիրները պայմանավորված են համապատասխան գերատեսչությունների և վիճակագրական ծառայությունների տեղեկատվական տվյալների սահմանափակ հնարավորություններով: Ռուսաստանի վերաբերյալ նման տեղեկատվությունը բավականին սուղ է, քանի որ

ի տարբերություն ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մերձավոր Արևելքի և այլ երկրների, Ռուսաստանի հայերը չունեն լուրջ համառուսական մասշտաբի սփյուռքի կառույցներ, հետևաբար չկան այնպիսի կազմակերպություններ, որոնք շահագրգռված են նման տեղեկատվությամբ:


Ռուսաստանում գործող այդ խմբի կազմի մասին կարելի է պատկերացում կազմել առանձին հետազոտողների հավաքած տվյալների հիման վրա: Այդպիսի աղբյուր են անձնական շփումներից, ԶԼՄ-ներից և այլ աղբյուրներից մեծ նվիրյալ Խ. Դադայանի բժախնդիր կերպով հավաքած նյութերը Ռուսաստանի հայ բիզնես վերնախավի մասին(7): Այդ հրատարակության տեղեկատվության հիման վրա իրականացնելով քանակական-որակական վերլուծություն, հնարավոր դարձավ լուսաբանել սփյուռքի այդ շերտի մասին մի շարք հարցեր:

Ինչպես երևում է նկ. 2.8-ից, Ռուսաստանի հայ գործարար շրջանակների ներկայացուցիչների մեկ երրորդից ավելին ծագումով երկրորդ և երրորդ սերնդի ռուսաստանցիներ են, մեկ երրորդից փոքր ինչ պակասը Հայաստանից են, քառորդ մասը՝ Վրաստանից, մոտավորապես այդքան՝ Ադրբեջանից և շուրջ 15-18%-ը հետխորհրդային այլ երկրներից, հիմնականում՝ Ուկրաինայից և միջինասիական երկրներից: Վերը ներկայացված գրաֆիկի տվյալները համեմատելով ՆՄ տարածքում հայերի բնակության վիճակագրության հետ (տե՛ս նկ. 2.9), բացահայտվում է բավականին պերճախոս փաստ Ռուսաստանի ժամանակակից հայ սփյուռքի գործարար շրջանակների ծագման տարածաշրջանային կառուցվածքի և ՆՄ երկրներում նրանց տարաբնակության նմանության մասին:

Առաջին և երկրորդ (նկ. 2.8 և 2.9) գրաֆիկներում Հայաստանի մասնաբաժնի տարբերությունները հարկ է բացատրել այլ երկրներից հայերի ավելի արագ տեղափոխմամբ: Օրինակ, այսօր Ադրբեջանում իսպառ բացակայում է այդ էթնիկ տարրը, Վրաստանում նրա քանակը կրճատվել է մի քանի անգամ և այլն: Եվ որքան էլ վիճաբանում են Հայաստանից բնակչության արտագաղթի չափերի մասին, այնուամենայնիվ ՀՀ-ն էթնոսի կենտրոնացման ամենախոշոր տարածքն է: Հետևաբար բնական է, որ Հայաստանը պետք է բոլորից պակաս ներկայացված լիներ Ռուսաստանի հայության կառուցվածքում:

Նկ.2.9.

Հայերի տեղաբաշխումը նախկին Խորհրդային Միության երկրներում ըստ 1979 թ. Համամիութենական մարդահամարի տվյալների(8)



Հարկ է նաև նկատի ունենալ, որ տարբեր պատճառներով Հայաստանից մեկնողների զգալի մասը, ի տարբերություն Միություն երկրների միգրանտների, Ռուսաստան մեկնում է ժամանա-

կավորապես և հետ է վերադառնում: Եթե ստորև ներկայացված 10-րդ նկարից առանձնացնենք Հայաստանը, ապա կտեսնենք, որ տարբեր տարածաշրջանների ներկայացուցիչներն ընդգրկված են Ռուսաստանի հայ գործարար վերնախավի կազմում:

Ռուսաստանի սփյուռքի գործարար շրջանակներում, բնակչության քանակի համեմատ, հայաստանցիների սակավ ներգրավվածությունը կարելի է բացատրել մյուս տարածաշրջաններից տեղափոխվածների համեմատ միգրանտների փոքր քանակով և նրանց ադապտացման կարճ ժամանակահատվածով: Այստեղ որոշակի դեր են կատարում նաև այլազգի միջավայրի կենսափորձը, նոր վայրին հարմարվելու ժամանակաշրջանը, դրա հմտությունների մեծ տարբերակվածությունը և այլն:


Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ հայ սփյուռքի գործարար շրջանակների ներկայացուցիչների մասին Խ. Դադայանի գրքում ներկայացված կենսագրական նյութերում, Ռուսաստանի հայ բիզնես վերնախավի կազմի ձևավորման մասին գոյություն ունի բավականին հավաստի տեղեկատվություն:

Ինչպես երևում է ներկայացված գրաֆիկից, անկախ ծագման տարածաշրջանից, Հայաստանի բնակչության զգալի մասը հանրապետությունից դուրս ունեն ազգականներ: Ընդ որում, հանրապետության դրսից ժամանած միգրանտները, տեղաբնիկների համեմատ, արտասահմանում մոտ ազգականներ ավելի շատ ունեն: Այսպես, ներգաղթածների շուրջ 75%-ն ունի մոտ ազգականներ, ՆՄ-ից վերաբնակվածները՝ 60%, այն դեպքում երբ տեղաբնակների մոտ այն կազմում է շուրջ 40%: Դրանից ելնելով, կարելի է ենթադրել, որ գրաֆիկում ներկայացված

գործարարների կեսը կարող են Հայաստանում ունենալ ընտանեկան-ազգակցական կապեր:

Նկ. 2.10.

ՀՀ քաղաքներում ծնվածների և տարբեր երկրներից ՀՀ տեղափոխված միգրանտների Հայաստանից դուրս բնակվողների բաշխումն ըստ ազգակցության աստիճանի* (առանձնացված են հարազատներ ունեցողները՝ հարազատ, հեռու բարեկամներ ունեցողները՝ հեռու բար. և նրանք, ովքեր ոչ մի բարեկամ չունեն՝ չունեն)



* Գրաֆիկը կազմվել է ՀՀ քաղաքների էթնոսոցիոլոգիական հետազոտությունների նյութերի հիման վրա:


Հաջորդ քննարկման նյութն է հայ էթնոսի ռուսական այդ հատվածի կազմը: Ռուսաստանի հայ խոշոր գործարարների կարևոր հատկանիշների թվին է պատկանում տարիքային կառուցվածքը:

Ռուսաստանի հայ խոշոր գործարարների մեջ համեմատաբար երիտասարդները (մինչև 40 տարեկան) կազմում են 15-16%: Մոտավորապես նույնքան են 60 տարեկանից բարձր գործարարները: Ավելի մեծաթիվ է 40-50 տարեկանները (կազ-

մում է ընդհանուր թվի մոտավորապես երրորդ մասը) և դրանից փոքր-ինչ հետ է մնում 50-60 տարեկանների խումբը (20%): Տարիքային առումով հեռանկարային է համարվում մինչև 50 տարեկանների խումբը, որոնք կազմում են հեղինակի կողմից ուսունասիրված հայ գործարարների համարյա կեսը: Դա վկայում է Ռուսաստանի հայկական սփյուռքի լուրջ տնտեսական հեռանկարների մասին:

Նկ. 2.11.

Ռուսաստանի հայ խոշոր գործարարների տարիքային կառուցվածքը




Նշված բիզնես խմբերի կազմի հաջորդ կարևոր հատկանիշը ձեռնարկատիրական գործունեության ճյուղային կառուցվածքն է: Գործարարության ոլորտները դասավորվեցին հետևյալ հաջորդականությամբ. արդյունաբերություն, սպասարկման ոլորտ, ֆինանսներ, շինարարություն և անշարժ գույք: Արդյունաբերության մեջ առաջին տեղում է հայտնվել բարձր տեխնոլոգիաների ոլորտը: Այս ոլորտում ընդգրկված են նաև նավթաքիմիական, ավիացիոն և սննդի արդյունաբերությունը: Հաջորդ տեղում է ֆինանսական ոլորտը, որը ներկայացված է բանկային և

ապահովագրական ճյուղերով: Վերջում գալիս են շինարարությունը և անշարժ գույքի ոլորտները:

Նկ. 2.12.

Ռուսաստանի հայկական սփյուռքի խոշոր բիզնես խմբերի ներկայացուցիչների ձեռնարկատիրական գործունեության ճյուղային կառուցվածքը




2.12-րդ նկարում ներկայացված է Ռուսաստանի հայկական սփյուռքի կապիտալի բաշխման ճյուղային կառուցվածքը: Այն ցույց է տալիս, որ այդ կապիտալի քառորդ մասը կենտրոնացված է ֆինանսական ոլորտում (բանկեր, ապահովագրական ընկերություններ և այլն), երրորդ մասը՝ արդյունաբերության մեջ (քիմիական, գազի, նավթային, ավիացիոն, նավթաքիմիական և սննդի), 15%-ը՝ տեղեկատվական տեխնոլոգիաներում և կապում, մոտավորապես 10%-ը՝ շինարարության և անշարժ գույքի ոլորտներում:

Ճյուղային առումով առավել դիվերսիֆիկացված է բուն Ռուսաստանում ծնված հայերի ձեռնարկատիրական գործունեությունը: Նրանք համարյա հավասար համամասնությամբ բաշխվել են երեք դիրքերի միջև՝ բարձր տեխնոլոգիաներում, բան-

կային գործում և նավթաքիմիական արդյունաբերության մեջ: Դրանով կարելի կատարել մի քանի ենթադրություն: Առաջին ենթադրությունը հիմնվում է այն բանի վրա, որ յուրաքանչյուր ոլորտի եկամտաբերությունը որոշում է գրավչության աստիճանը, հետևաբար նաև հաջողության ձգտումը: Այն փաստը, որ երկրորդ կամ երրորդ սերնդի ռուսաստանցի հայերը սոցիալական և տնտեսական ոլորտներում առաջադիմելու ավելի մեծ հնարավորություններ ունեն, խոսում է այն մասին, որ Ռուսաստանում այդ ոլորտները եկամտաբեր են և վայելում են հեղինակություն: Երկրորդ ենթադրությունն այն է, որ հին և նոր միջավայրում ձեռքբերումների մակարդակի միջև հնարավոր են էական կապեր:

Նկ. 2.13.

Ռուսաստանցի և ՆՄ այլ երկրներից գաղթած հայերի ձեռնարկատիրական գործունեության ճյուղային կառուցվածքը



Ռուսաստանցի հայ միգրանտները մյուս խմբերից առանձնանում էին արհեստավարժության կարևոր հատկանիշներով և կրթական բարձր մակարդակի ցուցանիշներով: Երրորդ են-

թաղրությունն է, որ սեփական և այլերնիկ միջավայրերում մրցակցային իրադրության տարբերությունները ձևավորում են առաջընթացի ինտենսիվության, որակի, ինչպես նաև առավել հեղինակություն ունեցող գործունեության ոլորտների ընտրության հնարավորությունների առանձնահատկություններ:

Օրինակ՝ սեփական էթնիկ միջավայրում սոցիալական մրցակցությունն ավելի թույլ է քան այլերնիկ շրջապատում, քանի որ չի բարդանում էթնիկ գործոնով: Բնիկ էթնոսը ձգտում է ոչ ձևական կապերի միջոցով ձեռք բերել արտոնություններ և պետության կողմից ստանալ օժանդակություն: Այլազգ միջավայրում անհրաժեշտ է նպատակասլացություն, մեծ ջանքեր, իրական ձեռքբերումներ և այլ նմանատիպ հատկանիշներ: Վերջին ենթադրությունը վերաբերում է պայմանների իմացությանը, փոխհարաբերություններում կողմնորոշվելուն, կորպորատիվ փորձի մշակմանը և այլն:

Ռուսաստանցի հայերին հետևում են վրացահայերը, որոնք կարևոր դիրքեր են գրավում ֆինանսական, բարձր տեխնոլոգիաների և փոքր-ինչ պակաս չափով՝ նավթաքիմիական արդյունաբերության և ավելի շատ առևտրի ոլորտներում: Հայաստանից մեկնածների երկու երրորդը զբաղվում է շինարարական գործունեությամբ և անշարժ գույքով, մեկ երրորդը՝ ֆինանսական, իսկ ամեն հինգերորդը բարձր տեխնոլոգիաների մասնագետներ են: Աղբյուրներից գաղթածները հիմնականում զբաղված էին քիմիական արդյունաբերության, նավթարդյունաբերության, առևտրի և շինարարության ոլորտներում:

Այսպիսով, էթնոսոցիոլոգիական հետազոտությունը հնարավորություն տվեց կոնկրետ սոցիոլոգիական նյութերի հիման

վրա որոշելու հայկական նոր սփյուռքի ձևավորման հիմնական փուլերը, ուսումնասիրելու տարբեր երկրների միջավայրերում ինտեգրման առանձնահատկությունները: Պարզվեց, որ հայկական նոր սփյուռքի կազմը յուրաքանչյուր երկրում բավականին տարբեր է ինչպես նրա անդամների ընտրության, այնպես էլ՝ նոր սոցիալական տարածքում սոցիալական ներգտման բնույթով: Հարմարվելու և սոցիալական աճի համար ամենաբարենպաստը ՌԴ-ն է, որը մոտ է իր սոցիոմշակութային ողջ դաշտով: Կարելի է վստահորեն նշել, որ մեր նյութերի գրանցման պահին Ռուսաստանում իր կազմավորման փուլում հայկական նոր սփյուռքն ավելի բարդ էր և՛ ձևավորման աղբյուրներով, և՛ առաջընթացի արդյունքներով: Արևմտյան երկրներում պայմաններն ավելի խիստ էին: Միգրանտները հայտնվել էին իրենց սկզբնական դիրքերից շատ ավելի ցածր դիրքերում: Ըստ հետազոտության նյութերի, անկախ աղապտացիայի փուլից, նրանք համարյա չէին փոխվել:

Ծանոթագրություններ

1. http://employment.am/up/attach/attach_arm10.pdf.
2. Армянская диаспора в контексте армяно-российских экономических связей (коллективная монография, под ред. А. Аветисяна, Э. Григоряна, Р. Карапетяна) М, 2013:
3. Карапетян Р.С. Миграция в городах Армении. Этносоциологическое исследование....
4. Սույն հետազոտությունում ելակետային է ազգագրության մեջ ընդունված ազգակցության դասակարգումը, ըստ որի առանձնացվում են հետևյալ խմբերը. վայրընթաց գծով ազ-

զականների խումբ՝ ծնողներ, երեխաներ, կողմնային զծով՝ եղբայրներ և քույրեր, հեռու ազգականների խումբ, որոնք հարցվողների ավելի հեռու ազգականներն էին: Տե՛ս Կարապետյան Զ.Տ. Արмянская семейная община, И-во АН Армянской ССР, Ереван, 1958, с. 25:

5. Арутюнян Ю.В. «Об армянской диаспоре в России», Ереван, И-во Гитутюн, 2011 г, с. 151.
6. Դրա մասին ավելի մանրամասն, տե՛ս Karapetyan R.S., Language Policy in the Republic of Armenia in the Transition Period: in National Building, Ethnicity and Language Politics in Transition Countries. Edited by Fariman Daftary and Francois Grin, Flensburg, 2003, 141-159 p.:
7. Дадаян Х. Армянская бизнес-элита России. Биографический справочник. – Ер.: Научно-образовательный фонд «Нораванк», 2009.
8. Գրաֆիկը կազմվել է 1979թ. համամիութենական մարդահամարի նյութերի հիման վրա: Տե՛ս Всесоюзная перепись населения 1979 года. Финансы и статистика. М. 1984, с. 71-138:

ԳԼՈՒԽ III.
ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ ՆՈՐ ԷՍԻԳՐԱՆՏՆԵՐԻ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԷԹՆՈՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Հայրենիքի հետ հայ միգրանտների փոխհարաբերությունների էթնոսոցիալական բաղադրիչներում առկա են երկու մասնակիցներ՝ սեզոնային արտագնացները և արտագաղթածները: Առաջինները 6-9 ամիս, կտրվելով իրենց ընտանիքներից, գնում են աշխարհի տարբեր երկրներ գումար վաստակելու նպատակով այնուհետև վերադառնում հայրենիք: Որոշ գնահատումներով, իրենց հարազատներին արտագնացների փոխանցած տրանսֆերտների ծավալը գերազանցում է Հայաստանի պետությունը: Պաշտոնական տվյալներով, բանկային համակարգով տրանսֆերտների 83,5%-ը մուտք է գործում Ռուսաստանից, մոտավորապես 10-12տոկոսը՝ ԱՄՆ-ից և Կանադայից, իսկ 5-6 տոկոսը՝ Եվրոպայից: Ընդ որում, փորձագետների կարծիքով, պաշտոնապես գրանցվող տարադրամային տրանսֆերտների ծավալներին հավասար առանց հաշվառման տարադրամ է Հայաստան մուտք գործում(1): Ըստ Ռ. Գրադեյանի հաշվարկների, 2013թ. Հայաստան կմտնի մոտավորապես \$4 մլրդ. մասնավոր տրանսֆերտ, որից \$3 մլրդ. կգնա բացասական առևտրային հաշվեկշիռը փակելուն, իսկ մնացյալ \$1 մլրդ՝ ներդրումների ձևով կնստի բանկային համակարգում, մասնակիորեն կմտնի տնտեսության «ստվերային» հատված և «կլվացվի» արտասահմանում(2): Այդ մուտքերի մեծ մասը ծախսվել է ընտանիքի կեն-

նապահովման նպատակով՝ սննդամթերքի, հագուստի, կենցաղային տեխնիկայի գնման, հարկային մուծումների և նմանատիպ այլ ծախսումների համար: Այսպիսով, այս ֆինանսական ռեսուրսի զգալի մասը ներդրվում է Հայաստանի տնտեսության բավականին փոքր սեգմենտում՝ առևտրում և կենցաղը ապահովող ոլորտում:

Հայրենիքի հետ սերտ կապեր պահպանող երկրորդ կողմը էմիգրանտն է, որին կարելի է դասել որպես հայկական նոր սփյուռքի ներկայացուցիչ: Հայրենիքի հետ նրանց հուզական կապվածությունը հիմնականում պայմանավորված է հարազատության զգացումներով, հուշերով և ընդհանուր առմամբ՝ էթնոսի հետ նույնականացման գործոնով:

Այս հանգամանքը զգալի հետք է թողնում սփյուռքի և հայրենիքի միջև փոխհարաբերությունների վրա, որտեղ մի կողմը ներդրողի դերում է, որը կարող է դրսևորվել տարբեր ձևերով և բովանդակությամբ, մյուսը՝ օբյեկտի, որին հասցեագրված է այդ ներդրումը: Այդ ներդրումները կարող են լինել սփյուռքից մեկ անգամ կամ կարճաժամկետ մուտք գործող դրամական օգնություններ, կամ էլ՝ հայրենիքի տնտեսության մեջ ֆինանսական և տեխնոլոգիական երկարատև ներդրումներ, որոնք Հայաստանի տնտեսության զարգացման համար կարևոր խթան են: Ուստի, հայրենիք – նոր սփյուռք փոխհարաբերությունները պայմանավորող գործոնների բովանդակության մեջ խորանալու, դրանց տևողությունը, հայրենիքի և սփյուռքի համար սոցիալ-մշակութային հետևանքներն ու մոտակա հեռանկարները որոշելու նպատակով հարկ է անդրադառնալ ոչ վաղ անցյա-

լում տեղի ունեցած միգրացիոն գործընթացների հետևանքներին:

Ինչպես աշխատուժի ավելցուկ ունեցող այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում աղետալի երկրաշարժի, ռազմական և էներգետիկ ճգնաժամերի, շրջափակման և արդյունաբերության կաթվածահարության հետևանքով բնակչության արտահոսքի պայմաններ ստեղծվեցին: Միգրացիայի առաջին ալիքը հանգեցրեց տարածքային առումով տարանջատված ընտանիքի անդամների և ազգակցական խմբերի լայն ցանցի ձևավորմանը, որը լրացուցիչ խթան եղավ բնակչության շարժունակության համար, նպաստելով արտահոսքին և ներհոսքին(3): Այսօր, Հայաստանի բնակչության տեղաշարժերում, բացի տնտեսական և սոցիալ-հոգեբանական գործոններից, կարևոր դեր են կատարում նաև ընտանեկան-ազգակցական կապերը: Դրանք սոցիալական ցանցերի գործունեության կարևոր պայման են դառնում, միացնելով հայ էթնոսի ներկայացուցիչներին սեփական և այլէթնիկ միջավայրերում: Հայկական նոր սփյուռքի ներկայացուցիչների և հայրենիքի միջև փոխադարձ կապերի բնույթը հասկանալու համար այդ հարցի քննարկումը շատ կարևոր է:

Այդ իսկ պատճառով, հարկ է ուշադրություն դարձնել մի կարևոր գործոնի վրա, որը պայմանավորում է Հայաստանի էթնոսոցիալական գործընթացներին հայկական սփյուռքի մասնակցության դրդապատճառների աֆիլիատիվ բնույթը: Այն հիմնականում կապված է արյունակցական ազգակցության ինստիտուտի հետ, որը մեծ ընտանիքի՝ «գերդաստանի» ավանդույթային ուժով առկա է ընտանեկան-ազգակցական հարաբերու-

թյունների արժեքային համակարգում և այն հազեցնում է խորը հուզական բովանդակությամբ: Ազգականների փոխադարձ կապվածության պահանջմունքի համատեքստում ձևավորվում է այն սոցիալական ցանցը, որի ներսում տեղի է ունենում տեղեկատվության ինտենսիվ փոխանակում, փոխօգնություն, հետագա տեղաշարժեր և այլն: Ելնելով վերոնշյալից տարածքային առումով ցրված հարազատների միջև արդի սոցիալական ցանցերի ձևավորման գործում ավանդական արժեքների դերի կարևորություններից բացահայտել են դրանց միջև փոխադարձ կապերի էթնոսոցիալական բաղադրիչը հայրենիք-սփյուռք տեսանկյունից:

Ազգակցական մտերմության վրա հիմնված տարածապես ցրված սոցիալական ցանցերի մասին պատկերացումների դերը, դրանց գործունեության բնույթը և հնարավորությունների արժեքը գնահատում է մարդկանց ճնշող մեծամասնությունը: Դա արտահայտվել է նաև էթնոսոցիոլոգիական հետազոտությունների ընթացքում(4), որտեղ գրանցվել է այլ վայրերում, մայրաքաղաքում և հանրապետության սահմաններից դուրս բնակվող իրենց բնակավայրի բնակիչների կյանքի մասին ծավալուն և խոր բովանդակությամբ տեղեկատվություն: Դա առավել ցայտուն էր դրսևորվում տարագնաց ազգականների մասին տեղեկատվության մեջ: Այն պայմանավորվում է նաև նրանով, որ հուզական ենթատեքստից բացի, հարցվողներն ունեն այլ, ավելի իրատեսական դրդապատճառներ: Դա չի հակասում աֆիլիատիվ դրդապատճառներին, այլ լրացվում և որոշակիորեն խթանվում է նրանով: Հարազատների, համերկրացիների շնորհիվ նրանց մոտ ձևավորվում է իրական սոցիալական ցանցի

կերպարը, որն իրենց բնակավայրում և հանրապետության սահմաններից դուրս անձնական պահանջմունքները բավարարելու լուրջ ռեսուրս է: Ընդ որում, հարցվողների պատկերացմամբ, այդ ցանցն ունի տարածքային մեծ ընդգրկում, կապերի և հնարավորությունների լուրջ ներուժ:

Մի դեպքում, ազգակցական խմբերի համար տարածքը ընդամենը իրենց առջև դրված նպատակներին հասնելու ծախսերի, խոչընդոտների պատճառ է, որը կապված է սահմանը հատելու, քաղաքացիություն ստանալու, բնակվելու հարմարություններ ստեղծելու և այլ նմանատիպ հարցերի հետ: Մյուս դեպքում, որպես գործունեության ասպարեզ, սոցիալական ցանցերի ներսում կապերի բնույթին համապատասխան այն կարող է ընդլայնվել, կամ ընդհակառակը՝ նեղանալ(5): Երկու դեպքում էլ, նրանք տարածությունը պատկերացնում են ինչ-որ վերացական երևույթ, իսկ սոցիալական ցանցը, որին իրենց մասնակից են համարում՝ լիովին իրական(6):

Հարազատության աստիճանը, տարածքային տեղայնացումը, զբաղմունքը, հասարակական դիրքը, եկամուտը և այլն, այն չափանիշներն են, որոնց հիման վրա ուրվագծվում է ազգակիցների կամ հայրենակիցների ռեսուրսային հնարավորությունները: Այդ հնարավորությունների օգտագործման նպատակով անձը, մի կողմից որոշում է իր ներկայությունը և վերաբերմունքը դրանում, մյուս կողմից՝ գնահատում այդ ցանցի սոցիոնորմատիվ հիմքերը և միայն հետո է ձևավորում նպատակաուղղվածությունն այն ռեսուրսների նկատմամբ, որին ըստ իրեն, տիրապետում է սոցիալական ցանցը:

Այդ իսկ պատճառով, ազգակցական խմբի սահմանը բավականին դինամիկ է, քանի որ տվյալ ցանցում տարբեր ինտենսիվությամբ կարող են գոյություն ունենալ հրատապ կամ հետաձգված, վերականգնման ենթակա կամ ոչ ենթակա, անմիջական կամ միջնորդավորված կապերը և փոխհարաբերությունները: Այդ համատեքստում կապերի ուժն ընկալվում է որպես նպատակների և դրդապատճառների համապատասխանություն, արդեն առկա համատեղ ձեռնարկության «նախագծի» ցանկություն կամ մասնակցություն: Դա լրացվում է միջանձնային կապերի ինտենսիվությամբ(7), որը հնարավորություն է տալիս դրանց հաղորդել ավելի խորը բովանդակություն:

Էթնոսոցիոլոգիական հետազոտությունների շնորհիվ ստացած նյութերի հիման վրա տվյալ բնակավայրում և ՀՀ սահմաններից դուրս բնակվող իրենց հարազատների մասին հարցվողների հարաբերությունների օրինակով, հայ էթնոսի ավանդույթների համատեքստում, փորձենք քննարկել ձևավորված սոցիալական ցանցի բովանդակային հատկանիշների մասին ենթադրությունների օրինաչափ լինելը: Մկզբում հարկ է ստուգել ավանդական արժեքների հետ Հայաստանի բնակչության բազմաթիվ վարքագծային հատկանիշների համընկնելու մասին ենթադրության ճշտությունը:

Ստորև ներկայացված աղյուսակում բերվել են տվյալներ ընտանիքի կառուցվածքի, տվյալ բնակավայրում և դրանից դուրս գտնվող ազգականների, ընկերների և այլ անձանց կազմի մասին ում հյուր են գնում բնակչության տարբեր խմբերը: Այդ նպատակով առանձնացվել են 1980 և 2005/2007թթ. հետազոտված քաղաքացիների և գյուղաբնակների խմբերը: Տվյալները

ցույց են տալիս, որ ընտանիքի կառուցվածքի և բարեկամական հարաբերությունների ու վարքի միջև առկա են ամուր կապեր: Բարդ կառուցվածքով ընտանիքները (եռասերունդ ընտանիքներ վայրընթաց, ավելի սակավ կողմնային գծով), միայն հարազատներից բաղկացած ընկերական շրջապատը, բարեկամներին այցելելու հաճախականությունը այն հատկանիշների հավաքածուն է, որը վկայում է Հայաստանի բնակչության խմբերի շրջանում գոյություն ունեցող ավանդական դիրքորոշումների և վարքի մասին: Այս թեզը հաստատվում է նաև այն փաստով, որ գյուղաբնակների մոտ, քաղաքաբնակների համեմատ, այդ հատկանիշներն ավելի մեծ չափով են դրսևորվում: Երկու հետազոտությունների տվյալների համեմատությունը, որն ընդգրկում է երեսուն տարվա ժամանակաշրջան, ցույց է տալիս, որ հայ ազգաբնակչության շրջանում ավանդական հատկանիշների դինամիկան աճում է:

Ազգակիցների տարածքային տեղաբաշխումը, նրանց միջև կապերի ինտենսիվությունը, ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության կախվածությունը դրանցից, բավականին իրական հատկանիշներ են, որոնք ձևավորվել են Էթնոսի բնակեցման տարածքների սոցիալական ցանցերում: Իսկ դրանց հիմքում ընկած է ազգակցական հարաբերությունների ավանդույթը: Ակնհայտ է, որ այդ հարաբերությունների միջուկը ընտանիքն է(8): Հենց նրանում են ձևավորվում ավանդական արժեքները և հատկապես նրա միջոցով է ժառանգվում այդ հարաբերությունների ցանցը: Արդի հայ ընտանիքում կարևոր դեր են կատա-

րում այն արժեքները, որոնք ձևավորվել են մեծ ընտանիքում՝ գերդաստանում(9): Այն պատրիլոկալ է, որտեղ պահպանվում է մի քանի սերունդների համատեղ բնակվելու ավանդույթը(10):

Պատահական չէ, որ Հայաստանի նույնիսկ քաղաքային բնակչության մոտավորապես մեկ երրորդ մասը, իսկ գյուղական բնակչության երրորդ մասից ավելին, ունեն ընտանիքի բարդ կառուցվածք: Դրանք եռասերունդ են՝ բաղկացած կողմնային գծերով ազգականներից կամ առանց նրանց: Եթե հարևանները նույնպես ազգականներ են, ապա ձևավորվում են մշակույթի միջսերնդային փոխանցման, ավանդական արժեքների կայունության մեխանիզմի (մասնավորապես, ազգակցական հարաբերությունների արժեքների) լուրջ հիմքեր: Դրանք ընդգրկվում են այդ հիմքի վրա ձևավորված սոցիալական ցանցերի բովանդակության մեջ (11):

Ըստ էթնոսոցիոլոգիական հետազոտությունների տվյալների, ազգականների տարածքային հատվածավորումն այդ խմբի անդամների միջև կապերի ինտենսիվության և բարեկամական հարաբերությունների վրա էական ազդեցություն չի գործում: Մակայն, ցրված բնակվող արյունակցական-ազգակցական խմբում բարեկամական շրջանակները որոշ չափով նեղանում են, սահմանափակվելով առավել մոտ ազգականների շրջանակներով (12): Այդ առումով բավականին հետաքրքիր է ազգականների տարածքային տեղաբաշխման փոփոխությունների գործընթացը, որը տեղի է ունեցել վերջին երեսուն տարվա ընթացքում:

Աղյուսակ 3.1.

ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության ընտանիքի կառուցվածքը, նրանց բարեկամների առկայությունը դրացիների և ընկերների կազմում: Քաղաքի և գյուղի բնակիչների բարեկամների հետ շփման նախնտությունը, վերջինների առկայությունը հանրապետությունից դուրս (1980 թ. 2005/ 2007 թթ. հետազոտությունների տվյալներով) տրված է տոկոսով՝

		Քաղաքի բնակիչները		Գյուղի բնակիչներ	
		1980	2007	1980	2007
Ընտանիքի կառուցվածքը	նուկլեար/միջուկային	64	62	49	60
	բարդ/մի քանիսերունդ	27	36	0	9
	այլ կազմ	9	3	0	2
Դրացիների մեջ առկա են՝	հարազատներ	15	22	7	8
	հորեղբայրներ/մորեղբայրներ	13	16	1	6
	հեռու բարեկամներ	15	37	5	4
Տվյալ բնակավայրում առանձին ապրում են՝	հարազատներ	62	73	60	90
	հորեղբայրներ/մորեղբայրներ	68	78	46	68
	հեռու բարեկամներ	34	23	16	62
	բարեկամներից ոչ ոք չի ապրում	6	3	7	2
Մտերիմ ընկերը	բարեկամն է	9	28	2	6
Հաճախ հյուր է գնում	բարեկամների մոտ	8	5	5	8
	դրացիների մոտ	4	1	8	1

Երկու էթնոսոցիոլոգիական հետազոտությունների միջև ընկած ժամանակահատվածում Հայաստանի բնակչության ազգակցական խմբերի տեղաբաշխման տարածքային կառուցվածքի դինամիկան բնորոշվում է հետևյալ օրինաչափությունն-

երով. և՛ քաղաքներում, և՛ գյուղական բնակավայրերում տեղի է ունեցել վայրընթաց և կողմնային գծերով մոտ հարազատների տարածքային կենտրոնացում: Նշանակալի է այն փաստը, որ քաղաքներում հարցվողների կողմից «հեռու» ներկայացված ազգականների քանակը որոշ չափով նվազել է, իսկ գյուղում, ընդհակառակը՝ ավելացել է շուրջ չորս անգամ: Հավանաբար, գյուղում ուրվագծվում է այնպիսի միտում, որտեղ ավելի հստակ են սահմանվում մոտ և հեռու ազգականների միջև սահմանները, որը վկայում է մեծ ընտանիքի ավանդույթներից հեռանալու հետագա խորացման գործընթացի մասին:

Արդի հայ ընտանիքը պատրիլոկալ է, որտեղ պահպանվում է մի քանի սերունդների համատեղ բնակվելու ավանդույթ: Պատահական չէ, որ Հայաստանի նույնիսկ քաղաքային բնակչության մոտավորապես մեկ երրորդ մասը, իսկ գյուղական բնակչության երրորդ մասից ավելին ունեն ընտանիքի բարդ կառուցվածք: Դրանք եռասերունդ են՝ բաղկացած կողմնային գծերով ազգականներից կամ առանց նրանց: Եթե հարևանները նույնպես ազգականներ են, ապա ձևավորվում են մշակույթի միջսերնդային փոխանցման, ավանդական արժեքների կայունության մեխանիզմի (մասնավորապես, ազգակցական հարաբերությունների արժեքների) լուրջ հիմքեր: Դրանք ընդգրկվում են այդ հիմքի վրա ձևավորված սոցիալական ցանցերի բովանդակության մեջ:

Քաղաքային բնակչության համար այդ սահմանները, հավանաբար, ավելի նեղ են: Պատահական չէ, որ քաղաքաբնակների շրջանում նվազել է այն ազգականների քանակը, որոնց քաղա-

քներում չեն ընդգրկում ազգականների շրջանում, այն դեպքում, երբ գյուղում նրանց համարում են հեռու ազգականներ:

Մեր իրականացրած մի քանի էթնոսոցիոլոգիական հետազոտությունների նյութերը վկայում են ազգականների ցանցի ավելի մեծ տարածքային կենտրոնացման մասին և ցույց տալիս ազգակցության ինստիտուտում տեղի ունեցող փոփոխությունների բավականին դինամիկ պատկերը: Մասնավորապես, առաջին և վերջին հետազոտությունների տվյալների համեմատությունը վկայում է միգրացիոն շարժի ավարտական փուլի մասին, որի սկզբնական շրջանում տեղի է ունենում զատում, այնուհետև, որոշ ժամանակ անց, «մեկ տանիքի տակ» ընտանիքի անդամների միավորում:

Միգրացիայի մյուս հետևանքներից է ազգակցական հատկանիշով անձանց շրջանակների սահմանափակումը: Այդ միտման մասին մենք նշել ենք դեռևս 1980թ.(13): Այսպիսով, բնակավայրի մակարդակով, ազգակցական հարաբերությունների ցանցում տեղի են ունենում նրա անդամների և՛ քանակական, և՛ որակական փոփոխություններ, որոնք գիտակցության մեջ արտացոլվում են հարազատության մասին պատկերացումների տեսքով: Այդ են վկայում ընտանիքի կառուցվածքի մասին տվյալները, որոնցում արտացոլվում են այդ գործընթացի բարդացումները: Ընդ որում, քաղաքային միջավայրում նկատվում է թերի կազմով ընտանիքների քանակի աճ, որը վկայում է ընտանիքի անդամների տարածքային մասնատման, այսինքն՝ ազգականների ամենանեղ շրջանակի մասին(14): Ըստ վերջին հետազոտության տվյալների, Հայաստանի սահմաններից դուրս գտնվող ազգակցական խմբերի ներկայացուցիչների ողջ

զանգվածի մոտավորապես 40%-ը ընտանիքի անդամներ են, որոնց մեկ երրորդը բաժին է ընկնում միջսերնդային վայրընթաց գծով ընտանիքներին (ծնողներ, երեխաներ), իսկ երկու երրորդը՝ կողմնային գծով անջատված հարազատներին (եղբայրներ կամ քույրեր): Նրանց միջև կապերի հաճախականությունը պայմանավորվում է հաղորդակցվողների տարիքով: Միջպետական ուղևորությունների առումով ավելի շարժունակ են այն անձինք, որոնք Հայաստանում և դրանից դուրս բնակվող ծնողներ ունեն: Այսինքն՝ հաղորդակցության հաճախականությունն ավելի մեծ չափով նկատվում է վայրընթաց գծով ազգականների, քան՝ կողմնային գծով ազգականների շրջանում: Հայաստանի բնակչության շրջանում (առկա և նախկին բնակչության) ազգակցական կապերի ամրությունը հիմնականում պայմանավորվում է ծնողների ներկայությամբ, նրանց բացակայության դեպքում այն թուլանում է:

ՀՀ սահմաններից դուրս ազգակցական խմբերի ներկայացուցիչների և նրանց ընտանիքների անդամների տարածքային տեղաբաշխման գործընթացներում երկու հետազոտությունների միջև ընկած ժամանակահատվածում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ: Երկու հարցումների միջև ընկած 25-27 տարիների ընթացքում համարյա վեց անգամ պակասել է հարևան Վրաստանում բնակվող ազգականների քանակը: Այդ ազգականների բացակայությունն Աղբյեջանում հասկանալի է 1988-1994թթ. իրադարձությունների առումով:

Արցախյան իրադարձություններից հետո, նրանց տեսակարար կշիռը հարևան հանրապետություններում 1980թ. համեմատ 1993թ. նվազել էր երեք անգամ (58-ից հասնելով 20 տո-

կոսի), որը կարելի է բացատրել, նախ և առաջ՝ Ադրբեջանի կազմից Արցախի դուրս գալով, երկրորդ՝ այդ հանրապետությունից հայերի արտաքսումով, երրորդ՝ ընդհանուր առմամբ Անդրկովկասից հայերի զանգվածային արտահոսքով, չորրորդ՝ ինչպես նշվել է, միգրացիայի եզրափակիչ գործընթացով՝ Հայաստանի քաղաքային տարածքում մասնատված ընտանիքների վերամիավորմամբ: Հետագայում երրորդ միտումը դարձավ գերակայող: Այսօր ազգականների տարածքային ցանցն ընդգրկում է ՌԴ-ն, ԱՄՆ-ն, եվրոպական երկրները: Խոշոր գաղթօջախներից դեպի Հայաստան հայերի միգրացիայի շնորհիվ այսօր ազգականների այս ցանցին ավելանում են Մերձավոր Արևելքի երկրներից և Իրանից եկածները:

Էթնոսոցիոլոգիական նյութերի միջոցով բացահայտվում են ազգակցական խմբերի անդամների միջև ցանցային կապերի կենտրոնացման գոտիները: Սկզբում առանձնացվում են այն վայրերը, որտեղ բացահայտվում է ազգակցական խմբերի անդամների առավել մեծ քանակություն, անկախ նրանից, թե տվյալ քաղաքի տարածքում իրարից որքան հեռու են նրանք բնակվում: Այսպես, օրինակ, ՌԴ-ում հայերի առավել մեծ կենտրոնացման գոտիներից է Մոսկվան, որտեղ ցրվածությունը ցայտուն է արտահայտվում: Սակայն, դրա հետ մեկտեղ, այդ քաղաքում ներազգակցական և դրա հիման վրա գոյություն ունեցող ներհայրենակցական հաղորդակցման հավանականությունը մեծ է: Նույնիսկ, տարածապես իրար մոտենալու միտում է նկատվում: Որպես օրինակ կարելի է բերել այն փաստը, որ Մոսկվայի նորաբնակ հայերը աստիճանաբար սկսում են կենտրոնանալ քաղաքի հարավարևելյան շրջանում: Այսպիսով,

Հայաստանի ներսում և նրա սահմաններից դուրս ձևավորվում է ցանց, որի միջոցով այդ հանրությունների անդամները գտնում են աշխատանք, բնակարան և վեր բարձրանում սոցիալական աստիճանասանդղակով: Ընդ որում, ազգակցական խմբերի ցանցի ներսում այդ հարաբերություններն առաջ են ընթանում և զարգանում: Դրանք ընդլայնվում են՝ ընդլրկելով այլ սոցիալական ցանցեր, որտեղ այս կամ այն ազգականը կապող օղակ է դառնում ինչպես այդ քաղաքի ցանցի անդամների միջև, այնպես էլ՝ դրա սահմաններից դուրս, մասնավորապես հայրենիքում(15):

Դրանով է որոշվում բնակչության տարածքային շարժի որոշ ինտեքստներ: Իրադրության հետ կապված, թե արդյոք, տնտեսական, սոցիալական, մշակութային պայմանները նպաստավոր են համապատասխան պահանջմունքները բավարարելու համար, ազգակցական ավանդույթների վրա հիմնված սոցիալական ցանցն իրականում կարող է նպաստել անբարենպաստ գոտիներից դեպի բարենպաստ գոտիներն այդ հանրության անդամների տարածական տեղաշարժերին: Այդ ցանցից ստացվող տեղեկատվության շնորհիվ նրա անդամները ոչ միայն պատկերացում են կազմում տեղի իրավիճակի մասին, ալև կողմնորոշվում են դեպի ավելի բարձր ստանդարտները և մեծացնում սեփական պահանջմունքների շրջանակները: Դրա հիման վրա զարգանում է պահանջների նոր համակարգ և դրան համապատասխան, այդ ցանցին մասնակցելու սպասումներ: Այսպիսով, սոցիալական ցանցի մասնակից ազգականներին համախմբող ռեսուրսը հնարավորություն է ընձեռում այդ խմբի անդամներին միգրացիայի ժամանակ առաջացող ռիսկերը և

ծախսերը հասցնել նվազագույնի(16): Այդ մեխանիզմի գործունեությունը կարելի է ցույց տալ հայրենադարձների օրինակով: 1946- 1948/1949թթ. նրանց ժամանումը Հայաստան ուղեկցվում էր ազգակցական կապերի խզմամբ: Չնայած մի քանի տասնամյակ իրարից մեկուսացվածությանը, երբ նրանց խոչընդոտող գործոնները վերացան, ազգակցական կապերը վերականգնվեցին: Այդ կապերը հնարավորություն տվեցին հայրենադարձների մեծ մասին ոչ միայն մեկնելու երկրից, այլև այդ իրական ցանցի շնորհիվ հաջողությամբ ինտեգրվել մուտքի երկրում: Դա ցույց է տալիս գործունեության սեփական դաշտի ստեղծման սոցիալական ցանցի ազգակցական բաղադրիչի հնարավորությունը (սատարում, ուժերի մոբիլիզացում, սոցիալական արժեքների ձևավորում, տարածում և այլն), որը գործում է անկախ տարածությունից և շփումների ինտենսիվությունից:

Հաջորդ օրինակը նույնպես կարելի է ներկայացնել ոչ վաղ անցյալից: Դեպի քաղաքներ երիտասարդների միգրացիայի հետևանքով մասնատված գյուղական ընտանիքները հիմնականում բաղկացած էին ծնողներից և մեկ ամուսնացած որդուց (առավել հաճախ փոքր որդու հետ), իսկ որոշ դեպքերում, ընդհանրապես, մեկ սերնդից: Քաղաքում հաստատված երեխաների համար գյուղում ապրող ծնողներն օժանդակության մեծ ռեսուրս էին, որն արտահայտվում էր և՛ բնամթերային, և՛ թե դրամական օգնության ձևով: Ցանցը ձևավորվող հարաբերություններում ստեղծվել է քաղաքի ու գյուղի միջև սոցիալական և մշակութային այն ընդհանրությունը, որը պայմանավորել է մեր

երկրի ողջ բնակչության էթնոսոցիալական զարգացման հետագա ընթացքը:

Այսպիսով, ազգակցական փոխառնչությունների ցանցային վերլուծությունը(17) իրական հնարավորություն է ստեղծում մշակելու էթնոսի տարբեր խմբերի միջև հայրենիքում և սփյուռքում գործող հին ու նոր սփյուռքի սոցիալական կապերի էթնոմշակութային համատեքստի իմաստավորման նոր մոտեցումներ:

Այդ առումով, բավականին արտահայտիչ է ՀՀ Բյուրական գյուղի մի բնակչի տարածքային տեղաշարժի օրինակը: Նրա բարեկամների տեղեկատվության համաձայն, անցյալ տարվա ընթացքում սկզբում նա աշխատել է ՌԴ Վլադիվոստոկ քաղաքում: Աշխատանք գտնելու համար, նա կանգ է առել Ուֆա քաղաքում (Բաշկիրիա)՝ իր հորեղբոր մոտ, որը վաստակում էր ասֆալտապատման աշխատանքներով (տարվա ընթացքում 7-8 ամիս): Այնուհետև ուղևորվել է քրոջ մոտ՝ Վոլգոգրադ, որն այնտեղ ընտանիքով ապրում էր արդեն մի քանի տարի: Դրանից հետո տեղափոխվում է Սոչի՝ մյուս քրոջ մոտ, որն իր ընտանիքով տան և տնտեսության տեր էր դարձել հիմնավորվելով այդ քաղաքում: Սոչիում ապրել է 3-4 ամիս, աշխատել շինարարության ոլորտում և վերջապես նոյեմբերին վերադարձել Բյուրական: Ընդ որում, բոլոր քաղաքներում բարեկամները նրա համար ակտիվորեն աշխատանք էին փնտրում և նա տեղում ընտրում էր այն աշխատանքը, որն իրեն դուր էր գալիս: Դրա հետ մեկտեղ, Ռուսաստանում բնակվող բարեկամներն օժանդակել են նրան և նրա ընտանիքի անդամներին ստանալու Ռուսաստանի քաղաքացիություն:

«Մեկնելու» և «Ժամանելու» բնակավայրերի միջև ձևավորված և կայունացած կապերի մասին կարելի է ներկայացնել նաև այլ օրինակ: Այդ գյուղի բնակիչներից մեկին անհրաժեշտ էր սրտի թանկարժեք վիրահատություն: Վիրահատության համար միջոցներ էր հավաքում ողջ գյուղը, սակայն հիմնական օժանդակությունը ցուցաբերեցին Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի նրա ազգականները: Միայն մեկ գյուղի օրինակով կարելի է բերել բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են պետական սահմաններով իրարից բաժանված ազգականների միջև փոխօգնության և ուժեղ զգացմունքային կապերի մասին: Այդ գյուղի մեկ այլ բնակիչ մարտ ամսից սկսած, ամեն տարի մեկնում է Պյատիգորսկ, աշխատում շինարարության ոլորտում, այնուհետև, մոտավորապես նոյեմբերին վերադառնում տուն, որտեղ մինչ հաջորդ մեկնումը «հանգստանում» է: Այնտեղ, նա ձեռք է բերել հաստատուն կապեր և ընդմիջտ տեղափոխվելու որոշումը կարող է հավանական դառնալ:

Հայաստանի 25 գյուղերում իրականացված մեր հետազոտության տվյալներով նկատվում է նաև հետևյալ օրինաչափությունը: Ռուսաստանում հարմարված միգրանտներից ձևավորվում են միջնորդներ՝ որպես աշխատանքներ իրականացնող բրիգադների կազմակերպիչներ (հիմնականում՝ շինարարական), որոնք Հայաստանում իրենց բարեկամների, հարևանների և համագյուղացիների շրջանից այդ բրիգադների անդամներ են հավաքագրում: Ժամանակի ընթացքում, այդ «միջնորդ-ձեռնարկատերերը» յուրացնում են նաև ձեռնարկատիրության այլ բնագավառներ, մասնավորապես, սպասարկման և առևտրի ոլորտներում: Հենց նրանք են առավել հա-

վանական ռուսաստանցիները: Կարելի է ենթադրել, որ տնտեսական ձեռքբերումների այս ուղին բազմաթիվ այլ ուղիներից մեկն է:

Այսպիսով, հարազատների հետ կապվածությունը, որն ամրագրվում է արյունակցական-ազգակցական ինստիտուտով և ավելանում հարևանական, հայրենակցական հարաբերություններով, ձևավորում է սոցիալական ցանց, որի ներսում տեղի է ունենում տեղեկատվության փոխանակում, ապահովվում է փոխօգնությունը, բավարարվում սոցիալական սպասումներն ու տնտեսական հետաքրքրությունները: Ուստի, կարևոր խնդիր է պետական սահմանով բաժանված, ազգակցական խմբերի շրջանում դրանց դրսևորումների լուսաբանումը: Այդ ուսումնասիրությունը հնարավորություն կտա նկարագրելու սփյուռքի և էթնիկ հայրենիքի միջև փոխառնչություններում տիրող իրավիճակը, առանձնացնել այդ կապերի էթնոսոցիալական բաղադրիչները և դրա հիման վրա որոշել հեռանկարները:

Հարկ է սկսել նրանից, որ բնակավայրի յուրաքանչյուր տիպ ունի ազգակցական կապերի իր ցանցային ներուժը: Ուստի, կարելի է ուսումնասիրել դրանից բխող կամ դրան ուղեկցող հետազա տեղաշարժերի, ֆինանսական հոսքերի, տեխնոլոգիաների փոխանակության, տնտեսական, սոցիալական և մշակութային փոփոխությունների և այլ կարգի հնարավոր գործընթացները:

Քննարկենք դրանք հերթականությամբ.

Առաջին հերթին, հարկ է բացահայտել այդ ներուժը: Հինգ քաղաքների և 25 գյուղական բնակավայրերի տնական հետազոտությունների տվյալների համաձայն, ցանցի ճյուղավորումը

և նրա անդամների միջև կապերի ուժը, համապատասխանաբար նաև սոցիալական ներուժը խիստ փոփոխական են, որը պայմանավորվում է բազմաթիվ գործոններով: Հանրապետությունից դուրս բնակվող ամենամեծ թվով մոտ հարազատներ ունեցող Հայաստանի հինգ քաղաքների շարքում առանձնաձևում է Գյումրին՝ մոտավորապես, հարցվողների կեսը (55%), որը հասկանալի է: Վերապրելով ավերիչ երկրաշարժը և կորցնելով բնակչության 12 տոկոսից ավելին գյումրեցիներն ակտիվորեն արտագաղթում էին քաղաքից: Այնտեղից տեղափոխվողների զգալի մասը հիմնավորվել է Ռուսաստանում: Երիտասարդ սերնդի միգրացիայի արդյունքում այդ գործընթացը հանգեցրեց ընտանիքների մասնատմանը: Այդ ցուցանիշով Գյումրիին մոտ է Գավառը, որը մերձակա գյուղերի հետ միասին այլ տարածաշրջաններից տարբերվում է Ռուսաստանի հետ տնտեսական (աշխատանքային) կապերի հին ավանդույթներով: Այնուհետև նրանց հետևում է Կապանը, որը վերապրել է ոմբակոծությունների ծանր տարիները, արդյունաբերական արտադրության փլուզումը: Ամենացածր տվյալները պատկանում էին Իջևանին և Երևանին:

Գյուղական բնակավայրերի համեմատությունը ցույց տվեց այդ հատկանիշի էական ցրվածությունը, որը պայմանավորվում էր դրանց մեծությամբ, հանրապետության տարածքում տեղադրությամբ և բնակլիմայական պայմաններով: Ընդհանուր առմամբ նկատվում է հետևյալ օրինաչափությունը. որքան մեծ է բնակավայրը, տեղանքը բարձրադիր է, մոտ է խոշոր քաղաքներին, այնքան ավելի բարձր են հանրապետությունից


դուրս գտնվող հարազատների և ծանոթ մարդկանց վերաբեր-
յալ ցուցանիշները:

Ազգականներից և բարեկամներից բացի, ի՞նչն է կապում այդ
մարդկանց հայրենիքի հետ: Ամենայն հավանականությամբ,
Հայաստանում թողած նրանց ունեցվածքը՝ անշարժ գույքը,
ձեռնարկությունը, բիզնեսը: Կապի այդ հատկանիշների գոյու-
թյունը կամ բացակայությունը կարող են վկայել, մի կողմից ել-
քի վայրի հետ լրիվ կապերի խզման (չվերադառնալու վճռա-
կանությամբ) կամ ընդհակառակը, նոր բնակավայրում անհա-
ջողության նկատառումներից ելնելով Հայաստանից մեկնելիս
«համենայն դեպս, դրանք թողնել որպես պահուստային օդա-
նավակայան»: Մյուս կողմից, ունեցվածքի գոյությունը կարող է
վկայել հայրենիքում անշարժ գույք, արտադրություն, բիզնես
ունենալու ակտիվ ձգտմամբ: Այդ ամենը կարող է պայմանա-
վորված լինել Հայաստանում բարեկամներ ունենալով, որոնք
այդ ունեցվածքի պահպանման, բիզնեսի կառավարման և այլ
հարցերի երաշխավորն են: Հավանաբար, սա հայրենիքում
մնացած հարազատներին և բարեկամներին օգնության ձև է:
Պատահական չէ, որ առաջինները կազմում են Հայաստանում
ունեցվածք պահպանածների երկու երրորդը, իսկ երկրորդնե-
րը, ընդամենը տասներորդ մասը: Ուստի այն փաստը, որ Ռուս-
աստանում բնակվող Հայաստանից գաղթածների շրջանում
ավելի շատ են հայրենիքում ունեցվածք պահպանողները (միգ-
րանտներին բարեկամ հարցվողների ավելի քան երկու երրոր-
դը), քան Եվրոպայում, նախկին միության երկրներում, ԱՄՆ-
ում և Կանադայում: Այստեղ ազդում են հեռավորության, սահ-
մանների թափանցիկության (այն հատելու հնարավորություն-

նը), այդ երկրների հետ Հայաստանի պատմականորեն մոտ լինելու գործոնները:

Նկ.3.1.

Տարբեր երկրներում բնակվող արտանգաղթածների
Հայաստանում թողած ունեցվածքը




Ռուսաստանը, որպես նախկին միության երկիր, պատմականորեն մերձ լինելով Հայաստանի հետ, միգրանտները համարում են մշակութային, սոցիալական ու քաղաքական առումով մատչելի և ընդհանուր տարածք: Այդ իսկ պատճառով, եթե Հայաստանում գործունեություն ծավալելը, անշարժ գույքը պահպանելն ավելի հնարավոր է դառնում, ապա Ռուսաստանում բնակվող վերաբնակիչը հայրենիքի հետ իր կապերը չի ընդհատում: Ի տարբերություն այս միգրանտների, այլ երկրներ գաղթածներն ավելի են հակված կտրվելու իրենց արմատներից և օտարվելու հայրենիքից:

Վերջին գործընթացը, հավանաբար, կախված է նոր միջավայրում միգրանտի ադապտացիոն գործընթացից: Այսպես, եթե նոր վայրում մինչև երկու տարի բնակվողների շրջանում հայ-

րենիքում ունեցվածք ունեցողների բաժինը կազմում է 75%, ապա 10 տարուց ավելի բնակվողների շրջանում՝ 33 %, այսինքն՝ երկու և ավելի անգամ պակաս: Ընդ որում, մինչև 10 տարին այդ գործընթացն աննկատելի է, սակայն, 10 տարուց հետո այն կտրուկ ակտիվանում է: Մոտավորապես նման օրինաչափություն է նկատվում նաև Հայաստանում մնացած հարազատներին օգնության գնահատումների ցուցիչների և Հայաստանից դուրս գտնվելու տևողության միջև փոխադարձ կապերում:

Նկ.3.2.

Էմիգրացիայի տևողությունը
և Հայաստանում ունեցվածքի առկայությունը



Որքան երկար է այդ ժամանակահատվածը, այնքան մեծ է Հայաստանում գտնվող իրենց հարազատներին որևէ օգնություն չցուցաբերողների քանակը: Այսպես, մինչև երկու տարի Հայաստանից դուրս գտնվողների շրջանում իրենց մոտ մարդկանց և բարեկամներին ընդհանրապես օգնություն չցուցաբե-


րողները կազմում են 40%, իսկ 10 տարուց ավելի բնակվողների շրջանում՝ 60%:

Ինչպես վերը նշվել է, հայրենիքում բնակվող իրենց բարեկամներին ցուցաբերվող օգնությունը կարող է խիստ բազմատեսակ լինել: Առավել տարածված է գումար ուղարկելը, որի ինտենսիվությունը հետազոտության ընթացքում չափվել է հարցվողների գնահատումներով՝ «մշտապես», «երբեմն», «երբեք» պատասխանների տարբերակների միջոցով: Սովորաբար, այդպիսի օգնություն ավելի հաճախ ցուցաբերում է ամուսինը Հայաստանում գտնվող իր կնոջը: Հարցվողների երկու երրորդը կնոջն օգնում են մշտապես, մնացած մեկ երրորդը՝ երբեմն: Վերջին դեպքում ակնհայտ է ամուսինների միջև կապերի խզումը: Հարցվողների երկու երրորդը դրական են գնահատում հանրապետությունից դուրս գտնվող իրենց ծնողների օգնությունը: Փոքր-ինչ սակավ է գնահատվում երեխաներին և ավելի պակաս չափով եղբայրներին ու քույրերին ցուցաբերվող օգնության մասշտաբները: Իր հարազատներին և բարեկամներին օգնության մյուս տեսակը կախված է նոր վայրում էմիգրանտի ձեռք բերած հաջողությունների մակարդակից: Եթե նրանք զգալի հաջողությունների են հասել, ապա բարեկամներին ցուցաբերվող օգնությունը կարող է ավելի առարկայական լինել, օրինակ՝ անշարժ գույք, ձեռնակություն և այլն: Այսպես, Բյուրական գյուղում, Ռուսաստանում բնակվող արտագաղթածներից մեկը գնել է գյուղի նախկին ունիվերսամը, վերանորոգել այն, ֆինանսավորել է նախնական կապիտալը և այդ ունեցվածքն ու բիզնեսը (առևտուրը) փոխանցել եղբորը: Այդ նույն գյուղում, սփյուռքի մեկ այլ ներկայացուցիչ գնել է գործարանա-

յին շինություն, վերանորոգել, կազմակերպել եվրոպատուհանների և եվրոդոնների արտադրություն ու փոխանցել իր եղբորը: Երկու դեպքում էլ, սեփականատերերից և ոչ մեկը իրենց բարեկամներից չի պահանջել եկամուտը կիսել: Այդ բիզնեսը կառավարող անձանց տեղեկատվությամբ, ամբողջ եկամուտը մնում է իրենց:

Բյուրականի բնակչությունն օգնություն է ստանում նաև Ֆրանսիայից: Այս գյուղի հետևյալ օրինակով բավականին պատկերավոր է ցանցի գործունը: Բյուրականի գյուղապետ ընտրելու կապակցությամբ գյուղի նախկին բնակիչների և արտագնացների (ներառյալ ՀՀ-ի այլ բնակավայրերում ապրող անձինք) մեծ մասը թողնելով իրենց գործերը, չկանգնելով մեծ ծախսերի առջև, (մի մարդ անգամ ժամանել էր Մախալինից), եկել էին մասնակցելու այդ գործողությունների ընթացքին: Կարևոր այն էր, որ բոլորը դժգոհ էին նախկին գյուղապետից և ուզում էին, որ գյուղում նոր գյուղապետի շնորհիվ կարգուկանոն հաստատվեր: Գյուղը բարեկարգելու և նրա տեսքը գեղեցկացնելու համար նախկին բնակիչները դրամահավաք էին կազմակերպել և գյուղապետարանին տարբեր տեսակի նվիրատվություններ արել:

ՀՀ-ից դուրս բնակվելու ժամանակաշրջանի կապը հայրենիքում իրենց հարազատներին և բարեկամներին էմիգրանտների ցուցաբերած օգնության հաճախականության գնահատումների հետ




Որոշ դեպքերում, նոր սփյուռքի ներկայացուցիչների կողմից հարազատներն ու բարեկամները դիտվում են որպես հայրենիքում սեփական բիզնեսը զարգացնելու աշխատանքային ռեսուրս, իսկ որոշ դեպքերում՝ հանրապետության իշխանական բարձր ոլորտներ մուտք գործելու հնարավորություն: Կարելի է բերել ռուսական խոշոր գործարարների օրինակները (Սամվել Կարապետյանի, Արա Աբրահամյանի և այլոց), որոնց ազգականները Հայաստանում զբաղեցնում են որոշակի քաղաքական դիրքեր:

Սոցիալական ցանցի ազդեցության հատկանիշներից է նրա մեջ առաջացող ռեէմիգրացիոն տրամադրությունները: Հայաստանի տնտեսական վիճակից է կախված արտագաղթածների մի մասի դեռևս հնարավոր հետադարձ հոսքը, որոնք հաջող

չեն ադապտացվել: Այս գործընթացի զարգացման հնարավորությունների նշանակությունը չի կարելի թերագնահատել: Մի կողմից ռեէմիգրացիոն տրամադրությունները ողջ հանրապետության և առանձին տարածաշրջանների ու բնակավայրերի իրավիճակի ցուցիչներ են: Մյուս կողմից, հայրենիք վերադառնալու էմիգրանտի ձգտումը կարող է որպես նոր միջավայրից օտարման չափի իրական ցուցիչ լինել: Այն կարող է վկայել նաև նրանց կողմնորոշումների անհամապատասխանության (կամ ընդհակառակը), դիրքորոշումների և ընդհանրապես, այն ամենի մասին, ինչը խթանում է նրանց տեղաշարժը: Ստորև բերված փոխադարձ կապերը որոշակի պատկերացում են տալիս Հայաստանից դուրս գտնվող էմիգրանտների ռեէմիգրացիոն պոտենցիալի մասին:


Նկ 3.4.

Էմիգրանտների ազգակցության աստիճանը և Հայաստանում բնակվող բարեկամներին նրանց ցուցաբերած օգնության հաճախականության գնահատումները




Նկ.3.5.

Հայաստանում էմիգրանտի սեփականության առկայության կապը նրանց վերադառնալու ցանկության հետ ա/քաղաքային բնակչության ազգականները



բ/գյուղական բնակչության ազգականները



Ռեէմիգրացիոն տրամադրությունները պայմանավորող բազմաթիվ գործոնների շարքում հարկ է առանձնացնել նրանք, որոնք իրականորեն ազդում են հայրենիք վերադառնալու էմիգրանտի որոշման վրա: Դրանք հայրենիքից դուրս գտնվելու ժամանակաշրջանի, նոր միջավայրում սոցիալական նվաճում-

ների (որպես հաջող ադապտացիայի ցուցիչ), Հայաստանում բնակվող բարեկամների հետ մոտ լինելու աստիճանի, Հայաստանում էմիգրանտի թողած սեփականության կամ բիզնեսի հետ կապված գործոններն են:

Էթնոսոցիոլոգիական հետազոտությունների նյութերի տվյալները, որոնք բացահայտում են էմիգրանտների նման հատկանիշների բովանդակությունը, հնարավորություն են տալիս գնահատելու հայրենիք վերադառնալու նրանց մտադրությունները և հետագա պլանները: Միևնույն ժամանակ, այդ հատկանիշների համահարաբերակցությունն իրար հետ, ինչպես նաև Հայաստանում բնակվող նրանց ազգականների հատկանիշների հետ (օրինակ, քաղաքում կամ գյուղում բնակվելը), կոգնի ստանալու այդ հատկանիշների տարբերակման որոշակի չափանիշներ, որը հնարավորություն կտա որոշել էմիգրանտների հետագա վարքի վրա դրանց ազդեցության կարևորության աստիճանը:

Հետ վերադառնալու էմիգրանտի ցանկության վրա ազդող այդ հատկանիշներից առաջինը Հայաստանում որևէ սեփականություն ունենալն է: Դրա միջոցով կարելի է ուսումնասիրել հայրենիքի հետ միգրանտի կապերի բնույթը: Հայրենիքում անշարժ գույք կամ սեփական «գործ» ունենալը վկայում է էմիգրանտների մտադրությունների մասին: Այս դեպքում նրանց վերադարձն արդարացված է և հավանաբար կարող է ավելի հաճախ տեղի ունենալ, քան սեփականություն չունեցողների շրջանում: 5-րդ նկարում այդ կապը ցայտուն կերպով է արտահայտվում միայն նախկին քաղաքաբնակների առումով, որոնց Հայաստանում թողած սեփականությունը ռեէմիգրացիայի կարևոր խթան է:

Հայրենիքում թողած սեփականությունը վկայում է, մի կողմից՝ սեփական արմատներից էմիգրանտների ոչ ամբողջապես կտրվելու, այնուամենայնիվ հետ վերադառնալու մասին, մյուս կողմից՝ այն հույսերով, որ Հայաստանում պայմանները ժամանակի ընթացքում կարող են բարելավվել, կամ օգտվելով օտար երկրում «Ժամանակավոր» բնակության վայրում իրեն ընձեռված հնարավորությունից, կուտակել միջոցներ, որպեսզի կարողանա բարեկեցիկ անցկացել մնացած կյանքը հայրենիքում: Ամենայն հավանականությամբ, այդպիսի փոխադարձ կապեր պետք է, որ գոյություն ունենային նաև գյուղական բնակչության շրջանում: Սակայն ներկայացված գրաֆիկում չի նկատվում, որը կարելի է բացատրել քաղաքի համեմատ գյուղ վերադառնալու ավելի մատչելի պայմանների մասին: Գյուղում մնում են ազգականները, որոնց հետ դուրսին է դասավորել կյանքը, անկախ նրանից, կա՞րողյոք սեփականություն, թե ոչ: Այդ իսկ պատճառով, գյուղից մեկնած էմիգրանտների վերադառնալու ցանկությունը, ի տարբերություն քաղաքից մեկնածների, թողած սեփականությունից այդպիսի խիստ կախվածություն չունի:

Ռեէմիգրացիոն տրամադրությունների և անձամբ արտագաղթածների հատկանիշների միջև կապի հաջորդ երեք ցուցիչները պայմանավորված են այդ երկրի պայմանների, այնտեղ գտնվելու ժամանակահատվածի և հանրապետության քաղաքային ու գյուղական բնակչության շրջանում հարազատների մոտ լինելու հանգամանքներով (տե՛ս նկ. 3.5): Անկախ բնակավայրի տիպից վերադառնալու ցանկության և ազգակցական հարաբերությունների մոտ լինելու ցուցիչների միջև կապը ակնհայտ է: Որքան մոտ է ազգակցության աստիճանը, այնքան

ավելի ցայտուն է դրսևորվում ռեեմիգրացիայի ցանկությունը: Ընդ որում, քաղաքաբնականների համար ազգակցական կապերի մտերմության շրջանակը որոշ չափով սահմանափակվում է վայրընթաց գծով ազգականներով, իսկ գյուղաբնակների մոտ այն ընդգրկում է նաև կողմնային գծով ազգականներին:

Այսպիսով, ազգակցության և ռեեմիգրացիոն տրամադրությունների միջև համահարաբերակցական կապերը ցույց են տալիս, որ այսօր գյուղի և քաղաքի ավանդական արյունակցական-ազգակցական դիրքորոշումների միջև գոյություն ունի էական տարբերություն, որը նկատելի հետք կթողնի Հայաստանի նախկին քաղաքաբնակների և գյուղաբնակների հետագա հնարավոր ռեեմիգրացիոն գործընթացների վրա: Այս օրինաչափությունը հաստատում են նաև քաղաքաբնակների համեմատ գյուղաբնակների ռեեմիգրացիոն տրամադրությունների ավելի բարձր ցուցանիշները: Հայաստանից մեկնած էմիգրանտների «ելքի» բնակավայրի տիպի և նոր բնակության երկրի ու հայրենիք վերադառնալու մտադրության միջև համահարաբերակցության վերլուծության ընթացքում բացահայտվեց նմանատիպ կախվածություն: Եթե Հայաստանի նախկին քաղաքաբնակների շրջանում վերադառնալու մտադրությունը և գտնվելու երկրի ու հայրենիքի միջև հեռավորությունը ուղղակի կապ ունեն (որքան հեռու է այդ տարածությունը, այնքան փոքր է վերադառնալու ցանկությունը), ապա նախկին գյուղաբնակների մոտ այդպիսի կախվածություն չի նկատվում: Հայրենիք վերադառնալու տրամադրությունները պայմանավորող վերջին և խիստ կարևոր գործոնն է նոր միջավայրում ռեեմիգրանտի բնակվելու ժամանակահատվածը: Վերը ներկայացված գրաֆիկում այդ

փաստը հստակորեն նկատվում է: Հայաստանի նախկին քաղաքաբնականների և գյուղաբնականների համար ընդհանուր միտումն այն է, որ որքան երկար է այլ վայրում գտնվելու ժամանակահատվածը, այնքան փոքր է վերադառնալու ցանկությունն ունեցողների քանակը: Այդ երկու խմբերի ցուցանիշները նման էին նաև էմիգրացիայում ընդամենը մեկ տարի գտնվողների առումով (տե՛ս նկ.3.6, գրաֆիկ 3):




Նկ.3.6.

Հայաստանի քաղաքային և գյուղական բնակչության ազգականների վերադառնալու ցանկության կախվածությունը հիմնական գործոններից

ա/ էմիգրանտի ազգակցության աստիճանից

բ/ բնակվելու երկրից

գ/այլ երկրում գտնվելու ժամանակահատվածից



Հանրապետության նախկին քաղաքաբնականների շրջանում ռեէմիգրացիոն տրամադրությունները, գյուղաբնականների համեմատ, ընդհանուր առմամբ ավելի թույլ են արտահայտվում: Հայաստան վերադառնալու մտադրություն ունեցողների քանակը կտրուկ անկում է ապրում:

ՀՀ նախկին գյուղաբնակների ռեէմիգրացիոն ցանկությունների «կարծրությունը» կարելի է բացատրել երկու պատճառով: Առաջին պատճառն արդեն նշվել է: Այն պայմանավորվում է ավանդական դիրքորոշումներով, որոնք ավելի կենսունակ են գյուղում: Սա լավ է պատկերում գյուղաբնակների շրջանում ընտանեկան-ազգակցական հարաբերությունների ավելի հուզական բովանդակությունը, սեփական արմատներին ավելի մեծ կապվածությունը: Երկրորդ պատճառն այն է, որ նոր բնակության վայրում, քաղաքաբնակների համեմատ, գյուղաբնակներն ադապտացման ավելի համեստ հնարավորություններ ունեն: Նախկին գյուղաբնակները այլեթնիկ միջավայրում ավելի են հակված հայրենակցական կապերի մեջ մտնել իրենց ազգականների, համերկրացիների հետ, քան քաղաքաբնակները: Հետևաբար, ձևավորվում է հուզական երևույթ, որը ձեռք է բերում սոցիալ-տնտեսական հատկություններ: Պատահական չէ, որ գյուղից արտագաղթածները, անկախ էմիգրացիայում գտնվելու ժամանակահատվածից, վերադառնալու հիմնական պայման հստակորեն նշում են աշխատանք ունենալու անհրաժեշտությունը: Գյուղի արտագաղթածների ավելի «նյութական» պահանջումները (աշխատանք, բիզնես) և այլ պատճառների բացակայությունը վկայում են այն մասին, որ գյուղական բնակավայրերից էմիգրացիան պայմանավորվում է միայն կենսապահովման խնդիրներով: Մնացած սոցիալական, քաղաքական, անգամ օրհասական (բանակ, պատերազմական գործողությունները չվերսկսելու երաշխիքները) բնույթի հարցերը նրանց համար այնքան էլ ծանրակշիռ չեն, որքան հանրապետության քաղաքներից գաղթածների համար: Որքան երկար է

տևում հայրենիքից հեռու վերջիններիս բնակվելու ժամանակը, այնքան մեծ է նմանատիպ բովանդակությամբ դրդապատճառների բաժինը: Հավանաբար էմիգրացիայում գտնվող Հայաստանի նախկին քաղաքաբնակների շրջանում ժամանակի ընթացքում տեղի է ունենում հայրենիքից դուրս գալու շարժառիթների «ռացիոնալիզացում»:


Այն հազեցվում է ավելի «ծանրակշիռ» հոգեբանական, սոցիալական, քաղաքական բովանդակությամբ, որը կարծես թե ավելի շուտ բացատրում է հետ չվերադառնալու պատճառները:

Այլ միջավայրում բնակվելու ժամանակը աղապատացիայի գործընթացի զարգացման օրինաչափ գործոններից ընդամենը մեկն է, որը դրսևորվում է հետ վերադառնալու մտադրություններում և հստակ ուրվագծվում ռեէմիգրացիայի հնարավոր պայմանների մասին նշումներում: Այդ գործընթացի հաջորդ ցուցիչը կարող է դառնալ էմիգրանտի բնակվելու երկիրը: Արդեն նշված օրինաչափությունների ֆոնի վրա պարզվեց, որ այդ գործոնը բավականին ծանրակշիռ դեր ունի, որը կարելի է բացատրել մի քանի պատճառներով:


Ռուսաստանի հայերը, մյուս երկրներում բնակվողների համեմատ, հայրենիք վերադառնալու իրենց պատճառաբանություններում կարևորում են աշխատանքով ապահովվելու անհրաժեշտությունը, այն դեպքում, երբ մյուս երկրների «ներկայացուցիչները» նշում են այլ կարգի շարժառիթներ (տե՛ս նկ.3.8-ը): Այս երևույթի հիմնական պատճառների մասին արդեն խոսվել է սույն գլխի սկզբում և նախորդ գլխում, ուստի լրացուցիչ պարզաբանումներ ներկայացնելու հարկ չկա:

Նկ. 3.7.

Այլ երկրում էմիգրանտի բնակվելու ժամանակի կապը
Հայաստան հավանական ռեէմիգրացիայի շարժառիթների հետ
ա/ Հայաստանի քաղաքային բնակչություն



բ/ Հայաստանի գյուղական բնակչություն




Հայրենիք վերադառնալու մտադրությունների ձևավորման վրա ազդող կարևորագույն գործոնների շարքին է դասվում նոր վայրում էմիգրանտի սոցիալական «նվաճումները»: Մինչ այդ կարգի գործոնին անդրադառնալը, հարկ է նշել, որ Հայաստանի քաղաքների և գյուղերի նախկին բնակիչների վերադառնալու մտադրությունների վրա ազդող վերը ներկայացված այս կամ

այն պատճառների նշանակությունը վերլուծելիս, սոցիալական նվաճումների մասին, որպես հաջող ադապտացիայի ցուցիչ, անուղղակի կերպով արդեն նշվել է:


Նկ.3.8.

Հայրենիք հնարավոր վերադարձի պայմանների կապը
ազգականների բնակության երկրի հետ

Հայաստանի քաղաքային
բնակչություն



Հայաստանի գյուղական
բնակչություն




Նկ. 3.9-ում արդեն ներկայացվել են էմիգրանտների սոցիալական հատկանիշների (սոցիալ-մասնագիտական) փոխադարձ կապերը էթնոսոցիոլոգիական հետազոտություններն ընդգրկող ժամանակաշրջանում, որոնք զբաղվել են Հայաստանի քաղաքների և գյուղերի հարցվողների պատասխաններում: Դրանցից երևում է, որ արտագաղթածների՝ հայրենիք վերադառնալու ցանկության և բնակության երկրում նրա արդի վիճակի միջև գոյություն ունի ցայտուն հետադարձ կախված-

ություն: Փաստորեն, էթնոսոցիոլոգիական հետազոտությունների տվյալները հաստատում են ընդհանուր օրինաչափությունը, այն է՝ ադապտացիայի աստիճանի ազդեցությունը նոր միջավայրում այդ տիպի բնակչության ամրապնդման վրա:


Նկ. 3.9.

Ռեէմիգրացիայի ցանկության կախվածությունը
էմիգրանտ-ազգականների սոցիալական դիրքերից

Հայաստանի քաղաքային
բնակչություն



Հայաստանի գյուղական
բնակչություն



Այսպիսով, արտագաղթածների հետ կապերի, արյունակցական-ազգակցական ցանցերի գոյության, ռեէմիգրացիոն տրամադրությունների վերաբերյալ նրանց ազգականների սուբյեկտիվ պատկերացումների վրա հիմնված հետազոտությունը բացահայտում է վերջին քսան տարում տեղի ունեցած միգրացիոն գործընթացների էթնոսոցիալական հետևանքների բովանդակությունը և որոշ չափով դրանց զարգացման հեռանկարները: Հենց այդ պատճառով է աշխատանքի սույն գլուխն

ամփոփվում ապագայի ռեւիզիայի հավանական գործընթացների ակնկալիքների վերլուծությամբ, որոնք նախապես շոշափվել են հայրենիք վերադառնալու արտագաղթածների ցանկության և դրանք ձևավորող գործոնների փոխադարձաբանական վերլուծության մեթոդով: Ակնհայտ է, որ հետազոտության ընթացքում գրանցված Հայաստանի առկա բնակչության և մեկնածների պատկերացումներն ու սպասումները մեծ մասամբ արտացոլում են Հայաստանում տիրող իրավիճակը: Ուստի քաղաքաբնակների և միգրանտների հատկանիշների - հիման վրա հնարավոր է պատկերացում կազմել մեր երկրում և նրա սահմաններից դուրս իրականացվող հայ ազգաբնակչության միգրացիայի արդի իրավիճակի մասին:

Ծանոթագրություններ

1. Р. Грдзелян, О некоторых экономических итогах и специфике качества жизни населения Армении. Ст' у ИАРЕГNUM <http://www.regnum.ru/news/fdabroad/armenia/1726950.html#ixzz2jUFZIJIC> :
2. Ст' у նույն տեղում:
3. Ст' у Р. Карапетян, Миграционные процессы в городах Армении..., с. 5-13:
4. Ст' у նույն տեղում:
5. Ст' у Caucasus Research Resource Centers (CRRC) – Armenia - www.crrc.am:
6. Երբ այստեղ պայմանները թույլ չեն տալիս ինձ առաջընթաց ունենալու, սոցիալապես աճելու կամ կյանքական բարիքներով ապահովվելու, ապա ավելի լավ է մեկնել որևէ բարեկամի մոտ, որն իր դիրքով ինձ համար հնարավորություն կստեղծի հասնելու ցանկալիին, անկախ նրանից, թե որտեղ է նա ապրում:
7. Ինչպես ժողովրդական ասացվածքն է ասում՝ «իրար տեսնելով են (հաղորդակցվելով) սրտերը տաքանում»:

8. Կարևոր չէ, թե ես որտեղ եմ ապրում, այլ կարևոր է, թե ինչպես եմ ես ապրում: Կարևոր է այն հանգամանքը, թե ինչպիսի ռեսուրսների է տիրապետում իմ բարեկամը, այլ ոչ այն, թե որտեղ է նա բնակվում:
9. Կարապետյան Բ.Ս. Армянская семья в контексте переходного периода. Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, ՀՀ ԳԱԱ "Գիտություն" հրատարակչություն, Երևան, 2001, էջ 55:
10. Կարապետյան Է.Տ. Кровнородственная группа "азг" у армян. Из-во АН Армянской ССР, Ереван 1966, с.25.
11. Կարապետյան Է.Տ. Этнические особенности семьи. В: Население Еревана. Этносоциологические исследования, Из-во АН АрмССР, Ереван, 1986, с.121.
12. Դրա մասին տե՛ս Կարապետյան Բ.Ս. Формирование населения Еревана. В: Население Еревана. Этносоциологические исследования, Ереван И-во АН Арм.ССР, 1986, с.66:
13. «Մոնիթինգը Երևանի մասին» տե՛ս Կաստելս Մ., Կիսելևա Է. Россия и сетевое общество, Россия в конце XX века, Материалы конференции в университете Стенфорда, состоявшейся 5-7 ноября 1998г. с 3:
14. Կարապետյան Բ.Ս. Формирование населения Еревана. В: Население Еревана..., с. 61.
15. Երկրի տնտեսական ծանր վիճակը մարդկանց ստիպում է մեկնել ՌԴ, ԱՄՆ և այլ երկրներ փող վաստակելու համար: Այսպիսով ընտանիքի կերակրողը հիմնականում գտնվում է ՀՀ-ից դուրս, այն դեպքում, երբ ընտանիքի մյուս անդամները, կամ ընտանիքի մի մասը մնում է Հայաստանում: Այդ գործընթացների մասշտաբները բավականին ծավալուն են:
16. Boyd M. Family and personal networks in international migration: Recent developments and new agenda // International Migration Review. 23(3). P. 238-270.
17. Barnes J. Networks and political process., -In :Social networks in urban situation. Analyses of personal relationships in central African towns. Ed.J.C.Mitchell.Manchester, 1969, p.56.

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայերի արտագաղթը հին և նոր սփյուռքի ձևավորման հիմնական աղբյուրն է: Այն խթանվում էր էթնիկական, սոցիալական, տնտեսական և քաղաքական բնույթի բազմաթիվ պատճառներով: Պատմական կոնկրետ փուլում որոշ պատճառներ այդ գործընթացներում կարող էին գերակայող դեր կատարել, իսկ մյուսները՝ շարժունակ բնակչության պահանջմունքների համակարգում հետին պլան մղվել: Դրան նպաստում էին արտաքին և ներքին բնույթի գործոնները:

Կյանքի պայմաններն ապահովող երևույթները՝ աշխատանքը, տնտեսական ու քաղաքական ազատությունը, անվտանգությունը և այլն ձևավորում են արտաքին բնույթի գործոնները, որոնք առաջացնում են տարբեր խմբերի ներհոսքի և արտահոսքի խթաններ: Դրանք պայմանավորված են հանրապետության պայմանների փոփոխությամբ: Այսպես, Առաջին Հանրապետության տարիներին գործում էին կենտրոնախույս ուժերը, որոնք բնակչության արտահոսքի պայմաններ էին ստեղծում, Երկրորդ Հանրապետության շրջանում՝ կենտրոնաձիգ ուժերը, որոնք նպաստում էին ներհոսքին, իսկ Երրորդ Հանրապետությունում զարգացան այն կենտրոնախույս գործոնները, որոնք նպաստեցին բնակչության շարժունակությանը: Էթնոսի նորագույն պատմության ընթացքում հայտնի ճգնաժամային երևույթների պատճառով ինտենսիվացավ հայ ազգաբնակչության արտահոսքը ինչպես հոծ բնակչության գոտիներից (Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից, Հյուսիսային Կովկասից, Մերձավոր և Առաջավոր Արևելքից), այնպես էլ ցրված բնակչության տարածաշրջաններից:

Ներքին բնույթի գործոնների շարքին է դասվում բնակչության ընտրովի վերաբերմունքը արտաքին պայմանների նկատմամբ, որը պայմանավորվում է սոցիալական, ժողովրդագրական, էթնոմշակութային բնույթի առանձնահատկություններով: Այս երկու խումբ գործոնները պայմանավորեցին հայ բնակչության տեղաշարժերի դինամիկան XX դարի վերջին և XXI դարի սկզբին, որը բազմաթիվ խնդիրներ հարուցեց ինչպես այդ խմբերի ելքի, այնպես էլ նոր բնակության վայրերում:

Այս բավականին բազմակողմանի և բարդ գործընթացի ուսումնասիրությունը պահանջում է որակապես նոր տեղեկատվական ռեսուրս, որը կարող է ապահովել իրադարձությունների համայնապատկերի ամբողջական նկարագրությունը և հիմք դառնալ արդեն գոյություն ունեցող նյութերի համակարգման համար: Այդպիսի ռեսուրս են պարունակում Հայաստանում իրականացված համադրական հինգ էթնոսոցիոլոգիական հետազոտությունների նյութերը, որոնք բավականին ծավալուն տեղեկություններ են պարունակում վերջին 30-40 տարիներին տեղի ունեցած բնակչության ժամանակավոր (կարճաժամկետ և սեզոնային) և անվերադարձ տեղաշարժերի վերաբերյալ: Եթե առաջինները գրանցվել են այդ գործընթացի անմիջական մասնակիցների միգրացիոն վարքի մասին տվյալների միջոցով, ապա երկրորդները՝ էմիգրանտների հարազատների և ազգականների հաղորդած տեղեկատվության հիման վրա: «Սոցիալական հիշողության» նման աղբյուրին անդրադառնալը հնարավորություն է տվել իրականացնելու միգրացիոն գործընթացների և հայկական նոր սփյուռքի ձևավորման բովանդակյից և հավաստի հետահայաց ուսումնասիրությունը ներսից,

սոցիալական այն ցանցի լույսի ներքո, որի ձևավորման և գործունեության հիմքը արյունակցական-ազգակցական հարաբերությունների ավանդույթն է: Բնակչության «արտամղման» ընդհանուր պայմաններն անդրադարձան հանրապետության քաղաքային և գյուղական բոլոր բնակիչների տեղաշարժերի ինտենսիվացման դինամիկայի և միգրացիոն սպասումների վրա: Դա գրանցվել է հանրապետությունից մեկնումների հաճախականության, արտագաղթելու մտադրությունների և այլ տվյալների համադրման միջոցով, որի ֆոնի վրա բավականին հստակ պատկերվել է բնակչության տարբեր խմբերի ընտրովի վերաբերմունքը միգրացիոն խթանների նկատմամբ: Բնակչության մի մասը հանրապետության համար բավականին օրհասական պայմաններում գոյատևելու համար դիմում է արտագնացությանը՝ սեզոնային աշխատանքներին, որն ավելի բնորոշ է փորձություններին դիմացող բնակչության մի մասին՝ գյուղացիությանը: Նրանց շրջանում Հայաստանից գաղթելու մտադրություն ունեցողները ավելի սակավ են: Նրանք արտասահմանում ավելի քիչ ազգականներ ունեն: Գյուղացիության արտահոսքը զսպող գործոնը ոչ միայն սեփական արմատներին նվիրվածությունն է, այլև քաղաքաբնակների համեմատ նոր միջավայրի ավելի թույլ սոցիալական ընկալումը: Ընդհանուր բնույթի գործոնների (աշխատանքի բացակայությունը, կենցաղի չկարգավորվածությունը և այլն) նկատմամբ այսպիսի ընտրովի վերաբերմունքը բնորոշ է նաև առանձին սոցիալ-ժողովրդագրական խմբերին: Հարկ է դրան գումարել նաև միգրացիայի առանձին տեսակների նկատմամբ ավանդական պատկերացումների դերը:

Հայաստանում գոյություն ունեցող կյանքի բավականին խնդրահարույց պայմաններում, որը պայմանավորված է շրջափակման արդյունքում հանրապետության մեկուսացմամբ, տնտեսության օլիգարխիկ մենաշնորհով, աշխատանքի բացակայությամբ (ինչպես ՆՄ բոլոր հանրապետություններում), թանկությամբ և այլն, գյուղական բնակչությունը, այնուամենայնիվ քաղաքաբնակների համեմատ շատ ավելի հաճախ է ընտրում սեզոնային միգրացիան: Քաղաքաբնակներն ավելի հաճախ են կողմնորոշվում դեպի վերջնական մեկնումը, քանի որ նախկին միջավայրում շրջապատի հետ նրանց հարաբերություններն ավելի գործառնական են և անդեմ, հետևաբար նրանց համար ավելի դյուրին է այնտեղից «կտրվելը»: Հարկ է հաշվի առնել նաև միգրացիոն վարքի տեսանկյունով մի հետաքրքիր փաստ, որը բնորոշ է քաղաքաբնակների այն խմբերին, որոնք տեղաբնակներ կամ հնաբնակներ չեն: Այս համակազմը բոլորից արագ է կտրվում բնակության վայրից այն պատճառով, որ այդ վայրը նրա համար լիովին հարազատ չէ: Մեկ անգամ փոխելով բնակության վայրը, նա կարող է այն նորից փոխել: Այդպիսի համակազմի ձևավորումը պայմանավորված է մի քանի պատճառով: Առաջին պատճառը կապված է փոքր հայրենիքի սոցիալական ինքնության հոգեբանական կորստով և նորը ձեռք չբերելով, քանի որ սոցիալ-մշակութային տարածքը դեռևս լրիվ չի յուրացվել: Երկրորդ պատճառը թաքնված է սոցիոմշակութային առումով այդ մարզինալ խմբի ձգտմամբ հասնելու սոցիալական որոշակիության, նոր սոցիալական տանիքի, որտեղ նրանց կարգավիճակը (հիմնականում ծագումնաբանական) դեպի լավը փոխվելու հավանականությունը մեծ է: Եր-

որորդ պատճառը կապված է այդ շարժունակ բնակչության սոցիալական դինամիկությամբ: Նրանք մյուս խմբերից ավելի մեծ չափով են զգում պայմանների վատթարացման նշանները և արագ են արձագանքում կյանքի բարելավման խթաններին, քանի որ համադրելու և համեմատելու հնարավորություն ունեն: Այդ իսկ պատճառով այս համակազմը միշտ գտնվում է միգրացիոն գործընթացների առաջատարի դիրքում: Նրանց հարում է բնակչության այն խումբը, որն ավելի է տեղեկացված այլ երկրներում տիրող իրադրության մասին: Տեղերում (գործնական այցերի, սեզոնային աշխատանքների և այլ կարգի մեկնումների ժամանակ) ստացած անձնական պատկերացումներից ու գնահատականներից բացի նրանք հնարավորություն են ունենում նաև շրջապատի հետ հաստատել ոչ ձևական կապեր (ազգակցական, ընկերական), դառնալ սոցիալական ցանցերի անդամ: Այդ ամենը ձևավորում է ինչպես արտագաղթելու դիրքորոշում, այնպես էլ նոր բնակավայրում այս կամ այն չափով հաջող ադապտացիա:

Այս ամենը պայմանավորել է հայկական նոր սփյուռքի ձևավորման մասնակիցների որակական, ժողովրդագրական հատկանիշները և հոգևոր ներուժը: Ըստ հետազոտության նյութերի, հայկական նոր սփյուռքի կազմը յուրաքանչյուր երկրում բավականին տարբեր է ինչպես անդամների ընտրության, այնպես էլ նոր սոցիալական տարածքում միգրանտների զտման բնույթով: Հարմարվելու և սոցիալական աճի համար առավել բարենպաստ էր ՌԴ-ն, որի սոցիոմշակութային ողջ դաշտը ՀՀ-ից մեկնած միգրանտներին ավելի մոտ էր: Շատ հավանական է նաև, որ մերձավոր սփյուռքի ներկայացուցիչներին էթնոսո-

ցիալական առումով ավելի մոտ էին եվրոպական երկրները (մասնավորապես՝ Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան), ԱՄՆ-ը և Կանադան:

ՆՄ, այդ թվում նաև Հայաստանի հայերի համար արևմտյան երկրներում ադապտացման պայմաններն ավելի խիստ էին: Անկախ իրենց սկզբնական դիրքից, միգրանտներն զբաղեցրին շատ ավելի ցածր սոցիալական դիրքեր և ադապտացիայի ընթացքում նրանք համարյա չփոխվեցին: Շատ հավանական է, որ այդ միգրանտները ձևավորեցին հայերի վերաբնակեցման նոր օջախների քանակական և որակական հատկանիշները: Վերջին քսան-երեսուն տարիների ընթացքում միգրանտների տնտեսական ադապտացիան, սոցիալական խճանկարը, էթնոմշակութային յուրահատկությունը և խմբային բազմազանությունը բազմաթիվ խնդիրներ առաջացրին շրջապատի հետ հարաբերություններում, այդ թվում նաև հին սփյուռքի իրենց հայրենակիցների հետ: Նոր միգրանտները նոր միջավայրի օրենքներն ավելի թույլ էին ընկալում: Նրանք ստիպված էին բավարարվել հնաբնակների համեմատ ավելի ցածր տնտեսական և սոցիալական դիրքերով և ընտրում էին ադապտացիայի եվոլյուցիոն ուղին: Դա ավելի ցայտուն է դրսևորվում այն միգրանտների մոտ, որոնք հայտնվել են «օտար» միջավայրում: Դրանք արևմտյան երկրներ գաղթած ՆՄ միգրանտներն են:

Նոր սփյուռքի ներկայացուցիչները հնաբնակների համեմատ ավելի հաճախ են պահպանում հայրենիքի հետ կապերը, քանի որ միգրացիայի արդյունքում տեղի է ունեցել ազգակցական խմբերի տարանջատում, որոնց ներսում ձևավորված սոցիալական ցանցը դարձել է մեծ տարածքներ ընդգրկող որակապես

նոր գործընթացների զարգացման յուրահատուկ ներուժ: Դա պայմանավորված է նրանով, որ ազգականների շրջանակների սահմանափակումն ավելի մոտ հարազատներով, սոցիալ-տնտեսական իրավիճակը խթանում են ռեսուրսների կենտրոնացմանը, որոնց մոտ շրջապատի ռեսուրսներն ավելի մեծ ներուժ են դառնում, քանի որ հիմնվում են գործունեության արտատնտեսական դրդապատճառների վրա: Կարելի է վստահորեն պնդել, որ ավանդական ազգակցական ինստիտուտը ձեռք է բերում նոր տնտեսական երանգ և ձևավորում նոր տնտեսական գործընթացների սոցիալական ներուժ, որը դրսևորվում է ազգականների և բարեկամների փոխօգնության մեջ և հաճախ ընդունում է տնտեսական ծրագրերի տեսք: Տարածապես ցրված ազգակցական կապերի ցանցը դառնում է այն սոցիալական միջավայրը, որտեղ առաջանում են հետագա միգրացիոն գործընթացների խթանները, որոնց ուղեգծերը որոշվում են ելքի և մուտքի երկրներում տիրող իրավիճակով: Նախկին հայ բնակչության խմբերի ռեէմիգրացիոն տրամադրությունները վկայում են այդ ուղեգծերի բազմազանության մասին: Վերջինս պայմանավորված է հետևյալ հանգամանքներով: Այսպես, եթե հանրապետության տնտեսության մենաշնորհացման գործընթացը և արդյունքում անգսպելի գնաճը շարունակվի (որն ի դեպ, խթանվում է հատկապես տրանսֆերտների մուտքով և դրանց յուրացման օլիգարխիկ շրջանակների ձգտմամբ), ապա կթանկանա Հայաստանում բնակվող ընտանիքի անդամների կարիքներն ապահովելը: Այդ դեպքում տարածապես ցրված սոցիալական ցանցը, որը հիմնված է ազգակցական հարաբերությունների ինստիտուտի վրա, էլ ավելի կխթանի Հայաստանից բնակ-

չության արտահոսքը: Էթնիկ հայրենիքի բարօրությանն ուղղված նոր սփյուռքի գործունեությունը բացի բարերարությունից, ավելի հաճախ դրսևորվում է ներդրումային գործունեության մեջ, այսպես կոչված «ձկնորսական կարթ տրամադրելով» և ֆինանսավորվում է ներդրողի մասնագիտական ոլորտին համապատասխան այս կամ այն ծրագրերը: Այս գործոնները հաշվի առնելը շատ կարևոր է սփյուռքի ռեսուրսները գնահատելու համար՝ ելնելով հանրապետության պահանջները հաշվարկելու անհրաժեշտությունից: Հարկ է հասկանալ, որ սփյուռքը ի գործ է օգնելու Հայաստանին ոչ միայն վերականգնելու անցյալի տնտեսական ներուժը, այլև պայմանավորել նրա զարգացման բնույթը: Գործունեության ոլորտի գերակայությունից կախված՝ նա կարող է գերակշռել հանրապետությունում, դրանից բխող տնտեսական, սոցիալական և քաղաքական հետևանքներով հանդերձ: Ամենայն հավանականությամբ Հայաստանի համար նոր սփյուռքի ձևավորման այն փոքրաթիվ դրական կողմերից մեկն է, որը ճիշտ մոտեցում ցուցաբերելու դեպքում կարող է հայրենիքի համար դառնալ մարդկային, ֆինանսական, սոցիալական և հոգևոր ներուժ:

ЗАКЛЮЧЕНИЕ

Миграция армян, как основной источник формирования старых и новых диаспор, стимулировалась множеством причин этнического, социального, экономического и политического характера, одни из которых в зависимости от конкретного исторического периода становились доминирующими, другие уходили на периферию запросов мобильного населения. Этому способствовали факторы внешнего и внутреннего характера.

Условия жизни – наличие работы, экономическая и политическая свобода, безопасность и т.п. формируют факторы внешнего свойства, образующие стимулы притока или оттока различных групп. Они обусловлены меняющимися условиями республики: так в период первой республики действовали центробежные факторы, условия способствующие оттоку, второй республики – центростремительные, способствующие его притоку, а в пору третьей республики получили развитие центробежные факторы, способствующие усилению мобильности населения. В новейшей истории вследствие известных кризисных явлений интенсифицировался отток армянского населения как из зон его компактного проживания (Армении, Грузии, Азербайджана, Северного Кавказа, стран Переднего и Ближнего Востока), так и из регионов дисперсного расселения.

К факторам внутреннего свойства следует отнести выборочное отношение населения к условиям внешним, определившееся различиями социального, демографического, этнокультурного характера. Эти две группы факторов и определили динамику движения армянского населения в конце XX и начала XXI века, вызвавшее множество коллизий как в местах исхода этих групп, так и в местах их нового расселения.

Исследование этого многогранного и весьма сложного процесса требует качественно нового информационного ресурса, который смог бы обеспечить полное описание панорамы событий и стать основой систематизации уже имеющихся в наличии материалов. Таким ресурсом обладают материалы пяти сопоставимых этносоциологических исследований, проведенных в Армении, содержащие емкие сведения о динамике происходивших временных (кратковременных и сезонных) и безвозвратных передвижениях населения за последние 30-40 лет. Если первые фиксировались данными о миграционном поведении непосредственных участников этих процессов, то вторые - информацией поступающей от родных и родственников эмигрантов. Обращение к подобному источнику "социальной" памяти позволило провести содержательный и достоверный ретроспективный анализ процессов миграции и сложения новой армянской диаспоры как бы изнутри, в призме той социальной сети, основой образования и функционирования которой стала традиция кровнородственных отношений.

Общие для всего населения условия "выталкивания" отразились на общей динамике интенсификации движения и миграционных ожиданий у всех жителей городов и сел республики. Это фиксировалось при сопоставлении данных о частоте выезда из республики, намерений эмигрировать и т.п. На этом фоне весьма четко обозначилось выборочное отношение различных его групп к миграционным стимулам. Так одна часть населения для выживания в весьма экстремальных условиях жизни на родине обращается к отходничеству - сезонным заработкам. Это в большей мере относится к наиболее устойчивой к невзгодам части населения республики - к жителям сел. Среди них наблюдалось меньшее количество людей, намеревавшихся покинуть Армению и они имели меньше родственников зарубежом, нежели горожане. Фактором сдерживающим их отток является не только приверженность к своим корням,

но и низкой, по сравнению с горожанами, социальной восприимчивостью новой среды. Подобная же селективность реакции на факторы общего свойства (отсутствие работы, неустроенность и др.) присуща и отдельным социально-демографическим группам. К этому следует присовокупить и роль традиционных представлений в выборе отдельных видов миграции.

При проблемных условиях жизни в Армении, обусловленных отсутствием работы (как и во всех республиках бывшего СССР) и обостренными трудностями изолированного, в результате блокады жизни – дороговизны и олигархической монополизации экономики, сельские жители в своем миграционном поведении намного чаще горожан выбирают сезонную миграцию. Горожане в большей степени ориентируются на окончательный выезд, поскольку отношения с окружением бывшей среды у них более функциональны и обезличены, следовательно, они легче “отрываются” от нее. Определенный интерес с точки зрения миграционного поведения, представляет группа горожан, которая не является коренными жителями или старожилами. Этот контингент быстрее отрывается от “насиженного места”, так как оно не является “родным” – единожды поменяв место жительства, они с легкостью меняют повторно.

Формирование такого контингента населения обусловлено несколькими причинами. Первая причина связана с психологической утратой социальной идентичности – малой родины и пока еще не приобретенной новой, где еще не произошло полное освоение социально-культурного пространства. Вторая причина кроется в стремлении этого маргинального в социокультурном отношении слоя к социальной определенности, нахождении новых социальных ниш, где их статус может измениться в лучшую сторону. Третья причина связана с социальной динамичностью мобильного населения, которое больше других слоев ощущает признаки ухудшения условий жизни и быстрее реагирует на стимулы улучшения

жизненных параметров, в силу своей осведомленности. Именно поэтому этот контингент всегда находится в авангарде миграционных процессов. К нему примыкает группа населения которая наиболее информирована о ситуации в других странах. Помимо личностных представлений, оценок, полученных на местах (во время деловых, сезонных заработков и т.п.), они получают возможность входить в неформальные отношения (родственных, дружеских) с окружением, стать членами социальных сетей: все это формирует как установку на выезд, так и дает возможность успешной адаптации на новом месте.

Указанные причины и определили качественную характеристику участников формирования новой армянской диаспоры, их социально-демографические параметры, духовный потенциал. Согласно материалам исследований, состав новой армянской диаспоры в каждой стране весьма различен как по характеру отбора его членов, так и по интенсивности социальной инфильтрации мигрантов в новое социальное пространство. Наиболее благоприятной для вживания и социального роста оказалась РФ, страна близкая мигрантам из РА по всему социокультурному спектру. Представителям же ближневосточных диаспор в этносоциальном плане ближе оказались страны Европы (в частности, Франция и Великобритания), США и Канада.

Для армян из стран бывшего СССР условия адаптации в западных странах оказались более жесткими: мигранты, независимо от своих первоначальных позиций, заняли социальные позиции намного ниже своих, независимо от периода адаптации – их социальные параметры почти не изменились. Вероятно, что указанные мигранты образовали качественную и количественную характеристику новых армянских очагов переселения. Трудности экономической адаптации, социальная мозаика и этнокультурное своеобразие и групповое разнообразие мигрантов последних двадцати-

тридцати лет породили множество проблем во взаимоотношениях с окружением и в том числе со своими же соотечественниками – армянами старой диаспоры. Новоприбывшие мигранты оказавшиеся менее восприимчивыми к правилам новой среды, были вынуждены довольствоваться низкими, по сравнению со старожилами, социальными – экономическими позициями. Большинство из них избрало эволюционный тип адаптации. Это особенно ярко проявляется среди мигрантов из стран бывшего СССР, попавших в “чуждую” во многих отношениях среду западных стран.

Согласно данным этносоциологических исследований, представители новой диаспоры чаще старожилов поддерживают связь с родиной, так как в результате миграции произошла сепарация кровнородственных групп, внутри которых сформировалась новая социальная сеть, ставшая своеобразным потенциалом развития качественно новых миграционных процессов, охватывающих обширные пространства. Это обуславливается тем, что при общей тенденции ограничения круга мигрантов близкими родственниками, социально-экономическая ситуация стимулирует мобилизацию усилий в использовании социальных ресурсов близкого окружения – близких и дальних родственников. Подобная мотивация деятельности членов кровнородственных групп в конечном счете направлена на получение социальных и экономических дивидендов путем мобилизации и использования потенциала как отдельного так и многих членов группы. Следовательно, можно с уверенностью утверждать, что традиционный институт кровного родства приобретает экономический оттенок, формируя социальный потенциал новых экономических процессов. Взаимопомощь между родными и родственниками, зачастую, приобретает вид экономических проектов. Сеть связей, распыленных в пространстве кровных родственников становится той социальной средой, в которой порождаются стимулы дальнейших миграционных процессов, век-

